Սուրեն Սպանդարյան

Հոդվածներ

★

Հայաստան

80 | 15934
Ա-85 | Ամբարձումյան, Ա.
Նոր ուսմեր.
10 ռ.

АРМЯНСКИЙ ФИЛИАЛ ИНСТИТУТА МАРКСА-ЭНГЕЛЬСА-ЛЕНИНА при ЦК ВКП(б)

СУРЕН СПАНДАРЯН

СТАТЬИ

О литературе, искусстве, культуре, и образовании

АРМГИЗ
Ереван — 1949

Ս-85

ՀԱՄ.Կ(Բ)Պ ԿԿ-ԻՆ ԿԻՑ ՄԱՐՔՍԻ-ԷՆԳԵԼՍԻ-ԼԵՆԻՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՖԻԼԻԱԼ

ՍՈՒՐԵՆ ՍՊԱՆԴԱՐՅԱՆ

ԳՐԱԴԱՐԱՆ է 1961 թ.

ՀՈԴՎԱԾՆԵՐ

Գրականության, արվեստի, կուլտուրայի, ինչ կրթության մասին

ՀԱՅԿ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ ԳՐԱԴԱՐԱՆ

Ա II 20889

15.234

ՀԱՅՊԵՏՀՐԱՏ
Երևան — 1949

Գազմեց Վ. ԱՎԵՏԻՍՅԱՆ

ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ԿՈՂՄԻՑ

Սույն ժողովածվում զետեղված են բոլշևիկյան պարտիայի ականավոր գործիչ, Լենինի և Ստալինի հավատարիմ աշակերտ ու զինակից Սուրեն Սպանդարյանի (Տիմոֆեյի) այն հոդվածները և հոդվածներից ու նամակներից կատարված քաղվածքները, որոնց մեջ շոշափված են գրականության, արվեստի, կուլտուրայի և կրթության հարցերը։

Ընթերցողը պետք է հաշվի առնի, որ հոդվածների ճնշող մեծամասնությունը գրված են ցարական ռեակցիայի դաժան տարիներին (1907—1912 թ.թ.), երբ արգելված էր ամեն մի ազատ խոսք, փակվել էին բոլշևիկյան թերթերը, պարտիան ընդհատակ էր անցել։ Բոլշևիկները ընդհատակից ղեկավարելով բանվորական շարժումը օգտագործում էին լեգալ հնարավորությունները ցարիզմը մերկացնելու և մասսաներին նոր ռևոլուցիայի նախապատրաստելու համար։

Ս. Սպանդարյանը վարպետորեն օգտագործում է լեգալ մամուլի էջերը և հարվածում ցարիզմին ու կոնտրռևոլուցիոն բուրժուական, նացիոնալիստական տարրերին, խիզախորեն մերկացնում բուրժուական ռեակցիոն իդեոլոգիան և պաշտպանում մարքս-լենինյան սկզբունքները։

Ժողովածվում տեղ գտած նյութերի մի մասը հրատարակված է եղել 1939 թվին Երևանում Քաղհրատի կողմից լույս ընծայված Ս. Սպանդարյանի հոդվածների, նամակների և փաստաթղթերի ժողովածվում։ Ժողովածուն բաղկացած է հինգ թեմատիկ բաժնից՝ Ս. Սպանդարյանը 1) գրականության մասին, 2) հայ պարբերական հրատարակությունների մասին, 3) ժուռնալիստիկա, 4) թատրոնա-

կան ռեցենզիաներ և ժողովրդական տան մասին 5) կուլտուրայի, կրթության, ժողովրդական լուսավորության հարցերի մասին։ Նյութերը վերոհիշյալ բաժինների մեջ դասավորելիս ելել ենք տվյալ հոդվածի բովանդակության գերակշռող բնույթից։ Բաժինների ներսում նյութերը դասավորված են ժամանակագրական կարգով։ Նամակների բնագրերը գտնվում են Համկ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի Հայկական ֆիլիալի արխիվում։ Այն հոդվածները, որոնց տակ բացակայում է ստորագրությունը, նշանակում է դրանք լույս են տեսել անստորագիր, որպես առաջնորդողներ կամ խմբագրական հոդվածներ։ Հեղինակի ծանոթագրությունները և լատինական բառերի թարգմանությունները աստղանշով տրվում են տեքստի մեջ նույն էջի ներքևում, իսկ կազմողի կողմից տրվող ծանոթագրությունները՝ թվանշաններով զետեղված են ժողովածուի վերջում։

Տեքստում հանդիպող ուղիղ փակագծերը դրված են մեր կողմից։

ՀԿ(բ)Պ Կենտկոմի պարտիայի պատմության ինստիտուտ.
Համկ(բ)Պ Կենտկոմին կից Մարքսի-Էնգելսի-Լենինի ինստիտուտի ֆիլիալ։

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

«ԱԶՆԻՎ» ԶԱՅՐՈՒՅԹ[1]

Կոմս Լ. Ն. Տոլստոյի վերաբերյալ այն հոդվածները, որոնք տպված են «Бакинский Рабочий»*-ում, հանդիպում չեն տալիս* «Баку»*-ի և* «Бакинский Листок»*-ի*[2] *լիբերալ հոդվածներին։ Առաջին արտելքը կատարեց դեռևս* «Баку» *թերթում «սրամիտ» ֆելիետոնիստ M-r Brown-ը, իսկ նույն* «Бакинский Листок» *թերթի երկուշաբթի օրվա հրատարակության մեջ երևաց արդեն մի ամբողջ առաջնորդող, նվիրված* «Бак. Раб.» *և նրա վերաբերմունքին դեպի Կոմս Լ. Ն. Տոլստոյի հոբելյանի կատարումը*[3]։

Մենք անուշադիր կթողնենք «ազնիվ» զայրույթի և բարի ու քնքուշ լիբերալ ոգու տրտունջների այդ ծաղկեփունջը, եթե... եթե ըստ սովորության այդ «ոգին չատեր երկուսի փոխարեն»։ Իսկապես, ինչո՞ւմն է բանը։ Ինչի՞ համար է այդ վայնասունը։ Ի՞նչի համար են Ն. Լենինի ասածներն անպատկառ կերպով աղավաղում և փոխառած համեմատություններ կատարում գրամոֆոնի հետ և այլն և այլն։ «Бакинский Листок»*-ի այդ ամբողջ առաջնորդողում կարդյոք թեկուզ որևէ փորձ հերքելու այն, ինչ որ Ս. Ն.-ը գրել էր Տոլստոյի ուսմունքի մասին։*

Ոչ, ընթերցող, ոչ մի ծպտում։

Կան շատ սովորական լիբերալ ճիշեր ֆանատիզմի, աղանդավորության մասին, կա Մ. Գորկուն կրոնական կրծելու փորձ, մի խոսքով, բուրժուական լրագրական երգեհոնի ամբողջ ռեպերտուարը։

«Հեղինակն ամենևին նպատակ չունի տալու Լ. Տոլստոյի շատ թե քիչ օբյեկտիվ գնահատականը, ասելու բանվորին, թե Լ. Տոլստոյի ուսմունքի մեջ որն է դրականը պրոլետարիատի և ամբողջ աշխատավոր ժողովրդի համար», —*գրում է* «Бак. Листок»*-ը։*

Հեղինակը Կոմս Լ. Ն. Տոլստոյի ուսմունքի մեջ ոչ մի դրական բան չի գտնում պրոլետարիատի համար և այդ նա ապացուցում է իր հոդվածներում։ Ձեր գործն է, հարգելի պարոններ, հերքել նրան, եթե դուք ուզում եք այդ և ոչ թե հիստերիկայի մեջ ընկնել։

Այս մեկ։ Եվ երկրորդ, թույլ տվեք հարցնել ձեզ, հարգելի պարոններ, բուրժուական մամուլը, որ հրճվանքից շնչահեղձ է լինում հոբելյանի առթիվ, արդյոք նա ասե՞լ է Տոլստոյի մասին ամբողջ ճշմարտությունը։ Դուք ինքներդ մատնանշե՞լ եք արդյոք Տոլստոյի ուսմունքի այն կողմը, որ բացասական է պրոլետարիատի և «աշխատավոր ժողովրդի» համար։ Ոչ, պարոններ, դուք գրել եք «օբեկտիվորեն», ուստի միայն փառաբանել եք նրան և հենց դրանով խաբել ժողովրդին։ Նեղություն քաշեցեք, պարոններ, մտածել և պատասխանեցեք թե ինչո՞ւ է այդպես։ Էլի մի փոքրիկ հարց.

Դուք գրում եք. «Անհեթեթություն է ասել, թե Հոմերոսը, Շեքսպիրը, Պլատոնը, Արիստոտելը բուրժուական գրողներ են, նրանց արվեստը դասակարգային արվեստ է, նրանց բարոյականությունը դասակարգային բարոյականություն է։ Նյուտոնը—բուրժուական գիտություն է, Մարքսը՝ պրոլետարական։

Ոչ թե պրոլետարական, բուրժուական, ազգային, այլ համամարդկային... Գիտությունը, փորձը, ստեղծագործությունը, մտածողությունը չեն տեղավորվում դասակարգային շրջանակների պրոկրուստյան մահճում»...

Դուք գրում եք, թե Մարքսը պատկանում է ոչ թե պրոլետարիատին, այլ ամբողջ մարդկությանը։ Շատ գեղեցիկ։ Վերջերս տոնվեց նրա մահվան 25-ամյակը, «Կոմունիստական մանիֆեստի» 60-ամյակը։ Արդյոք բուրժուական մամուլը շա՞տ հոդվածներ նվիրեց տասնյակ-միլիոնավոր պրոլետարների այդ տոնին։ Արդյոք նա լռության չմատնե՞ց թե՛ Մարքսին և թե՛ «Կոմ. մանիֆեստը»։ Քանի՞ մինիստրներ և պարոնայք պրոֆեսորներ բանկետներ կազմակեր-

պեցին այդ առթիվ։ Չի՞ կարելի արդյոք իմանալ ձեզնից այդ։ Մտածեցեք դուք, դեղահոգի ռուսաստանյան ռադիկալներ, դուցե կհասկանաք և կդադարեք դառն արցունքներ թափել «վիրավորված» ապազասակարգային արվեստի, դիցաբանության և այլ առթիվ։

Իսկ այնուհետև, եթե ասենք թե այս-ինչ գրողը, նկարիչը, փիլիսոփան հանդիսանում են տիրապետող դասակարգերի իդեոլոգներ, մի՞թե այդ նշանակում է ժխտել այն նշանակությունը, որ ունեն նրանք համամարդկային առաջադիմության համար։ Հոմերոսի և նրա երգի մեծ նշանակությունն ամենևին չի նսեմանում այն հանգամանքից, որ անցյալ պրոֆ. Պետրուշևսկին[1] գտել է, թե Հոմերոսն անհավան վերաբերմունք ունի դեպի դեմոկրատիան, դեպի ժողովրդի ստորին խավերը, որին նա պատկերել է «արհամարհված Թերսիդեսի» անձնավորության մեջ և որոշակի կերպով պաշտպանում է «աղնիվ պատրիկներին»։ Սակայն մի՞թե հարկավոր է այդ այբուբենը բացատրել «Бакинский Листок»-ի «հրապարակախոսներին»։ Մենք Տոլստոյին չենք գնահատել իբրև խոսքի արվեստագետի, իբրև մարդկային հոգին ճանաչողի. այս առթիվ երկու կարծիք չի կարող լինել։

Մենք նրան գնահատել ենք իբրև քարոզչի, իբրև «նոր» կյանքի ուսուցչի—գտել ենք, որ նրա ուսմունքը վնասակար է, ռեակցիոն, չի համապատասխանում պրոլետարիատի շահերին, ձեռնտու է բուրժուազիային։

Ահա և ամենը։ Իսկ դուք չհերքեցիք մեզ, այլ միայն վրդովվեցիք։

Վրդովվեցեք, պարոններ։

Մենք չենք խանդարի այդ անվնաս և ձեզ համար հաճելի զվարճությունը։

«Бакинский Рабочий», № 7-8,
սեպտեմբերի 27, 1908 թ.
Ստորագրությունը՝ Տ.

ՄԵԾԱՐՈՒՄ ԹԵ ՌԵԿԼԱՄ

Դեռևս չեն մեղմացել ռուս աշխարհի մեծ գրող, «սրբակենցաղ» ծերուկ Լ. Ն. Տոլստոյի մահվանից առաջին սուր տպավորությունները։

Եվ ամեն մի երևույթ, ամեն մի փաստ, որ ունի գեթ որևէ կապ, գեթ հեռավոր առնչության մի նշույլ հանդուցյալ տիտանի կյանքի և ստեղծագործության հետ, բնականաբար, հսկայական հետաքրքրություն է առաջ բերում հասարակության բոլոր խավերում։

Մարդ ուզում է ավելի մոտիկից ծանոթանալ հանճարեղ բանաստեղծի ու գրողի ամբողջ բազմազան հոգևոր կյանքին, ուզում է հասկանալ նրա երկերի այն անմահ հերոսներին, որոնց մեջ այնքա՜ն շատ բան կա, որն անհամբ ապրել ու զգացել է ինքը, անմահ հեղինակը։

ՆԵԽԼՅՈՒԴՈՎԻ ԴԱՏԱՎԱՐՈՒԹՅՈՒՆԸ

«Հարություն» վեպի հերոսի դատավարությունը, այն երկի, որտեղ ավելի, քան մյուս երկերում, արտահայտվեց են հեղինակի բոլոր նվիրական մտքերն ու զգացումները։

Թիֆլիսի փաստաբանները կազմակերպեցին Տոլստոյի վեպի հերոսի գրական դատը։

Լ. Ն. Տոլստոյի հիշատակի յուրահատուկ, բայց և առաջին հրապարակային մեծարումն էր դա փաստաբանների կորպորացիայի կողմից։

Հսկայական քանակությամբ ինտելիգենցիա հավաքվեց վրացական թատրոնում։

Եվ սպասում էին... «Հարություն» վեպի հերոսի գրական դատին։

Իսկ պարոնայք փաստաբանները բացարձակապես անաքող դատական մի մրցություն կազմակերպեցին։

Դատախազը մեղադրում էր, գործադրելով մեղադրանքի՝ օրենքով թույլատրելի բոլոր պրիոմները, պաշտպանները դիմում էին դատավարական ամեն տեսակ «խորամանկությունների և ճարպկության», «որպեսզի արդարացնեն մեղադրյալին»։

Լսելով նրանց՝ ակամայից մեր առաջ կանգնեց «Հարություն» վեպում նկարագրած դատավարության պատկերը, «փայլուն փաստաբան» Ֆոնարկինի կերպարանքը։

Մեծ գրողը հիանալի կերպով էր ըմբռնել ժամանակակից դատարանի էությունը։

Նեխլյուդովի դատը եկավ միայն հաստատելու այդ պատկերի ճշտությունը։

Դա հասարակությանը զվարճացնող մի «աքլորակռիվ» էր։ Մտքի աղքատություն, աշխարհայացքի բացակայություն, աղքատություն գրական տեսակետից,— ահա Լ. Ն. Տոլստոյին տեղական փաստաբանների կողմից մեծարելու արդյունքը։

Ի՞նչ կարիք կար ուրեմն կազմակերպելու այդ դատը։

Ինչո՞ւ հանդես եկան երիտասարդ փաստաբանները, որոնցից մենք իրավամբ կարող էինք սպասել ավելի զգայուն, ավելի ակնածալից վերաբերմունք դեպի մեծ գրողի հիշատակը։

«Листок-Копейка», № 7,
հունվարի 11, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլդին

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, «ՆՈՐ ԱՌԱՎՈՏ». ՊՈՆՄ

Մեր առաջ է հայ տաղանդավոր գրողի ու թարգմանչի մի նոր երկը։ Այս հեղինակը պատկանում է այն սակավաթիվ հայ բանաստեղծների թվին, եթե չասենք միակն է, որոնք վաղուց հրաժարվել են «Թմբկա-հայրենասիրական» թեմաներից և համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մոտիվներ են մտցրել հայ պոեզիայի ու գրականության մեջ։ Հայ գրականության մեջ Հ. Հակոբյանն առաջինն էր, որ խոսեց աշխատավոր մարդու տառապանքների, տանջանքների ու ձգտումների մասին։ Նա առաջին անգամ իր հաջող թարգմանություններով հայ ընթերցող հասարակությանը ծանոթացրեց Ադա Նեգրիի[25] հետ։ Հ. Հակոբյանի նոր երկը՝ «Նոր Առավոտը», պատկերում է ինդիվիդուալ և հասարակական ձգտումների ընդհարումը անհատի մեջ։ Առանձնապես հաջող և գունագեղ են պոեմի այն տեղերը, ուր սինթետիկ ձևով նկարագրվում են ժամանակակից ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը, բանվորների աշխատանքը, նրանց տառապանքները, նրանց ուժը և նրանց հույսերը։

«Листок-Копейка» № 21,
հունվարի 27, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իզզոյ

«ՊԱՐՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՊԱՐՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

Թիֆլիսի քաղաքային վարչության անդամի նոր ընտրությունների կապակցությամբ մեր քաղաքային ինքնավարության կիսապաշտոնաթերթ «Т[ифлисский] Л[исток]»-ը դարձյալ սկսեց խոսել «պարտիականության» մասին և «անպարտիական» թեկնածուի հրաշալիքների մասին։

Ահա այդ դատողությունների առթիվ մենք ուզում ենք միքանի խոսք ասել, որպեսզի ցրվի այն մշուշը, որով այնպիսի ջանադրությամբ պ. պ. Նորդերն ու Նիգոլիտսկիները[26] լցնում են օրիվատելների գլուխները։

Ի՞նչ է նշանակում այն գրությը, որն այդ երկու «նախկին մարդիկ» այդպիսի ջերմությամբ պաշտպանում են. «վարչության անդամի թեկնածուն պետք է լինի անպարտիական», թե՝ «քաղաքը պարտիական խծբծանքների ասպարեզ չէ»։

Չէ՞ որ յուրաքանչյուր հասարակական գործիչ պետք է ունենա գործունեության այս կամ այն ծրագիրը, այս կամ այն «հավատո հանգանակը», հասարակական գործերի և սրանց ուղղության տենդենցի այս կամ այն հասկացողությունը։

Հասարակական գործիչն առանց սոցիալ-քաղաքական որոշ դեմքի՝ դա, գերմանացիների արտահայտությամբ, մի դատարկ աղիք է, որը կարելի է լցնել ինչով ուզես, դա մի հողմացույց է, որ դառնում է քամու ուղղությամբ, դա մի ոչնչություն է, որի վրա կարող են աղդել բոլորն ու ամենն ինչ, վերջապես, դա ամենաազդվելի օպորտունիստն է, որի ամբողջ քաղաքականությունը հանգում է մոմենտին հարմարվելուն և այն էլ՝ նվազագույն դիմադրության դծով։

եկեղեցական բարձրագույն շրջաններում որևէ հաջողություն և վարկ չեն ունենում նույնիսկ դիմումները դեպի եկեղեցու անմիջական շահերը և նրա պաշտոնական սպասավորները։

Մինիստր-նախագահի վերջին ճառում արած այն խոստովանությունը Պետական Դումայում, թե կառավարությունն «առաջ է ընթանում ռեակցիայի ուժեղացման ճանապարհով»[17],— անկասկած, օրվա լոզունգ է հանդիսանում և դրա հետևանքն է «գրականության վրա հսկողություն սահմանելու» օրինագիծը, գրականություն, որը ռուսաց պատմության խորքի զավակն է հանդիսանում, նրա մեծ նահատակը։

«Новая-Речь»[16] № 86,
ապրիլի 16, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ոլդին

«ԴԱՐՁՅԱԼ ՆՈՒՅՆ ՀԱՐՑԻ ՄԱՍԻՆ» ՀՈԴՎԱԾԻՑ

Մեր հասարակական հարաբերություններում չափազանց շատ է զարգացել մտերմավարությունը, մենք չափազանց շատ ենք սիրում ընտանևարին, մեզանում այն ամենն, ինչ որ հասարակական է, ունի չափից դուրս անձև և դոնդողանման (студенистый) տեսք, ուր խայտաբղետ նկար կազմելով՝ իրար են հյուսվում սևհարյուրակայնությունը և դեմոկրատիզմը, առաջադիմությունը և նացիոնալիստական շովինիզմն ու հետադիմությունը։

Իրերի այդպիսի դրությունն այլասերում է ընթերցող առաջիտորիան, կործանարար ազդեցություն է ունենում հասարակական փոխհարաբերությունների պարզության և որոշության վրա։

Հարկավոր է, անհրաժեշտ է պայքարել այդ չարիքի դեմ, հարկավոր է աջակցել հասարակական տարրերի շերտավորմանն ու բյուրեղացմանը։

«Ես ջհուդ եմ և չեմ կարող նույն սեղանը նստել փղշտացիների հետ»,—ասում էր ռուս մեծ քննադատ և հրապարակախոս «մոլեգին Վիսսարիոնը»[19]։ Թող այս խոսքերը ղեկավար լոզունգ դառնան հասարակական ազնիվ աշխատողների համար, անկախ նրանց ուղղությունից և համոզմունքներից։ Այս իսկ պատճառով մեր հիմնական խնդիրներից մեկն է մեր հասարակական խառնաշփոթության մեջ հենց այդ պարզությունն ու որոշությունը մտցնել։

«Листок-Копейка», № 5,
դեկտեմբերի 30, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

15.234
A II 20889

ԹԻՖԼԻՍ, 13 ՀՈՒՆՎԱՐԻ

Հունվարի 12-ը, Տատյանայի օրը, Մոսկվայի համալսարանի՝ Ռուսաստանի առաջին բարձրագույն ուսումնական հաստատության, լույսի և գիտության առաջին օջախի, լուսավորության և գիտական մտածողության առաջին օրրանի հիմնելու օրն է[20]։

Ելիզավետա Պետրովնայի[21] օրով հիմնված այդ հնագույն համալսարանը Ռուսաստանին տվել է փայլուն գիտնականների, գրողների, ճշմարտությունն անխոնջ կերպով որոնողների, կյանքն ու բնությունը հարցասեր հետազոտողների մի ամբողջ պլեադա։

Ճորտատիրական երկրի ֆոնի վրա նա երկա՜ր ժամանակ եղել է գիտության միակ տաճարը, երկար տարիներ նա եղել է միակ այն լաբորատորիան, որտեղից դուրս են եկել «բարվո և իմաստության» սերմեր ցանողները։

Ստանկևիչը, Բելինսկին, Գերցենը, Օգարևը, Գրանովսին, Ն. Կռիլովը[22] և ռուսական կյանքի ուրիշ շատ ու շատ ջահերը կյանք են մտել Մոխովայա փողոցի վրա գտնվող շենքից և իրենց սրտի արյունը, իրենց ջղերի հյութը ի սպաս են դրել կրտսեր եղբորը, իրենց երկրի լուսավորության ու ազատագրության գործին։

Մոսկվայի համալսարանը — ռուսաստանյան ինտելիգենցիայի մեծամասնության այդ alma mater-ը — զանազան հասարակական ուժերի պայքարի իրադարձություններում, լույսի ու խավարի, ճնշման ու ազատության, կյանքի ու մահվան սկզբունքների ընդհարման պայմաններում,*

---

*)— «Սնող մայրը»— գործածվում էր բարձրագույն դպրոցի, համալսարանի իմաստով։

ռուսական կյանքի ընթացքում միշտ էլ բարձր է պահել ազատ դիտության դրոշակը, դիտական ազատ հետազոտության, առաջադիմության և սոցիալական արդարության սկզբունքները։

Մեր ժամանակ, երբ Պետերբուրգում նիստեր է ունենում Պետական երրորդ Դուման, երբ ռուս գրականությունը նրվաճել ու գրավել է ամբողջ աշխարհը, իսկ ռուսական դիտությունը պատվավոր տեղ է բռնել մյուս երկրների շարքում, մեր համալսարանները, մեր պրոֆեսորան, մեր ուսանող երիտասարդությունը վերապրում են Մագնիցկու[23], միայն թե մոդերնիզացիայի ենթարկված և վերածնված Մագնիցկու, մռայլ ժամանակները։ Անցյալի բոլոր մութ ուժերը արշավանք են գործում համալսարանի դեմ, ազատ դիտության դեմ։ Արշավանք են գործում «հունիսերիզյան ժողովրդական ներկայացուցիչները»[24], Կուրսկիի ազնվականները, Բեսարաբիայի պետական խեղկատակները, ընկզբնական կուտակման ասպետները և բրաունինգներով զինված «ակադեմիստները»։

Ծանր փորձություններ են պատրաստվում մեր դիտության, մեր համալսարանների դեմ, բայց և այնպես կենդանի ոգին, կենդանի սկզբունքը, անցնելով բոլոր տանջանքներից, դուրս կգան հաղթանակով և նորացած։

Դրա երաշխիքը համաշխարհային պատմությունն է, դրա գրավականը ավելի և ավելի զարգացող և դեպի առաջ ընթացող մարդկության կյանքի երկաթե տրամաբանությունն է։

«Листок-Копейка» № 9,
հունվարի 13, 1911 թ.։

ԳՐԱԽՈՍԱԿԱՆ

Հ. ՀԱԿՈԲՅԱՆ, «ՆՈՐ ԱՌԱՎՈՏ». ՊՈԵՄ

Մեր առաջ է հայ տաղանդավոր գրողի ու թարգմանչի մի նոր երկը։ Այս հեղինակը պատկանում է այն սակավաթիվ հայ բանաստեղծների թվին, եթե չասենք միակն է, որոնք վաղուց հրաժարվել են «Թմբկա-հայրենասիրական» թեմաներից և համամարդկային բնույթ կրող բոլորովին նոր մոտիվներ են մտցրել հայ պոեզիայի ու գրականության մեջ։ Հայ գրականության մեջ Հ. Հակոբյանն առաջինն էր, որ խոսեց աշխատավոր մարդու տառապանքների, տանջանքների ու ձգտումների մասին։ Նա առաջին անգամ իր հաջող թարգմանություններով հայ ընթերցող հասարակությանը ծանոթացրեց Ադա Նեգրիի[25] հետ։ Հ. Հակոբյանի նոր երկը՝ «Նոր Առավոտը», պատկերում է ինդիվիդուալ և հասարակական ձգտումների ընդհարումը անհատի մեջ։ Առանձնապես հաջող և գունագեղ են պոեմի այն տեղերը, ուր սինթետիկ ձևով նկարագրվում են ժամանակակից ֆաբրիկաները, գործարանները, հանքահորերը, բանվորների աշխատանքը, նրանց տառապանքները, նրանց ուժը և նրանց հույսերը։

«Листок-Копейка» № 21.
Հունվարի 27, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իզզոյ

«ՊԱՐՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՆՊԱՐՏԻԱԿԱՆՈՒԹՅԱՆ» ՄԱՍԻՆ

Թիֆլիսի քաղաքային վարչության անդամի նոր ընտրությունների կապակցությամբ մեր քաղաքային ինքնավարության կիսապաշտոնաթերթ «Т[ифлисский] Л[исток]»-ը դարձյալ սկսեց խոսել «պարտիականության» վնասի և «անպարտիական» թեկնածուի հրաշալիքների մասին։

Ահա այդ դատողությունների առթիվ մենք ուզում ենք միքանի խոսք ասել, որպեսզի ցրվի այն մշուշը, որով այնպիսի ջանադրությամբ պ. պ. Նորդերն ու Նիգոիտսկիները[26] լցնում են օրիվատելների գլուխները։

Ի՞նչ է նշանակում այն դրույթը, որն այդ երկու «նախկին մարդիկ» այդպիսի ջերմությամբ պաշտպանում են. «վարչության անդամի թեկնածուն պետք է լինի անպարտիական», թե՝ «քաղաքը պարտիական խծբծանքների ասպարեզ չէ»։

Չէ՞ որ յուրաքանչյուր հասարակական գործիչ պետք է ունենա գործունեության այս կամ այն ծրագիրը, այս կամ այն «հավատո հանգանակը», հասարակական գործերի և սրանց ուղղության տենդենցի այս կամ այն հասկացողությունը։

Հասարակական գործիչն առանց սոցիալ-քաղաքական որոշ դեմքի՝ դա, գերմանացիների արտահայտությամբ, մի դատարկ աղիք է, որը կարելի է լցնել ինչով ուզես, դա մի հողմացույց է, որ դառնում է քամու ուղղությամբ, դա մի ոչնչություն է, որի վրա կարող են ազդել բոլորն ու ամեն ինչ, վերջապես, դա ամենազզվելի օպորտունիստն է, որի ամբողջ քաղաքականությունը հանգում է մոմենտին հարմարվելուն և այն էլ՝ նվազագույն դիմադրության գծով։

Սակայն, երբ հասարակական գործիչն ունի գեթ որևէ դեմք, թեկուզ և ամենախղճուվը, երբ այնուամենայնիվ կան համոզմունքներ և հայացքներ, ապա պարզ է, որ այդ հայացքները և այդ համոզմունքները ոմանց մոտ համակրանք կգտնեն, ոմանց մոտ էլ՝ դիմադրություն։

Համախոհները բնականաբար կհամախմբվեն տվյալ հասարակական գործչի շուրջը՝ նրա պլատֆորմը կենսագործելու համար, իսկ հակառակորդները կհամախմբվեն՝ այդ պլատֆորմի իրականացման դեմ պայքարելու և իրենց պլատֆորմն իրագործելու համար։

Այդ բաժանումներն առանձնապես անխուսափելի, բնական ու տրամաբանական են, երբ կենդանի, մեծ գործում բախվում են բնակչության զանազան խավերի հակադիր շահերը։

Այդպիսի գործ է հանդիսանում, օրինակ, քաղաքային տնտեսությունը, և ամենուրեք, ամբողջ աշխարհում մունիցիպալ գործերի շուրջը տեղի է ունենում քաղաքական-սոցիալական շահերի բուռն պայքար և այդ հողի վրա կազմվում ու կազմակերպվում են պարտիաներ՝ քաղաքային բնակչության զանազան տարրերի հակադիր միտումները պաշտպանելու համար։

«Т[ифлисский] Л[исток]»-ում հանդես գալով «պարտիականության» դեմ, այդ պարոններն իրականում պաշտպանում են դրա վատթարագույն ձևը՝ խմբակայնությունը։

Չէ՞ որ մինչև այժմ, գուցե նաև դեռ երկար ժամանակ ապագայում էլ, քաղաքային գործերը մեզ մոտ տնօրինելու են ո՛չ թե բնակչության լայն խավերը, որոնք կազմակերպված են հասարակական բնույթի ծրագրեր ունեցող պարտիաներում, այլ այն մարդկանցից բաղկացած «խմբակները», որոնք ղեկավարվում են ամենից շատ իրենց նեղ, մորթեպաշտական խմբակային շահերով։

Մեր խորին համոզմամբ, վարչության սինեդրիոնի անդամակցական աթոռի համար առաջադրված Մ. Ա. Ջաբարի[27] թեկնածությունը «անպարտիականության» ոգով պաշտպանելը միմիայն նսեմացնում, եթե չասենք, բոլորովին ոչընչացնում է և այն փոքրիկ արժանիքները, որ գուցե ունի պ. Ջաբարը։

«Листок-Копейка» № 21,
հունվարի 27, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ԱԿՆԱՐԿՆԵՐ

Զուբալովի անվան ժողովրդական տանը կատարվող անկարգությունների, քաղաքային վարչության տարօրինակ քաղաքականության մասին՝ որ ժողովրդական տան վրա նայում է առևտրական տեսակետով, ժողովրդական տան շինքի, նրա բեմը սիրող խմբակների լիակատար և անկոնտրոլ տնօրինությանը հանձնելու մասին, շատ է գրվել ու խոսվել[28], *բայց վերջիվերջո ամեն ինչ մնացել է նախկին դրության մեջ։*

Ահա այժմ մեր առջև է խմբագրությանս ուղղած՝ ոմն պ. Լ-ի նամակը, որտեղ նա խորապես վրդովվել է այն ամենից, ինչ որ մարտի 2-ին կատարվել է ժողովրդական տան բեմի վրա՝ մալոռուսական ներկայացման ժամանակ։

Բեմադրվելիս է եղել «Խորայելի մարտիկները»[29] *պիեսը և այդ ներկայացման ժամանակ «դերասանուհիներն ու դերասանները» հոգացել են ոչ թե ռեալ ճշմարտության, այլ արտաքին էֆեկտի մասին։ Ի լրումն այդ ամենի՝ «բենեֆիցիանտ» պ. Զարովը կատարել է ամենագռեհիկ, կաֆեշանտանային բովանդակություն ունեցող կուպլետները («606», «Բենեֆիս» և «Մուտքն արգելված է»)։*

Հրաշալի է, այնպես չէ՞։

Ժողովրդական բեմը դարձնել կաֆե-շանտան։ Եվ այդ դռեհկությունը տեղի է ունենում ուկրաինական մեծ բանաստեղծ, բազմատանջ պոետ, ժողովրդական դուսան Տարաս Շևչենկոյի մահվան հինգամյակի օրը։

Այսպես մեծարեց հանճարեղ ճորտի, գեղարվեստագետի ու գրողի հիշատակը ժողովրդական տունը, որ գտնվում է Թիֆլիսի քաղաքային վարչության իրավասության ներքո։

«Ես ինձ թույլ եմ տալիս հարցնելու. ո՞ւր է ապա քա-

զաքային վարչությունը, ինչի՞ն է նա հետևում։ Մի՞թե արդարացի են այն լուրերը, որ քաղաքային վարչությունը հետևում է միայն, որ շատ բան կորզի ժողովրդական տնից։ Այսպես է գրում պ. Լ.-ն։

Այս հարցերը բազմիցս տրվել են վարչությանը, տրվել են ձայնավորներին, բայց... ամեն ինչ մնում է այնպես, ինչպես կար և հազիվ թե կարելի է հուսալ, որ կփոխվի մեր հասարակական ինքնավարության «քաղաքականության» կուրսը։

Որովհետև չարիքն արմատումն է—մեր քաղաքային դրության մեջ։

«Листок-Копейка» № 54,
մարտի 6, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլին

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

Հայ հասարակության և մամուլի մի որոշ մասում տեղի է ունենում հայ գրող Շիրվանզադեի հոբելյանի եռանդուն նախապատրաստությունը[30]։ Կազմվել է հոբելյանական հատուկ հանձնաժողով, որը թե՛ իր անդամների կազմում. և թե՛ հանձին նախագահի՝ ունի փողատեր մարդիկ, ամենուրեք հրավեր-կոչեր են ուղարկում՝ փող և ամեն տեսակ նվերներ տալու, իսկ «Հորիզոն» թերթը[31] դրեթե յուրաքանչյուր համարում հոբելյարին նվիրում է հոդվածներ, որտեղ Շիրվանզադեն հռչակվում է իբրև հայ գրականության ռահվիրա, իսկ նրա երեսնամյա գրական գործունեության տոնակատարությունը հայտարարվում է հայ ինտելիգենցիայի տոն։ Իհարկե, ոչնչով չի կարելի դեմ լինել մայրենի գրականության ասպարեզում Շիրվանզադեի, ինչպես և ամեն մի հասարակական և գրական գործիչի աշխատանքները նշելուն, մանավանդ որ հայ գրականագետների դրությունը նախանձելի չէ և նրանք շատ և շատ հաճախ նյութական ձախորդություններ են կրում։

Որովհետև մեզանում չկա ընթերցող աուդիտորիա, չկա ընթերցող մասսավիկ, չկա ընթերցող-ժողովուրդ, իսկ ինտելիգենտ խավերը դերազանցել են հայ գրականությանը, անկասկած գտնվում են ուրիշ, անհամեմատ ավելի զարգացած և համաշխարհային նշանակություն ունեցող գրականությունների ազդեցության տակ։

Այդ պատճառների շնորհիվ մեր հոբելյանները չեն կրում ժողովրդական բնույթ, այլ հանդիսանում են մի բուռն մարդկանց գործ, որոնք ձեռք են բերել «ազգային գաղա-

փարի» և դրամական տուղերի կողմից հարկադրական բարեգործության ակտի մենաշնորհը։

Այս պատճառով մեզանում հաճախ իրենք՝ հոբելյարները հոգում են, որ հասարակությունը հատուցի իրենց մատուցած ծառայությունների համար, իրենք են հոբելյանական հանձնաժողովներ կազմում և նույնիսկ շրջում են հայրենի Երկրի քաղաքներն ու գյուղերը, ամենուրեք տոնելով իրենց հոբելյանը, ամենուրեք հավաքելով «հասարակական ցնծության» էժան դափնիները։

Տվյալ դեպքում Շիրվանզադեի հոբելյանի նախապատրաստության պրոցեսը և այդ հոբելյանի տոնակատարությունը ճշտությամբ վերարտադրում են մեր «ազգային հանգեսների» սովորական, հարազատ պատկերը։

Կրկնում ենք, որ ոչինչ չի կարելի ասել հայ գրող Շիրվանզադեի հոբելյանի դեմ, ընդհակառակը, կարելի է նրան հաջողություն ցանկանալ նյութական ապահովություն ձեռք բերելու իմաստով։ Սակայն մենք անհրաժեշտ ենք համարում, որ չափավորվի «հորիզոնականների» ագիտացիոն ոգևորությունը, որոնք այս դրողին հռչակել են հայ գրականության «ռահվիրա», իսկ նրա հոբելյանը՝ հայ ինտելիգենցիայի տոն։

Անկասկած, Շիրվանզադեն լավագույն հայ գրողներից մեկն է, սակայն, ասելով այդ, մենք չպետք է մոռանանք այն ռեալ փաստը, որ հայ գրականությունն ընդհանրապես աղքատ է տաղանդներով և գեղարվեստական երկերով, այնպես որ «լավագույններից մեկը» արտահայտությունը պետք է հասկանալ սահմանափակ և պայմանական իմաստով։

Իսկ ինչ վերաբերում է «ինտելիգենցիայի տոնին», մեզ թվում է, որ «Հորիզոն» թերթը չափից դուրս ոգևորվելով, մի ֆրազ է թոցրել, որի տակ չկա ոչ մի ռեալ հող։

Չէ՞ որ ինտելիգենցիա էլ կա ինտելիգենցիա էլ, և դուցե Շիրվանզադեի երկերում արծարծվող գաղափարները, որոնք դուրս չեն գալիս ամենասովորական մեշչանական լիբերալիզմի սահմաններից, «հորիզոնականների» համար

հանդիսանում են առաջադիմության վերջին խոսք, բայց համենայն դեպս թերթի այդ պնդումը ճիշտ չէ հենց այն պատճառով, որ չի պարունակում պատմական ճշմարտություն, քանի որ հայ ինտելիգենցիան չի դաստիարակվել Շիրվանզադեի երկերով։

Հայ գրականության և հասարակայնության մեջ Շիրվանզադեի դերի մասին մենք կխոսենք հետևյալ անգամ[32]։

«Трудовая-Копейка» № 1,
ապրիլի 15, 1911 թ.
Ստորագրությունը՝ Կկոյ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

Հայկական մամուլը հոդվածներ է նվիրում օրերս վաղամահված միլիոնատեր Ա. Ի. Մանթաշևի հիշատակին։ Հանդուցյալը մաղութային թագավորությունում ձեռք բերած, վհատ ու մռայլ Բալախանիում, Բիբի-Հեյբաթում, Սաբունչիում և այլն, հազարավոր մարդկանց ծանր աշխատանքով վաստակած իր հսկայական միջոցներից բավականին շատ հատկացրել էր հասարակական և անհատական բարեգործությանը։

Շատ պատանիներ Ա. Ի. Մանթաշևի հաշվին ուսանեցին բարձրագույն ուսումնական հաստատություններում և արտասահմանում, բայց նրանց շատ չնչին տոկոսը հասարակական օգտավետ մարդիկ դուրս եկավ։

Շատ բան զոհեց նա հոգևորականության, եկեղեցիների, վանքերի և եկեղեցական դպրոցների ու ճեմարանների կարիքներին։

Շատ հայ, այսպես կոչված, գործիչներ այս կամ այն կերպ օգտվում էին նրա դրամարկղից։

Ըստ այսմ լիովին հասկանալի է այն թախիծը, այն վիշտը, որ պատել են հայկական մամուլին և հայկական գործիչներին։ Ահա օրինակ, ինչ է գրում հայկական գրող Շիրվանզադեն, որի հոբելյանը շուտով պիտի տոնվի և որի հոբելյանական հանձնաժողովի նախագահը հանդիսանում էր հանդուցյալ հարուստը.

> «Այն կորուստը, որ կրում է այսօր հայ ժողովուրդը Մանթաշյանի մահվամբ, անփոխարինելի է։
>
> «Մեծ բարերարները դարերի ծնունդ են։
>
> ... Սիրտը— ահա գլխավորը, որ կատարում էր միակ դերը և վեհ դերը Մանթաշյանի բարեգործությունների մեջ։

«Ազգին է մնում այժմ իր խորին երախտագիտությամբ գնահատել այդպիսի սիրտը։ Եվ նա անշուշտ կգնահատի ու շատ բարձր կգնահատի իր ապագա պատմության մեջ»։[33]

Այսպես է գրում և այսպես է գնահատում հանդուցյալ միլիոնատերի գործունեությունը հայկական գրող Շիրվանզադեն, որի գրական գործունեության երեսունամյա հոբելյանը «հորիզոնականների» կողմից հավասարվում է «հայկական ինտելիգենցիայի տոնին»։

«Трудовая-Копейка» № 5,
ապրիլի 23, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իգգոյ

ՀԱՅ ՊԱՐԲԵՐԱԿԱՆ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

տորեն։ Ուրիշ գրքեր շատ կան, այն էլ ժամանակակից կյանքից, որոնք քեզ կսովորեցնեն թե՛ մտածել և թե՛ զգալ ճիշտ կերպով և լավ։ Իսկ պատմությունն ավելի լավ է իմանալ գիտականորեն, պատմաբանների աշխատություններից և ոչ թե՝ ըստ գրողների երևակայության։

Քո պապա՝ ՍՈՒՐԵՆ

Թարգմ. ռուս.

ՈՒՐՎԱԳԾԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ[36]

Որքան էլ որ դա տարօրինակ լինի, բայց տեղական ռուսական մամուլը վատատեղյակ է Կովկասում բնակվող բազմաթիվ ազգությունների հասարակական կյանքից և նրանց միջավայրում տեղի ունեցող տարբեր դաղափարական հոսանքների պայքարից։ Մինչդեռ՝ տեղական ժողովուրդների կյանքի և նրան հուզող բոլոր կենսական հարցերի, կարիքների և պահանջների անհրաժեշտ արտացոլումը տեղական ռուսական մամուլի ամենահրամայական խնդիրներից մեկն է։ Նրանց կյանքի այդպիսի՝ քիչ թե շատ լիակատար արտացոլումը, նրանց կարիքների և պահանջների այդօրինակ լուսաբանությունը, հարկավ, sine ira et studio* *անպայման կարող է նպաստել այդ ժողովուրդների փոխադարձ մերձեցման, նրանց իրար հասկանալուն և, վերջապես, կարող է ցրել մարդատյացության այն մշուշը, որով մամուլի օրգաններից միքանիսն այնպիսի՞ մեծ եռանդով պատում են ռուս ընթերցող մասսայի աչքերը։*

Պարտավորություն ստանձնելով «Новая Речь»*-ի էջերում նրա ընթերցողներին իրազեկ դարձնելու Կովկասի ազգությունների մեկի, այն է՝ հայերի կյանքի մասին, մենք, ի հարկե, կաշխատենք տալ այդ կյանքին ըստ հնարավորության լրիվ և անաչառ լուսաբանություն։ Սրանով մենք չենք ուզում ասել, թե մենք չունենք որևէ որոշակի աշխարհայացք,*

---

*)— *Առանց զայրույթի և աչառության, անկիրք, անկողմնակալ։*

ՈՒՐՎԱԳԻԾԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ[36]

Որքան էլ որ դա տարօրինակ լինի, բայց տեղական ռուսական մամուլը վատատեղյակ է Կովկասում բնակվող բազմաթիվ ազգությունների հասարակական կյանքից և նրանց միջավայրում տեղի ունեցող տարբեր դաղափարական հոսանքների պայքարից։ Մինչդեռ՝ տեղական ժողովուրդների կյանքի և նրան հուզող բոլոր կենսական հարցերի, կարիքների, և պահանջների անհրաժեշտ արտացոլումը տեղական ռուսական մամուլի ամենահրամայական խնդիրներից մեկն է։ Նրանց կյանքի այդպիսի՝ քիչ թե շատ լիակատար արտացոլումը, նրանց կարիքների և պահանջների այդօրինակ լուսաբանությունը, հարկավ, sine ira et studio* *անպայման կարող է նպաստել այդ ժողովուրդների փոխադարձ մերձեցման, նրանց իրար հասկանալուն և, վերջապես, կարող է ցրել մարդատյացության այն մշուշը, որով մամուլի օրգաններից միքանիսն այնպիսի՞ մեծ եռանդով պատում են ռուս ընթերցող մասսայի աչքերը։*

Պարտավորություն ստանձնելով «Новая Речь»-ի էջերում նրա ընթերցողներին իրազեկ դարձնելու Կովկասի ազգություններից մեկի, այն է՝ հայերի կյանքի մասին, մենք, ի հարկե, կաշխատենք տալ այդ կյանքին ըստ հնարավորության լրիվ և անաչառ լուսաբանություն։ Սրանով մենք չենք ուզում ասել, թե մենք չունենք որևէ որոշակի աշխարհայացք,

*)— Առանց զայրույթի և աչառության, անկիրք, անկողմնակալ։

չունենք որոշակի մեթոդ՝ ուսումնասիրելու և արժեքավորելու համար ինչպես «նյութական», այնպես էլ «գաղափարական» կարգի պատկանող հասարակական երևույթները։ Մենք միայն ձգտելու ենք, որ հայերի հասարակական կյանքի այն հոսանքները և հայացքները, որոնց մենք համակիր չենք և որոնց մենք նույնիսկ դատապարտում ենք, մեր տեսությունների մեջ լուսաբանված լինեն հնարավոր կատարելությամբ, որպեսզի ընթերցողն ի վիճակի լինի ծանոթանալու նրանց, այլ ոչ թե օգտվելով տպագրական մեքենայից, անհիմն ու անապացույց կերպով արհամարհենք դրանք և պատրաստի պիտակներ փակցնենք դրանց։ Մեր խնդիրն այն է լինելու, որ՝ կիրառելով հասարակական փաստերի ուսումնասիրության օբյեկտիվ մեթոդը, որ հավասարապես անհրաժեշտ է բոլոր պայմաններում, կարողանանք հաշվի առնել նաև յուրաքանչյուր աղդության զարգացման պատմական առանձնահատկությունները։

Դժբախտաբար տեղական ռուսական մամուլի էջերում հայկական կյանքի լուսաբանությունը միշտ էլ կրել է միակողմանի և շարլոն բնույթ։ Այսպես, օրինակ, տեղական թերթերից մեկում, հայ կյանքի և գործերի «երդվյալ տեղեկատու»՝ պ. Ի. Պ.-ն[27] գործադրում է հանրածանոթ «կղերականություն», «պահպանողական ուղղություն», «նացիոնալ-լիբերալներ» և այլ տերմինները, առանց հաշվի առնելու այն առանձնահատկությունները և այն ուրույն հատկությունները, որ այդ՝ ամենուրեք ընդունված քաղաքական տերմիններին հաղորդում է յուրաքանչյուր աղդության զարգացման պատմական ընթացքը։ Լիբերալներ գոյություն ունեն և՝ Անգլիայում և՝ Գերմանիայում։ Սակայն ի՞նչ հսկայական տարբերություն կա սրանց և նրանց միջև։ Պահպանողականներ կան բոլոր երկրներում, կան նրանք և Անգլիայում։ Բայց մի՞թե կարելի է համեմատել գերմանական հոզատեր-յունկերին անգլիական պահպանողականի հետ։ Ընթերցողն առանց դժվարության կհամոզվի, որ յուրաքանչյուր երկրում և յուրաքանչյուր ժողովրդի մեջ բոլոր այդ

տերմինները պետք է կիրառվեն պատշաճ զգուշավորությամբ, ուշադրության առնելով պատմական տեսակետը։

Շարլոն տերմինների այդօրինակ անքննադատ գործադրությունը, տրաֆարետային հենց այդպիսի դատողություններն են, որ հաճախ անհեթեթ կուրյողների են հասցնում նրանց հեղինակին։ Որքան էլ ջանադիր կերպով էր պ. Ի. Պ.-ն «պահպանողական», «կղերական», «նացիոնալ-լիբերալ» պիտակները փակցնում, վերջիվերջո այնպես դուրս եկավ, որ այդ բոլոր՝ առանձին արկղիկներով դասավորված հասարակական հոսանքներն իրար են խառնվել և մի ընդհանուր կույտի մեջ են ընկել պ. Սպանդար Սպանդարյանը, Լևոն, Քալանթարը, իսկ Գր. Արծրունու «գործի» շարունակողն է հանդիսանում... Երվանդ վարդապետը[38]։

Ընթերցողի դիմում ստեղծվում է մի կատարյալ խառնաշփոթ և նա ոչ մի պարզ պատկերացում չի ստանում հայ հասարակական դաղափարական հոսանքների մասին։

Հայ կյանքի հետագա տեսությունների մեջ մենք կաշխատենք ընթերցողներին, հայ կյանքից վերցված փաստերի կապակցությամբ, ծանոթացնել հայկական միջավայրում պայքարող դաղափարական հոսանքներին։ Վերջացնելով այս երկարած «առաջաբանը», մենք դիմում ենք հայ հասարակությանը մի խնդրով.—տեղեկացնել մեզ հայկական թե՛ տնտեսական և թե՛ հոգևոր կյանքի այն բոլոր փաստերի մասին, որոնք արժանի կլինեն մամուլի էջերում նշվելու։

«Новая Речь» № 78,
ապրիլի 7, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ռզոյ

ՈՒՐՎԱԳԻՐԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Լույս տեսավ «Հովիտ»[30] շաբաթաթերթի առաջին համարը։ Իր խմբագրական հոդվածում թերթը հայտարարում է, որ մտադրություն չունի իր credo*-ն պարզաբանելու, որովհետև դա արդեն և՛ հնացած բան է, և՛ մաշված. ընթերցողն այլևս հոռետես է դարձել և չի հավատում պերճախոս խոստումներին։ Մանավանդ այն պատճառով,— հայտարարում է խմբագրությունը,— որ՝ ինչպես բանից պարզվեց՝ հայկական մամուլի ղեկավարներից շատերը շատ հաճախ աղնվությունից և խելացիությունից զուրկ էին դուրս գալիս։

Այո, իրոք որ, հարկավոր չեն որևէ աղդարարություններ, որևէ գեղեցիկ խոսքեր և հրապուրիչ առաջարկներ։ Ամեն ոք, ով նեղություն քաշի թերթելու նոր շաբաթաթերթ «Հովիտ»-ը, անմիջապես կդդա մթին գործերի լաբորատորիայի սպեցիֆիկ բուրմունքը։ Աղնվության ու կանոնավորության գեթ սկզբնական այբուբենի և լրագրական բանավեճի միջոցներին փոքրիշատե ծանոթ մարդկանցից ամեն մեկի սիրտն էլ կպղտորվի, երբ կարդա այդ ժուռնալում պ. Ինգիբարովի[40] «Եվրեմը խելոք մարդ է» հոդվածը։ Տանի նողկալիությունը, արտահայտությունների անամոթությունը ոչ միայն առանձին անձնավորության վերաբերմամբ, այլև մի ամբողջ ազգության հասցեին, հասարակական մի հայանի հոսանքի հասցեին՝ «քացի տվող ավանակի» պոզան, այս ամենը վկայում են նախ և առաջ այն, թե ինքը՝ ժուռնալի խմբագրությունը և նրա աշխատակիցները որքան զուրկ են ամենատարրական բարոյական սկզբունքներից։

*)— Հավատամքը։

Հոդվածը, որ գրված է լրագրական այն լուրերի առթիվ, թե պարսկական հայտնի գործիչ Եփրեմը[41] մեկնել է Թյուրքիա, լեցուն է բանավեճի և պարտիական կատաղության այնպիսի «գոհարներով», որ գրական լեքսիկոնում դժվար է գտնել համապատասխան մի ածական այդ հոդվածի բնորոշման համար։ Հայերի, ինչպես և բոլոր փոքր ժողովուրդների մոտ, քաղաքականությունը շատ հաճախ փոխարինվում է պոլիտիկանությամբ, անձնական հարաբերություններն ու չարակամությունը հասցվում են մինչև պարտիական տարաձայնությունների ատելությունը և դաղափարական տարբեր հոսանքների բանակռիվը հիպերբոլիկ ձևեր է ստանում։ Սակայն հայ գրականության մեջ ևս դժվար թե կարելի լինի պ. Ենգիբարովի հոդվածի նման մի ուրիշ նմուշ գտնել։ «Փախստական կատաղի» ածականը շարունակ կցվում է Եփրեմի անվան, կոնստիտուցիան ու նրա գործիչները Պարսկաստանում արհամարվում են ամենանանթույլատրելի կերպով, իսկ ինքը՝ մեզ հարևան երկիրը, որտեղ բավական թվով հայեր են ապրում, անվանվում է «մաշադիական Իրան» և նրա համար դուշակվում է մոտալուտ և անխուսափելի կործանում։ Եվ ամբողջ այս «գրական երկը»— լեցուն մթին ակնարկներով ու մատնություններով —իվերջո առատորեն սրսկվում է հեգնախոհությամբ և աստվածային երկյուղով.— հայ ժողովուրդն, իբր թե, ըստ իր էության քրիստոնեական ժողովուրդ է, իսկ քրիստոնյաներին վայել չէ խառնվել քաղաքականության մեջ, որ իրենց այդ բնական հատկությանը չդավաճանելով՝ հայերը միայն և միայն պետք է հավատարիմ մնան իրենց պատմական պալլադիում— էջմիածնին։ Իսկ այն ամենը, ինչ որ դրանից ավելի է և դրանից անկախ,— ի չարեն է։

Մենք մտադրություն չունենք բանավեճի բռնվելու «նոր» ժուռնալի խմբագրության և առավել ևս պ. Ենգիբարովի հետ։ Վերջինիս ֆիզիոնոմիան, որպես հասարակական գործչի, բավական ծանոթ է հասարակական լայն շրջաններին, և ոչ միայն հայկական։ Բավական է մտաբերել նրա «ատրբ-

ճանակային» նյութը «Бакинские Известия»-ի խմբագրատանը և նրա մեծաղմուկ գործն իր նախկին պատրոն Նագիդանովի դեմ, որպեսզի կարելի լինի անսխալ կերպով որոշել մեր վերաբերմունքը թե՛ դեպի նա և թե՛ դեպի մամուլի այն օրգանը, որն իր էջերում տեղ է տալիս նրա գրվածքներին։

Մենք նշեցինք պ. Ենգիբարովի հոդվածը, նպատակ ունենալով ցույց տալ, թե որքան է նվազել և աղքատացել հայ գրական անդաստանը, որքան է իջել հայ մամուլի մակարդակը վերջին տարիներս, եթե կարող են գրիչ վերցնել իրենց ձեռքը և օգտվել տպագրական մամուլից՝ հանդես գալով հայ ժողովրդի բարերարների և նրան ուղիներ և դաղափարներ մատնացույց անողների դերում այնպիսի մարդիկ, որոնց ուղում ես գոչել.— «ձեռներդ հեռո՛ւ...»։ Հասարակությանը ծառայելու համար բավական չէ կարողանալ գրագետ լեզվով գրել, այլ անհրաժեշտ է նաև անձնական և հասարակական կարգինություն։

«Новая Речь» № 88,
ապրիլի 22, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Բզվոյ

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ «ՀՈՎԻՏ» ԺՈՒՌՆԱԼԻ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Ներողություն եմ խնդրում և՛ խմբագրությունից և՛ ընթերցողներից, որ «Հովիտ» ժուռնալի խմբագրությանն ուղղած իմ այս հարկադրված պատասխանով տեղ եմ զբաղեցնում թերթում։ Սակայն ես միքանի տող եմ նվիրում այդ «ժուռնալին»՝ բացառապես նպատակ ունենալով թե՛ լրացնել այն բնութագիրը, որ ես արդեն տվել եմ նրան և թե՛ է՛լի մի անգամ ցույց տալու համար, որ այդ օրգանի ղեկավարները կատարելապես զուրկ են տարրական կարգինությունից, բայց վիսխարենը՝ պինկերտոնյան[42] մեծ ընդունակություններ ունեն։

Այդ «մթին գործոց լաբորատորիայի» մամուլի տեսություններ կազմողը չի փորձում ըստ էության պատասխանելու ինձ, այլ զբաղվում է իր սպեցիֆիկ արհեստով—խուզարկողությամբ[43]։ Նախ և առաջ սույն պարոնը, որին «ես ականջներից իսկույն ճանաչեցի»[44], հաստատում է, որ ես հայ եմ, ապա՝ որ ես «եփրեմական» եմ, քանի որ պաշտպանում եմ Եփրեմին, իսկ երրորդ՝ ես «կատորժնիկ» եմ, որովհետև Եփրեմը, ըստ «Հովիտ»-ի խմբագրության տվյալների, կատորժնիկ է։

Ապա ամբողջ այդ քննչական նյութից հանվում են հետևյալ եզրակացությունները.—եթե «Իզգոյ»-ն իր կեղծանունը բաց չանի, ապա «Հովիտ»-ի խմբագրությունն ունի իրավունք հետևյալ եզրակացություններն անելու. 1) որ «Իզգոյ»-ը կատորժնիկ է և եփրեմական և 2) որ նա զուրկ է հասարակական և անձնական կարգինությունից։

Պատասխանում եմ ըստ կետերի։

Թե, ո՞ր ազգության եմ պատկանում ես, այդ կարևոր հարց չէ և դա բնավ չի փոխում հարցի էությունը։ Թող «Հովիտ»-ի խմբագրությունն ապացուցի, որ ես մոլորության մեջ եմ գցել «Новая Речь»-ի խմբագրությունը, որ ես ճիշտ չեմ հաղորդել Սնդիբարյանի հոդվածի բովանդակությունը,— մի հոդվածի, որ պատիվ կարող էր բերել պ. Դուբրովինի «Русское Знамя»-յին[45]։ Սակայն դրա մասին «հոդվածագիրը» խոհեմաբար լռում է և զբաղվում իմ ազգության հարցի «քննությամբ»։ Հաջողություն եմ ցանկանում նրան այդ ասպարեզում։

«Հովիտ»-ի խմբագրությունը ոչ մի կերպ չի կարողանում հասկանալ, որ կարելի է հասարակական այս կամ այն ուղղության, այս կամ այն անձի կողմնակիցը չլինել, բայց և այնպես՝ այդ հոսանքի կամ անձնավորության դեմ պայքարելիս՝ չդիմել այնպիսի կեղտոտ պրիոմների, որոնք Թուլյատրելի չեն մամուլի որևէ պարզապես կարգին օրգանում՝ անկախ նրա ուղղությունից և պարտիայից։

Բայց ես կարող եմ հանգստացնել ժուռնալի «հոդվածագրին». ես «եփրեմական» չեմ։ Դեռ ավելին. երբ «հոդվածագիրը» և յուրայինները և հենց ամբողջ հայ հասարակությունը ձգվում էին «եփրեմականների» առջև և ստրկական ժպիտը չէր իջնում նրանց դեմքերից,— ես և իմ սակավաթիվ համախոհները հայկական իրականության մեջ բացեիբաց հանդես էինք գալիս «եփրեմականների» դեմ՝ նրանց փառքի և ուժի գագաթնակետի օրերին։ Այժմ դուք դուրս եք սողացել ձեր որջերից և մարդասպանություն եք անում։ Էլ ինչպե՞ս ապա, սրանից հետո չհամեմատեինք ձեզ «քացի տրվող ավանակի» հետ։ Բայց «հոդվածագիրը» տակտիկաբար մթագնում է հարցը, փորձելով ամբողջ իմ հոդվածը հանդեցնել Եփրեմի պաշտպանության, թեպետ Եփրեմի մասին ես այնտեղ ունեմ սոսկ մի ֆրազ միայն։

Կեղծանունը բանալու տարօրինակ պահանջի առթիվ կարող եմ ասել միայն— «բժիշկ, քեզ բուժիր...»։

Ինչո՞ւ «հոդվածագիրը» բաց չի անում իր սեփական

կեղծանունը և թաքնվում է «Կ» համեստ տառի տակ։ Եվ ապա՝ դարձյալ նույն այդ «ֆոկուսներով» «Հովիտ»-ի խմբագրությունը ջանում է սվաղել այն մեղադրանքի էությունը, որ ես շպրտել եմ նրան։

Իսկ եթե իմ կեղծանունը չբանալը առիթ տա, որ այդ ամբողջ «սև» հասարակությունը «կատորժնիկ» անվանի ինձ և կամ այլ անուններ տա,— pax vobiscum պարոններ. Հայկական պուրիշկևիչների աչքում ոչ կարգին մարդ համարվելն ինձ համար մեծ պատիվ է։*

«Новая Речь» № 102,
մայիսի 8, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Իզգոյ

---

*)— *Երթայք խաղաղությամբ, խաղաղություն ձեզ։*

ՈՒՐՎԱԳԾԵՐ ՀԱՅԿԱԿԱՆ ԿՅԱՆՔԻՑ

Հոբելյանները վերջին ժամանակներս սովորական երևույթ են դարձել հայկական կյանքում։ Մոտ ապագայում տեղի են ունենալու մի քանի մեծարանքներ և հայկական մամուլը ամբողջ սյունակներ է նվիրում հասարակության կյանքում տեղի ունեցող այս կուլտուրական իրադարձություններին։

Այս կամ այն հասարակական գործչի կամ գրողի գործունեության տոնումը որոշ չափով հանդիսանում է ժողովրդի կուլտուրական մակարդակի ցուցանիշը, նրա քննությունը, ինչպես նաև այն ուղղության ուժերի ստուգատեսը, որի արտահայտիչն է եղել տվյալ մեծարվող գործիչը գրականության մեջ կամ հասարակական աշխատանքում։

Իսկ հայ միջավայրում այս կուլտուրական տոները չեն հանդիսանում անցած ուղու հանրագումարների ամփոփում, այլ ավելի շատ՝ հասարակության կողմից «մարդասիրության» մոլուցք—հասարակական ասպարեզում աշխատողների նկատմամբ։ Հայկական լրագրերը սովորաբար այնպիսի հոդվածներ են տպագրում, որոնք ուշադրություն են հրավիրում հայ գրողի, արտիստի կամ որևէ այլ գործչի ծանր դրության վրա, որն իր բոլոր ուժերը, ընդունակությունները, հաճախ անդորր ու ապահով ապրելու հնարավորությունը նվիրել է հասարակական բարօրությանը ծառայելու, իր ժողովրդի հոգևոր վիճակը բարձրացնելու ծանր ու անշնորհակալ աշխատանքին։

Այդ հոդվածները, կազմվող կոմիտեները, տպագրվող կոչերը հիշեցնում են ոչ այնքան մի կոչ հասարակությանը՝ իր պարտքը հատուցելու, որքան մի փորձ՝ շարժելու հայկական պլուտոկրատիայի գումը և նրան որոշ նյութական օգնության հրավիրելու։ Նա թերևս մի քիչ կբացի իր քսակի բերանը, «մինչև դուշ» կտա և իր «պարտքը» կատարած լինելով, կհանդչի «ազգի բարերարների» ու «գրականության և արվեստի հովանավորողների» դափնիների վրա։ Եվ այս պատճառով որքա՞ն դառնություն ու վիրավորանք պիտի զգան հայ գործիչներն այս հանդիսանքի ու աշխատանքի այս «հատուցման» ժամանակ։

Այս մեծարանքները տեղի են ունենում հայ հասարակության որոշակի շրջանում, մեծարողների մեջ մշտապես հանդիպում են միևնույն դեմքերը, իսկ ժողովրդական լայն ամբոխը, հայ ժողովրդի լայն խավերի մասնակցությունը սովորաբար չի լինում և այս տոնակատարությունները համաժողովրդական բնույթ չեն կրում։ Հայ ժողովրդի երկու շերտը՝ բարձր ու ցածր խավերն ունեն իրենց առանձին տոները։ Ժողովուրդը հավաքվում է, միմյանց հետ շփվում զանազան ուխտատեղերում ու եկեղեցական տոներին, իսկ հոբելյանական տոնակատարությունների մեծ մասն իսկապես հայ հասարակության ինտելիգենտական խավերի նեղ շրջանում տեղի ունեցած իրադարձություններն են։ Իսկ սա թե՛ անհորմալ է և թե՛ անցանկալի։ Հայ, իսկապես դեմոկրատական, ինտելիգենցիան պետք է գրականությունը մոտեցնի ժողովրդին, այն դարձնի ժողովրդական՝ բառիս իսկական իմաստով, և այն ժամանակ իրենց գրողներին կմեծարեն բնակչության լայն խավերը և առիթ չի լինի աղաչելու հայ բուրժուաներին, որ «Հանուն Հայրենիքի սիրո և ազգային հպարտության» բանան իրենց տուզած քսակը։

Այս նպատակին հասնելու համար անհրաժեշտ է թե՛ գրականության մեջ և թե՛ հասարակական ծառայության այլ

ասպարեզներում անմիջականորեն և ընդհուպ մերձենալ ժողովրդական մասսաների իսկական կարիքներին ու ցավերին։ Մինչդեռ հայ իրականության մեջ վանքի պատերի, ոչ սև ֆարաջաների հետևում մոռացվում են ժողովրդական մնացած բոլոր ամենակենսական կարիքները։

«Новая Речь» № 96,
մայիսի 1, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Եզոյ

ԷՔՍ-ՎԱՐԴԱՊԵՏ ԵՐՎԱՆԴԸ ԵՎ Պ. Ի. ՊԻՃԻԿՅԱՆԸ

Իր «Էջմիածինը և հայկական մամուլը» հոդվածում պ. Ի. Պիճիկյանը մի հետաքրքրական հարց է շոշափում. կարո՞ղ են արդյոք հայկական դպրոցներում դասատու լինել մարդիկ, որոնք այլ կերպ են մտածում, քան պաշտոնական իրավական անձը՝ հայկական եկեղեցին։ Հարցն իսկապես առաջնակարգ կարևորություն ունի և նկատի ունենալով մեր պետության հասարակական-քաղաքական կյանքի բազմազան պայմանները, այդ հարցը պետք է լուծել լրջորեն և վերին աստիճանի զգույշ։ Բայց այդ մասին մենք առանձին կխոսենք։ Մեզ այժմ ուրիշ հարց է հետաքրքրում. այն է՝ պ. Ի. Պիճիկյանի վերաբերմունքը դեպի նախկին վարդապետ Երվանդի անձնավորությունն ու ռեֆորմատորական գործունեությունը։ Մեզ թվում է, որ այդ վերաբերմունքը ճիշտ չէ և խորապես սխալ է։ Էքս-վարդապետ Երվանդը «հայկական եկեղեցու վերածնության» մասին գրած իր լղարիկ բրոշյուրում ամեն մի ժողովրդի կյանքում եղած իդեոլոգիական խոշորագույն գործոնին՝ եկեղեցական կազմակերպությանը, կրոնական սիստեմին մոտենում է այնպիսի թեթևամիտ տեսքով, փիլիսոփայական և պատմական այնպիսի թեթև բագաժով, որ ակամայից անհարմար ես զգում այն լսարանի՝ այսինքն հայ հասարակության փոխարեն, որը կարող է դրել և բանավիճել այս բոլոր տեսակետներից անդրագետ գրքույկի առթիվ։

Այն մարդիկ, որոնք թեմականի նախապատրաստականի դիտելիքներով, ներդաշնակ, ամբողջական, տրամաբանորեն մտածելու անկարողությամբ համարձակվում են հասարա-

կական ասպարեզ ելնել դարավոր հզոր մի երևույթի դեմ, չեն նպաստում մարդկային ոգին ամեն տեսակ տրադիցիոն-պատմական կապանքներից ազատագրելու գործին, այլ ընդհակառակը, լիակատար անվստահություն են ներշնչում դեպի ամեն մի ռեֆորմ, դեպի ամեն մի նովատորություն, արմատական բեկում։ Էքս-վարդապետի, այսպես ասած, գիտական-փիլիսոփայական անձնավորության առթիվ ասված մեր այս խոսքերը մենք հանձն ենք առնում ուղած ժամանակ հաստատել բացառապես հենց իր «բրոշյուրիկից» առած ցիտատներով միայն։

Բայց դեռևս առաջ։ Դիցուք թե էքս-վարդապետը զինված է գիտության բոլոր ավյաններով։ Հարց է ծագում՝ պաշտոնական եկեղեցու փոխարեն նա ի՞նչ է առաջարկում։ Մի ուրիշ, ավելի ընդարձակ եկեղեցի, որովհետև նա ուզում է բոլոր տերտերներին աշխարհական դարձնել, իսկ բոլոր աշխարհականներին՝ տերտերներ։

Ի՞նչ բան ունի այստեղ պ. Ի. Պիճիկյանը և ի՞նչ վերաբերմունք այդ ամբողջ «ռեֆորմին»։ Նրա բոլոր հոդվածների մեջ համակրական վերաբերմունք է երևում դեպի էքս-վարդապետ Երվանդը, նրա՝ հայկական եկեղեցու տխրահռչակ վերածնությամբ հանդերձ[10]։

Նա քանդում է հինը,— ասում է պ. Ի. Պիճիկյանը Երվանդ վարդապետի մասին,— ուստի և անհրաժեշտ է նրան օգնել, օժանդակել։ Բայց չէ՞ որ քանդել էլ կա, քանդել էլ։

Եթե ես մահապատժի, իբրև պատժելու միջոցի, հակառակորդ եմ, ապա չեմ կարող հավանություն տալ կախաղանը էլեկտրական աթոռով փոխարինելուն։ Ես ժխտում եմ թե՛ այս թե՛ այն։ Կան ռեֆորմներ և կան սուտ ռեֆորմներ. կան ռեֆորմներ, որոնք տանում են դեպի մարդկության ազատագրության արագացումը և կան ռեֆորմներ, որոնք ամրապնդում են հինը, անպետքը, ավերվողը։

«Ռեֆորմ» բառով տարվելու կարիք չկա։

Եթե մենք հայ հասարակության իսկապես պրոգրեսիվ տարրերն ենք, ապա պետք է մեր հարվածների ուժն ուղ-

դինք ոչ միայն «հնի» դեմ, այլև «հնի» խղճուկ նորոգիչների դեմ, որոնք ցանկանում են հին գինին նոր տիկերի մեջ լցնել։

Իսկ էքս-վարդապետ Սրվանդը հենց ցանկանում է օպերացիա կատարել մեռնողի ու քայքայվողի մեջ կենսահյութ սրսկելու իմաստով, այն ոգով, որ այն միայն խոսքով հարմարեցվի կյանքի ժամանակակից պահանջներին։

Այն ժամանակները, երբ ժողովրդական որոնող միտքն անհրաժեշտաբար կրոնական ձևեր էր ստանում, մեզ՝ հայերիս համար ևս անվերադարձ անցել են, չնայած մեր հետամնացությանը։ Իսկ նպատակել, որ ժողովրդական միտքը դեպի հին աբանդական հունը ուղղվի, առնվազն տարօրինակ է։

Թող մտածի պ. Պիճիկյանը սրա վրա և նա կգիտակցի իր սխալը։

«Курьер-Копейка»[47] № 164,
հոկտեմբերի 19, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Իզգոյ

ԻՆՔՆԱՌԵԿԼԱՄԻ ՆՈՐ ՄԻՋՈՑ

Հայ գրականության մեջ անհայտ անձնավորություն չէ Բ. Իշխանյանը[48]։ Նա շատ է գրում, շատ գրքեր է հրատարակում, սակայն նրա գրական ելույթները միշտ էլ ուղեկցվում են գրագողության վերաբերյալ մերկացումներով։ Հիմա պ. Բ. Իշխանյանը մի նոր տերև է ավելացրել իր այդ յուրահատուկ գրողական պատկին։ Նա սկսել է զբաղվել անանմոթ ինքնառեկլամով։ «Մշակ» թերթի № 19-ում զետեղված է Բ. Իշխանյանի հոդվածը «Իմ գրքի ռուսական քննադատության առթիվ» վերտառությամբ։ Այդ հոդվածում հեղինակը գովում է քննադատին և շարունակ իրեն շփոթում է Գ. վ. Պլեխանովի հետ։ Ընթերցողն այն տպավորությունն է ստանում, որ Բ. Իշխանյանը հայ հասարակական մտքի համար նույն նշանակությունն ունի, ինչ որ Գ. Պլեխանովը ռուս և միջազգային հասարակական մտքի համար։

Լինում են մարդիկ, որոնց կաշին այնքան հաստ է, որ ոչնչով չեն կարող ծակել։

Ըստ երևույթին նույն այդ կարգին է պատկանում նաև Բ. Իշխանյանը։

«Листок-Копейка» № 25,
փետրվարի 1, 1911 թ.։

ՄԱՄՈՒԼ

«Սուրհանդակ»[10] թերթի առաջնորդող հոդվածում պ. Ատրպետը հարձակվում է հայ ինտելիգենցիայի վրա, որը կենտրոնացած լինելով Բաքվում և Թիֆլիսում, անօգնական վիճակում է թողել գավառը։ Այդ իսկ պատճառով է,—շարունակում է Ատրպետը,— որ չեն մշակվում հողում իղուր և ապարդյուն թաղված մեր բնական հարստությունները։ Ճիշտ է, քիչ ներքևում պ. Ատրպետը կարծես մի փոքր նրողամտաբար է վերաբերվում ինժեներներին և ի միջի այլոց նկատում է, որ երկրի արտադրողական ուժերի զարգացման համար կապիտալ է հարկավոր, ուրեմն՝ ինտելիգենցիան այնքան էլ մեղավոր չէ։ Պ. Ատրպետը չի հասկանում, որ կապիտալը հանդես է գալիս այն ժամանակ, երբ կա խաղաղ ու հանգիստ կյանքի երաշխիք։

Այնուհետև պ. Ատրպետն իր զայրույթն է թափում բժիշկների և փաստաբանների վրա՝ նրանց դարձյալ նույն հասկանալի հակման պատճառով դեպի կենտրոնը։ Եվ իհարկե, մոռացվում են այն բարբարոսական պայմանները, որ տիրում են մեր գավառում, գրքի և մարդու երես տեսնելու կարոտը։ Ճիշտ է, մեզ կարող են առարկել, թե ահա հենց այդ պատճառով էլ այնտեղ մարդիկ են անհրաժեշտ։ Այո, սակայն ինչու պետք է նայել ինտելիգենցիայի վրա որպես մի խմբի, որ դատապարտված է մարտիրոսության և ինչ որ ծանր խաչ կրելու։

Իր աշխատանքն առաջարկող ինտելիգենցիան մի ինչ

որ հատուկ կաստա չէ կամ՝ վերդասակարգային մի խումբ, այլ նույնպիսին է, ինչ որ և այլ հասարակական խմբերը։

Ստեղծենք գոյության որոշ պայմաններ, և ինտելիգենցիան՝ մրցակցության ճնշման տակ՝ կդնա դավաս։

Իսկ իզուր տեղը խոսել և տխրակերպ ասպետ ձևանալը[50]—միմիայն ծիծաղելի է։

«Листок-Копейка» № 55,
մարտի 8, 1911 թ.։

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹՅԱՆ

Մեծ թերթերը մեծ հավակնություններ ունեն իրենց իրազեկության նկատմամբ և դեռ վերջերս «Закавказье»-ն[51] շինծու արհամարհանքով էր խոսում «կոպեկանոց մամուլի» մասին։ Ես ուզում եմ այս առթիվ մատնանշել այդ թերթի զարմանալի «անգրագիտությունը» թեկուզ հենց հայ կյանքի հարցերի վերաբերմամբ։

Ահա, օրինակ № 53-ում զետեղված է «Հայ կյանքից» վերտառությամբ մի փոքրիկ հոդված, որտեղ գովասանական տոնով խոսվում է փիլիսոփայության հարցերին վերաբերող պ. Ս. Ֆրանգյանի[52] «աշխատությունների» մասին։ Իհարկե, հոդվածի հեղինակ պ. Վ.-ի համար պ. Ֆրանգյանի մարդանքները, որ հույս է դրել հայ ընթերցող հասարակության տգիտության վրա, կարող են թվալ իբրև լուրջ ներդրում հայ գրականության մեջ։ Այդ նրա ճաշակի գործն է և փիլիսոփայության հետ նրա ծանոթ լինելու ցուցանիշն է։

Բայց ահա թե ինչումն է բանը. ինչո՞ւ պ. Վ.-ն, չգիտենալով գերմանական համալսարաններին և հայ հասարակական գործիչներին վերաբերող տարրական բաները, անհեթեթություն է մտցնում ռուսական թերթի էջերում։

Ամենից առաջ մատնանշենք այն, որ գերմանական համալսարաններում կա երեք ֆակուլտետ (աստվածաբանական ֆակուլտետի մասին ես չեմ խոսում), այն է՝ բժշկական, իրավաբանական և փիլիսոփայական։ Փիլիսոփայական ֆակուլտետի մեջ մտնում են այն բոլոր գիտական դիսցիպլինները, որոնք չեն մտնում առաջին երկու ֆակուլտետների մեջ, այնպես, որ մեր պատմա-ֆիլոլոգիական և ֆիզիկո-մաթեմատիկական բաժանմունքները գերմանական համալսարան-

ներում ամբողջովին մտնում են փիլիսոփայական ֆակուլտետի մեջ։ Ամեն ոք, ով ավարտում է փիլիսոփայական ֆակուլտետի դասընթացը, արժանանում է փիլիսոփայության դոկտորի կոչման, թեկուզ և նրա մասնագիտությունը լինի, օրինակ, լինգվիստիկան կամ կենդանաբանությունը։ Այստեղից հետևում է, որ փիլիսոփայական ֆակուլտետ ավարտող ամեն ոք դեռ «փիլիսոփա» չէ։

Հայտնի հայ հրապարակախոսները, օրինակ, Գր. Արծրունին, Սպանդար Սպանդարյանը, մասնագիտությամբ երբեք չեն եղել փիլիսոփաներ։ Գր. Արծրունին «փիլիսոփայական» ֆակուլտետում միայն ուսումնասիրել է քաղաքատնտեսությունը, իսկ Սպանդար Սպանդարյանը երբեք էլ չի եղել այդ ֆակուլտետում. նա Լայպցիգի համալսարանի իրավաբանական գիտությունների դոկտոր է։ Նույնը կարելի է ասել նաև Ս. Արասխանյանի մասին[33]։ Հարց է ծագում, արդյոք հիմք ունե՞ն պ. Վ.-ի կշտամբանքները, թե այդ մարդիկ անտարբեր են դեպի իրենց մասնագիտությունը—փիլիսոփայությունը, թե՞ հարկավոր է զարմանալ պ. Վ.-ի անդրադիտության վրա,—մի մարդու, որը հանձն է առնում մեծ (?!) թերթի էջերում ռուս հասարակությանը իրազեկ դարձնել հայ գրականությանը։

«Листок Копейка» № 56,
մարտի 9, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իզոյ

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

«Հորիզոն» թերթն իր 64-րդ համարում «Անիրաղեկություն թե անբարեխղճություն» առաջնորդողում դառնորեն դանդատվում է այն սխալ և աղավաղված տեղեկությունների դեմ, որ երևան են գալիս տեղական ռուսական և վրացական մամուլում՝ հայ կյանքի, գրականության ու հրապարակախոսության մասին։

Այդ չարիքի պատճառը «Հորիզոնը» համարում է այն, որ վրացական ու ռուսական թերթերի ղեկավարները չգիտեն հայերեն լեզուն և դրա հետևանքով ստիպված են իրենց ամբողջ հույսը դնել միջնորդների, տեղեկատուների վրա, որոնք շատ և շատ հաճախ ղեկավարվում են պարտիական և այլ մոտումներով։

«Հորիզոնի» դանդատներն անկասկած հող ու հիմք ունեն, անկասկած ճշմարտության որոշ մասնիկ են պարունակում իրենց մեջ։

Յուրաքանչյուր հայ ընթերցող առիթ է ունեցել և ունի ռուսական կամ վրացական մամուլի էջերում կարդալ երբեմն հայ իրականության ապշեցուցիչ խեղաթյուրումներ, որոնք թելադրանք են լինում հայ «տեղեկատուի» պարտիական հաշիվների և անձնական մոտիվների։

Մենք չենք ժխտում, որ դրողն իրավունք ունի իր աշխարհայացքի տեսակետից արժեքավորել և լուսաբանել հայ կյանքից, հասարակայնությունից ու գրականությունից վերցրած փաստերը, սակայն մենք պետք է նշենք ռեալ փաստերն ուղղակիորեն աղավաղելու, բացահայտ անճշտության և, ցավոք սրտի, կեղծիքի անպետքությունն ու անցանկալիությունը։

Բայց ո՞վ է մեղավոր իրերի այդպիսի դրության համար։ «Հորիզոնականներն» այդ տխուր երևույթի համար ոչ պակաս մեղավոր են, քան որևէ մեկ ուրիշը։

Ահա օրինակ, վերջերս այդ թերթի գլխավոր գեկավարներից մեկը՝ պ. Լեո-Բարախյանը իր օրգանում հրապարակով խոստովանեց, որ ինքը հանդուցյալ հայ հրապարակախոս Գր. Արծրունու իր կազմած «կենսագրության» մեջ թույլ է տվել բացահայտ անճշտություն և փաստերի աղավաղում։ Եվ այդ արժեքավոր խոստովանությունը, հայ ինտելիգենցիայի և գրականության համար խորապես ցավալի այդ խոստովանությունը տեղի չէր ունենա, եթե պ. Լեո-Բարախյանը բոլորովին պատանմամբ (տվյալ դեպքում ծիծաղելի է խոսել սկզբունքային տարաձայնությունների մասին) չբաժանվեր իր նախկին զինակից և բարեկամ Համբ. Առաքելյանից։

Վերջինիս հետ մղվող տաք, անձնական բնույթ ունեցող բանակռիվը պ. Լեո-Բարախյանին ստիպեց փոքր ինչ «զղջալ»։

Բայց չէ՞ որ Լեո-Բարախյանի թե՛ նախկին և թե՛ այժմյան բարեկամների այդ ամբողջ խումբն է, որ թե՛ այն ժամանակ և թե՛ հիմա տեղեկություններ է տվել և տալիս է թե՛ ռուսական և թե՛ վրացական մամուլին, գիտակցաբար աղճատելով փաստերը, միջակությունները ու ոչնչությունները բարձրացնելով անհասանելի պատվանդանների վրա, որպես անպետք հնոտի՝ մի կողմ շպրտելով փաստական ճշմարտությունը և օբեկտիվության ամենաչնչին դողան։ «Ինչ կցանես, այն կհնձես»,—ասում է ժողովրդական առածը, և «Հորիզոնականները» ստիպված են տեսնել իրենց բազմամյա աշխատանքների, տրադիցիաների և սկզբունքների պտուղները՝ «անվանի օտարերկրացիներին տեղեկություններ հաղորդելու» ասպարեզում։ «Հորիզոն» թերթն իր բողոքներում ակնարկում է նաև մեր թերթը, բանեցնելով մեր դեմ այնպիսի մի գեղեցիկ արտահայտություն, ինչպիսին է «գրական խուլիգանությունը»։ «Հորիզոնի» թունդ խոսքերին

մենք չենք արձագանքի «գեղեցիկ գրականության» նույնպիսի նմուշներով, այլ հանգիստ կերպով կընդդծենք այն փաստը, որ «Հորիզոնը» նիշտ չի ասում, եթե չգործածենք ավելի ուժեղ արտահայտություն։

Մենք բազմիցս մատնանշել ենք[55], որ հայ մամուլը գլխավորապես զբաղված է եկեղեցական հարցերով, վանքերի ինտրիգներով և կաթողիկոսի ընտրություններով, որ մնացած ողջ բազմազան ու բազմակողմանի կյանքը հորդահոս անցնում է նրա կողքից, թույլ է արտացոլվում կամ բոլորովին չի արտացոլվում նրանում։

«Հորիզոնը» վիրավորվեց, ջղայնացավ և, ըստ էության չառարկելով, կարողացավ մոբիլիզացիայի ենթարկել միայն երկու փաստարկում՝ հայհոյանք և դիմում ընթերցողի խղճին։

Այսպիսի միջոցներով ոչինչ չի հերքվում, իսկ «Հորիզոնի» հայհոյանքը և արտասվալից գանգատները միայն ապացուցում են մեր իրավացիությունը։

Բանն այն չէ, թե ով է շատ հոդվածներ զետեղել, որոնց մեջ խոսքը վերաբերվում է կամիլավկաներին ու վեղարներին— «Հովի՞վը»[56], թե՞ «Հորիզոնը», այլ բանն այն է, որ թե կղերական «Հովիվ»-ում և թե կվազի-դեմոկրատական «Հորիզոն»-ում այդ հոդվածներն իրենց տեսակարար կշռով գերակշռում են բոլոր մնացած հոդվածները։

Սակայն մենք հասկանում ենք «հորիզոնականների» անհանգստությունը. նստել երկու աթոռի վրա և աջ ու ձախ ժպտալ չափազանց դժվար է և անհարմար, իսկ ինքնապաշտպանության բնազդը պահանջում է և ֆլիրտ դեպի աջ և ավանսներ դեպի ձախ։

«Листок-Копейка» № 72,
մարտի 29, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իզգոյ

Բ. Ս. ՇԱՀ-ՊԱՐՈՆՅԱՆԻՆ[57] ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

Ապրիլ 2 (Մարտի 20) [1916 թ. Մոնաստիրսկոյե գյուղ, Տուրուխանյան երկիր]։

Սիրելի Բագրատ Սեմյոնովիչ... Ո՞վ է խմբագրում «Պայքարը»[58]։ Շատ անհամ բան է, կուրաբար հետևում է վրաց թերթին[59]։ Էլ չեմ ասում, որ լիկվիդատորական հոտը հո հեռվից արդեն զգ[աց]վում է։ Հարգելի Հակոբը մնզանից ձախ էր, իսկ այժմ աջակողմյանների հետ է[60]։ Հիանալի է։

Քո Սուրեն.

ԺՈՒՌՆԱԼԻՍՏԻԿԱ

«ԱՆՀՐԱԺԵՇՏ Է ԱՇԽԱՏԵԼ» ՀՈԴՎԱԾԻՑ

...Անհրաժեշտ է մեր ինտելիգենցիայի բոլոր դեմոկրատական-առաջավոր ուժերի համախմբում, հարկավոր է ամենալուրջ աշխատանք քաղաքային բնակչության լայն խավերում այն իմաստով, որ քաղաքային բարդ տնտեսության վարելն իր խնդիրների և նպատակների բազմազանությամբ ճիշտ կերպով լուսաբանվի և ծանոթացվի։

Այդպիսի աշխատանքը թե՛ ավելի մեծ հետաքրքրություն կշարժի դեպի հասարակական գործերը և թե՛ կբարձրացնի ողջ բնակչության մտավոր մակարդակը։ Մինչդեռ մեր ինտելիգենտները դասախոսություններ են կարդում Ուայլդի, Մետերլինկի և այլ գրողների մասին, բայց նեղություն չեն քաշում ծանոթացնելու քաղաքային բնակչությանը եվրոպական քաղաքային կոմունաների մունիցիպալ քաղաքականության արդի հոսանքներին, կոմունալ գործունեության խնդիրներին և նպատակներին։

«Новая Речь» № 94,
ապրիլի 29, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ոլգին

ԲԱՑ ՆԱՄԱԿ ԹԻՖԼԻՍԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻՆ[1]

Վերջին ժամանակներս լրագրական բանավեճի ձևերի սանձարձակությունը հասել է այն սահմաններին, որոնք բացահայտորեն անհանդուրժելի են իրեն քիչ թե շատ հարգող միջավայրում։ Հակառակորդի վերաբերմամբ թույլ են տրված ամեն տեսակ միջոցներ, նույնիսկ մինչև նրա մասնավոր, ինտիմ, նրա ընտանեկան նեղ շրջանակը ներխուժելը. իսկ բռունցքի միջոցով հաշիվ տեսնելը և կոպիտ ուժի կուլտը, որպես ներգործության միջոցներ, բացահայտ կերպով քարոզվում են տեղական միքանի օրգանների էջերից։ Բոլորն էլ հիշում են Թիֆլիսի երկու թերթի միջև ծագած բանակռիվը, որի կենտրոնական կետն էր հանդիսանում թշնամական թերթի աշխատակիցներից մեկի մոտիկ մարդու գլխին եկած ինչ-որ «պատմությունը», մի «պատմություն», որ որևէ առնչություն չուներ ո՛չ գրականության և ո՛չ էլ հասարակայնության հետ[2]։ Իսկ տեղական մի թերթի՝ մոտ օրերս ունեցած ելույթը տեղական մամուլի երկու գործչի հասցեին՝ անցավ լրագրական էթիկայի և թույլատրելի պոլեմիկական ձևերի բոլոր սահմանները։ Կեղտ ու հետախուզություն,— ահա՛ նման «գրական ստեղծագործություններին» սաղական միակ անունը։

Թիֆլիսի ժուռնալիստների բարքերի վայրենացումը հասել է այն սահմանին, որից դենն այլևս անկարելի է անցնել։ Հարգելով տպագրական խոսքը, բարձր դասելով մամուլի նպատակներն ու խնդիրները մեզանում, մենք՝ ներքևում ստորագրողներս ջերմորեն բողոքում ենք «սրբազան խոսքն» այդքան նողկալի կերպով օգտագործելու դեմ, գաղափարների խարդախման կամ հրապարակային անար-

դանքի, իրենց հակառակորդների ընտանեական և մասնավոր կյանքը մամուլի էջերում լկտի և անբարեխիղճ քննարկման առարկա դարձնելու դեմ, մենք դիմում ենք տեղական բոլոր ժուռնալիստներին, «Թիֆլ. ժուռնալ. Ընկ.» և առհասարակ մամուլի գործիչներին և կոչ ենք անում՝ վերջ տալ այդ գարշահոտ խոցը, որ թունավորում է լրագրական աշխարհի առանց այն էլ ծանր ու հեղձուկ օդը։

«Новая Речь»-ի խմբագրություն և աշխատակիցներ։
Թիֆլիս, ապրիլի 30.

«Новая Речь» № 96,
մայիսի 1, 1910 թ.

ԹԻՖԼԻՍԻ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻՆ ՈՒՂՂԱԾ ՄԵՐ ԴԻՄՈՒՄԻ ԱՌԹԻՎ

Ես նոր, թարմ մարդ եմ լայն հասարակության կարիքները բավարարող՝ Թիֆլիսի ամենօրյա ժուռնալիստիկայի մեջ։

Այն աուդիտորիան, որի հետ ինձ առաջ վիճակված էր մամուլի միջոցով խոսել՝ բոլորովին ուրիշ էր.— նրա աշխարհայացքը, կյանքը և կենցաղը զարմանալիորեն տարբերվում են լայն հասարակությունից, «կուլտուր-բուրժուական հասարակությունից»։ Այժմ, երբ որոշ հանգամանքների բերումով մամուլի այդ հատվածը հարկադրվել է լռելու, ինձ թվում էր, թե անպարտիական, ընդհանուր-դեմոկրատական մամուլի էջերում, այնուամենայնիվ, հնարավոր կլինի ծառայել այն ընդհանուր նպատակներին, որոնք միավորում են մեր ինտելիգենտ հասարակության առաջավոր տարրերին թեկուզ հենց ամենամերձավոր նպատակների ու խնդիրների հողի վրա։

Ինձ թվում էր, թե այսքան դժվար ժամանակներում, երբ շնչելն այնքա՞ն ծանր է դարձել ոչ միայն ֆիզիկական, այլև, որն առավել տխուր է, հոգևոր ռեակցիայի մթնոլորտում,— բոլոր քիչ թե շատ ազնվաբար մտածող մարդիկ պետք է իրենց բոլոր ջանքերն ուղղեն դեպի մեր հասարակական կյանքի «մեռյալ կետի» հաղթահարումը։ Եվ ես համարձակ կերպով գրիչ վերցրի ձեռքս և ասացի ինքս ինձ.— կան հարցեր, որոնց մասին կարելի է գրել՝ կոմպրոմիս չանելով սեփական խղճի և համոզմունքների հետ և, ուժերի ու հնարավորությունների չափով, պարզաբանել «ծա-

բավիններին և քաղցածներին» մոտավոր ապագայի ուղիներն ու հնարավորությունը։

Լինում են մոմենտներ,— ասում էի ինքս ինձ,— երբ առույգ խոսքը մեծ օգուտ է բերում հասարակությանը և նրա ուժերը խելացի կերպով զարթեցնելու իմաստով։

Ահա թե ինչով էի զբաղվում ես, մտնելով Թիֆլիսի «ընդհանուր մամուլի» ժուռնալիստների շարքերը։

Բայց ի՞նչ դատ ես այստեղ։

Ոհմակ, դղվրատց, իրար քիթ ու պռունկ ջարդել և կեղտ, որ ամեն օր դուրս է թափվում լրագրերի էջերից։

Մեր մամուլը չի վիճում ուղիների և հեռանկարների մասին, հասարակական եռանդի բարձրացման եղանակների և բուն նպատակների մասին, այլ զբաղվում է անձնական հալածանքներով, ամենատանջոթ, ամենալկոտ հայհոյանքով և նույնիսկ, ասոթ է այդ ասելը, սպեցիֆիկ բուրմունք ունեցող հետաքրքրությամբ։

Եվ մամուլի այդ բոլոր օրգանները, որքան էլ դա տարօրինակ չինի, պրոգրեսիվ և նույնիսկ դեմոկրատիկ բանակի շարքին են դասում իրենց։

Եթե Պուրիշկևիչը դումայական ամբիոնից վիրավորում է կնոջ պատիվը, մենք բոլորս էլ վրդովվում ենք, վրդովվում են նաև Թիֆլիսի ժուռնալիստները և շանթ ու կրակ են տեղում բնաարաբիական պետական սկանդալիստի գլխին, բայց հենց նույն այդ ժուռնալիստներն էլ կարող են երկար ժամանակ և մի առանձին հաճույքով ու վայելքով ուռցնել երկու տիկինների հետ պատահած և զուտ ինտիմ բնույթ ունեցող մի պատմություն, որպեսզի այդպիսով իրենց հաշիվները մաքրեն այն թերթի խմբագրի հետ, որի աշխատակիցն ազգակցական մոտիկ հարաբերություններ ունի այդ տիկիններից մեկի հետ։

Եթե սեհարյուրակային որևէ թերթ զբաղվում է հետաքրքրությամբ ու մասնությամբ, մենք վրդովվում և վշտանում ենք, թե որքա՞ն ընկել է, ո՞ր աստիճան անկման են հասցրել մամուլի խոսքը պարոնայք սոյուզնիկները, «գրա-

կան» պրիոմների որպիսի՞ ստորության և սանձարձակության են հասել նրանք։ Մեզ հետ միասին իրենց զայրույթն են արտահայտում նաև հրապարակայնության Թիֆլիսի սպասավորները։ Բայց հենց նույն այդ պարոնները տեղական օրգանի էջերում մատնություններ են տպագրում իրենց գրական հակառակորդների դեմ, քաջ գիտենալով, որ այդ «կամավոր» հաղորդագրությունները կարող են շատ ռեալ հետևանքներ ունենալ հակառակորդի համար՝ նյութական վնասի տեսակետից։

Եթե «Ռուս ժողովրդի միության» պանդոկի պարոններն «անհաճելի մարդկանց» հետ իրենց հաշիվները մաքրում են ռետինե մտրակների, բռնցքամարտի միջոցով, մենք բոլորս էլ խորապես վիրավորվում ենք և բավականաչափ խոսքեր չենք գտնում մեր զայրույթն արտահայտելու համար մարդկային անձի դեմ կատարվող այդ խուլիգանական պատաստանի առթիվ։ Վիրավորվում են նաև Թիֆլիսի ժուռնալիստները։ Սակայն դա նրանց չի խանգարում, որ տեղական մամուլի էջերում, բացահայտաբար և կոտրատվելով ու կոկետություն անելով, նրանք քարոզեն «բռնցքային արգումենտացիա» և նույնիսկ իրականում կենսագործեն իրենց քարոզը, խոսքը գործի վերածեն։

Ակամայից հարց է ծագում։

Էլ ուրեմն, ինչո՞վ ենք դուք, պարոններ, տարբերվում Պուրիշկևիչներից և Դուբրովիններից, Սաշկա Կոսիխներից և Պոլոմնյովներից[63]։ Թե՞ միգուցե երկու տարբեր չափանիշներ գոյություն ունեն ձեզ համար և նրանց համար։ Կամ գուցե այն, ինչ որ թույլատրելի է ձեզ և չի դցում ձեր վարկը, որպես հասարակական գործիչների, բացարձակորեն ամոթալի և անթույլատրելի է ուրիշների՞ համար։

Թերևս ձեր հետապնդած նպատակնե՞ր։

Սակայն դեռևս Լասսալն է ասել.— «Մի՛ խոսիր միայն նպատակի մասին, խոսիր նաև այդ նպատակին հասնելու միջոցների մասին, որովհետև դրանք սերտորեն կապված են

իրար հետ, և որ միջոցների փոփոխությամբ փոխվում է նաև նպատակը»։

Կարծես թե բոլորի համար էլ հասկանալի է այն պարզ ճշմարտությունը, որ բարձր նպատակը չի՛ կարող համատեղվել այդ նպատակին հասնելու կեղտոտ միջոցների հետ։ Եվ, վերջապես, մի՞թե այս անտանելի բանակռվի, դրական այս խայտառակ սուլտպարի մեջ էլա որևէ նպատակ, կա՛ դեթ մի գոռշ արժողությամբ հասարակական իմաստ ու օգուտ։

Ինձ թվում էր, որ Թիֆլիսի մամուլի այս անհանդուրժելի դրությանը վերջ պիտի դնել, որ շարունակել այսուհետև էլ ապրել ու գործել կեղտոտ բամբասանքներով վարակված և անձնական հաշիվները կեղտոտ միջոցներով մաքրելու այս մթնոլորտում — հավասարազոր է մամուլի նշանակությունը մեղանում վերջնականապես ոչնչացնելուն, իսկ մենք շատ թանկ պիտի գնահատենք նրա նշանակությունը, մանավանդ այժմ, երբ այնքան կարևոր և այնքան անհրաժեշտ է ներգործել հասարակության վրա բոլոր մատչելի միջոցներով,— և լրագիրը դրա լավագույն միջոցներից մեկն է։

Ահա թե ինչ նկատառումներից էի ելնում ես, երբ գրեցի Թիֆլիսի ժուռնալիստներին ուղղված իմ այն նամակը, որի տակ այնքա՞ն սիրով ստորագրեցին «Новая Речь»-ի թե՛ խմբագրությունը և թե՛ աշխատակիցները։ Իմ նամակով ես դիմում էի ոչ թե խաչատուրովներին[64], ոչ թե բռունցքի պայծառափայլ իդեոլոգին՝ իր Հուսեյնով[65] հանդերձ, նրանք ինձ համար վաղուց արդեն թաղված մարդիկ են, այլ լրագրական ուրիշ աշխատողների, որոնք ոչինչ, ընդհանուր ոչինչ չունեն բրետտերության[66] հետ դրականության մեջ, ո՛չ էլ դուքանչիության հետ, այլ սոսկ նյութական անիծյալ դրության պատճառով հարկադրված են աշխատել մամուլի օրգան անունը կրող ձեռնարկություններում, այդ պարոնների համար։

Ես կարծում էի, ես հաստատ հույս ունեի նրանց կողմից արձագանք գտնելու կեղտի այն վակխանալիային վերջ

տալու իմ կոչին, որ անբարոյացնում է նաև մեզ՝ լրագրական աշխատողներիս և որ էլ ավելի կարևոր ու վտանգավոր է ընթերցող աուդիտորիային։

Բայց ես սխալվեցի։ Ռուսերեն լեզվով հրատարակվող տեղական երկու թերթերը ժուռնալիստների մտքին ու սրտին ուղղած այդ կոչն ընդունեցին ծաղրանքով, ցինիկ կատակներով և աղբաջրի նոր տակառներով[67]։

Ի՛նչ արած, մարդկանց հատուկ է սխալվել և սխալների վրա մենք սովորում ենք։ Մի բան ես այժմ հաստատուն կերպով յուրացրել եմ՝ այն, որ Թիֆլիսի մամուլի օրգանների մեծամասնության մեջ չկան բառիս նույնիսկ պարզ քաղքենիական իմաստով, կարգին մարդիկ։ Թերթերից մեկի գլուխ կանգնած է մի պարոն, որին Պ. Գելեյշվիլին մեղադրեց նրա կատարած անվայել արարքների համար Բաքվի վրացական դաղութից, հասարակական դատավճռով, վտարվելու մեջ[68], և այդ «հասարակական գործիչը» լռելյայն կուլ տվեց այդ մեղադրանքը, դատի չտվեց ամբաստանողին, թեպետ և վերջինս հենց ինքը բացորոշ կերպով դատ էր պահանջում և կանչում, համառ կերպով կանչում էր նրան այնտեղ։

Այդ օրինակ ամբաստանությունից հետո, որը նեռվել է ո՛չ թե մութ անկյունից, ո՛չ թե մութ ակնարկներով, այլ հրապարակով, թե՛ մեղադրողի և թե՛ մեղադրվողի լրիվ ազգանունները հիշատակելով,— աշխատել նման պարոնի հետ միևնույն թերթում, այդ նշանակում է դիտակցորեն դառնալ համագործակից նրա արարքներին և դրանք քողարկող, նշանակում է այնպիսի հարաբերությունների մեջ լինել, ինչպիսին ունենում է ստրուկ-ծառան իր տիրոջ հանդեպ,— մի բան, ինչի համար դեռ հանդդնություն ունեն ուրիշներին մեղադրելու «պանծալի երամից» ելած «քաջերը», բռունցքի ասպետները։

Եղբայրք Խաչատուրովներ.... բայց ի՞նչ գրես նրանց մասին... Նրանք իրենց օրգանում միայն երկու-երեք տող հատկացրին այդ դիմումին, ճգնելով հեգնական խոսքեր

ասել «Новая Речь»-ի հասցեին, բայց փոխարենը, հենց այդտեղ էլ, մի հսկայական հոդված են նվիրել ռեկլամիստ «Նապոլեոնին», որովհետև պ. պ. Խաչատուրովների ինչ գործն է ժուռնալիստական, գաղափարական ծառայությունը[69]։ Նրանց հարկավոր են հայտարարություններ, նրանք հենց թերթն էլ հրատարակում են հայտարարությունների համար, իսկ մնացածը— սոսկ համեմունք է։

Ա՛հ, խեղճ ու ողորմելի Մ. Յակովլև, որը պատվերով հոդված է գրում ուրիշ թերթի հայտարարությունների բաժնում աշխատող մրցակցի դեմ, երբ դեռ ինքն էլ չի սովորել գրել գրագիտ, գրական իմաստով։ Եվ ինչի՞ համար է նա այդպես կաշվից դուրս գալիս։ Մի՞թե «Մուտոն» ռեկլամային վեպը այդքան վախեցրել է «հդր. Խաչատուրովներ և Ընկ.» առևտրական տան «հրապարակախոսներին»։ Մի՞թե դա սպառնում է նրանց նյութական բարեկեցությունը, նրանց գաղափարական բագաժին։

Ա՛հ, պ. Յակովլև, վաղո՞ւց է արդյոք, ինչ դուք սկսել եք հոգալ մամուլի մաքրության և անկախության մասին, երկյուղ հայտնել հրապարակախոսական մաքի աղատ թռիչքի համար։

«Հայտարարութենական» փոքրիկ «Նապոլեոնը» ձեզ վախեցրել է, ըստ երևույթին, որպես իսկական Նապոլեոն, և դուք էլ դողալով ձեր խղճուկ հինգ կոպեկանոցի համար և ջերմորեն ցանկանալով հաճոյանալ ձեր Կիտ Կիտիչներին[70], սկսել եք հայհոյանքներ տեղալ և խուլիգան եք անվանում այն խեղճ մարդուն, որը հանդգնել է հանցափորձ կատարել Խաչատուրովյան կայքի վրա և իր օրվա հացը վաստակել հայտարարություններ հավաքելով։

Ա՛հ, դուք, անմեղ և անարատ Մ. Յակովլև, բարձրացրեք ձեր հայացքը, և դուք ռեկլամ կտեսնեք հենց ձեր ազնիվ զայրույթի գոհարների կողքին, հենց տեքստում, ոչ թե «գծի» տակ, այլ «գծի» վերևում։

Բայց ձեր ամբողջ զայրույթը միանգամայն հասկանալի է,— «Մուտոնը» 4-րդ էջում, հայտարարությունների

բաժնում իսկապես որ կարող է լուրջ կոնկուրենցիա դառնալ «Тифл. Листок»-ի համար՝ նրա սիրեցյալ Սկիֆներով և Մ. Յակովլևներով հանդերձ։

Ահա՛ թե ո՛ւմ հետ է վիճակված գործ ունենալ, ահա թե՛ ում էի դիմել ես լրագրական աշխարհի օգը ախտահանելու կոչով։

Ես ներողություն եմ խնդրում մեր թերթի իմ կոլեգաներից, որ մոլորության մեջ եմ գցել նրանց, որ համոզում էի նրանց, թե Թիֆլիսի ժուռնալիստների միջավայրում կան մարդիկ, որոնք ճնշվում են ստեղծված ծանր դրությունից, երբ գաղափարական աշխատանքն ու բանավեճը փոխարինված են գինետնային ոճերով և «Ռուս ժողովրդի միության» թեյատան ժարգոնով։

Կրկնում եմ,—ես իմ ակնկալություններում դաժանորեն հիասթափվեցի։

Այնուամենայնիվ, թե՛ ես և թե՛ նրանք, ովքեր ստորագրել էին «Բաց նամակը Թիֆլիսի ժուռնալիստներին», կատարել ենք մեր պարտքը։ Թո՛ղ մեզ դատի ընթերցողը, թո՛ղ իր խոսքն ասի հասարակական կարծիքը։

«Новая Речь» № 98,
մայիսի 4, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ՆՈՐ ՏԱՐՎԱ ԱՌԹԻՎ

Ես երբեք չեմ գրել պատվերով, սակայն այս անգամ իմ աշխատանքի ընկերները կտրականապես պահանջում են.

— Հոդված տվեք նոր տարվա բովանդակությամբ։

Եվ ահա, ընթերցող, ես նստել ու մտածում, տանջվում, շարչարվում եմ և ոչ մի կերպ չեմ գտնում՝ ոչ համապատասխան սյուժե, ոչ էլ հարմար տոն այսպիսի մեծահանդես օրվա համար։

Իսկ տվյալ դեպքին ամենից շատ է սազական հայտնի այն դարձվածքը թե՝

Տոնը երաժշտություն է. ստեղծում։

Իսկապես, ի՞նչ գրել և ինչպե՞ս գրել։

Մեր ամբողջ թե՛ հասարակական և թե՛ անձնական կյանքն այնքա՞ն է միապաղաղ, գորշ և դժգույն, այնքա՞ն է տխուր ու տաղտկալի, այնքա՞ն է անլուսաշող։

Կյանքի ներկատախտակի վրա չկան վառ գույներ գեղեցիկ պատկեր նկարելու համար, չկան մեր կյանքում և զրնգուն հնչյուններ՝ լուսավոր մի հիմն ստեղծելու համար։

Մեր օրերում ինչ-որ առանձնահատուկ ուժով է զգացվում այն պայմանականությունը, որ գոյություն ունի՝ անվերջ ու անսկիզբ ժամանակը օրերի, ամիսների ու տարիների բաժանելու մեջ...

Թող Սիտինի[12] օրացույցում 1911 թվականը տպված լինի սև, հաստ տառերով, իսկ Նոր տարվա առաջին օրը՝ կարմիր գույնով։

Ի՞նչ է փոխվում դրանով։

Հաշվի չառնելով երևակայական այդ սահմանները, դեպի նոր տարին են սողոսկելու թե՛ անցյալ տարվա և թե՛

հավերժության մեջ չքացած շատ ուրիշ անցյալ տարիների ողջ խելահեղությունն ու ամբողջ սարսափը...

Էլ ինչո՞ւ ստել, էլ ինչո՞ւ հույսեր առաջացնել, ինչո՞ւ կապել դրանք ինչ-որ մի ցնորք ու պատրանքի հետ, որ կոչվում է Նոր տարի։

Թող այս դիշեր և այսօր «հրճվողների և պարապ շաղակրատների»[73] բանակում առատորեն հոսի շամպայնը և հնչեն դավաթների ուրախ զնգոցը։

Նրանք ոչինչ չունեն տխրելու, ոչինչ չունեն տանջվելու...

Նրանց համար դա մի ավելորդ պատրվակ է՝ մի անգամ ևս բատ ածենայնի դոհացնելու իրենց ֆիզիոլոգիան։

Սակայն նրանք, որոնց ամեն բանից զրկել է կյանքը, որոնց տեղ չի տրված կյանքի խնճույքում, որոնց գլխին կարկուտի նման են տեղում անողոք պատմության բոլոր հարվածները, — նրանք ի՞նչ ունեն ուրախանալու, ի՞նչ են սպասելու և ինչի՞ վրա են հույսեր դնելու։

Նոր տարին նրանց կբերի նոր փորձություններ, նոր տանջանքներ, բայց դրա հետ միասին կտա և նոր դասեր, կյանքի նոր փորձ և, հետևաբար, նաև նրանց ինքնագիտակցության ավելի բարձր աստիճան։

«Так тяжкий млат, дробя стекло, кует булат»[74].

«Листок-Копейка» № 1,
հունվարի 1, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլդին

ԱԿՆԱՐԿՆԵՐ

Թիֆլիսի ժուռնալիստների ընկերության երկրորդ անգամ հրավիրված ժողովը դարձյալ չկայացավ։ Շատերը բացատրում են ժողով հրավիրելու այս անհաջողությունները նրանով, թե ընկերության ղեկավարները չենցանկանում կանգնել դեմ հանդիման այն հարցին, որ անխուսափելիորեն ծագելու է ժուռնալիստների ժողովում, այն է— Ս. Կ. Միխայլովի, Ք. Գ. Խաչատուրովի հարցին, «տիրոջ ու ծառայի» հարցին լրագրական աշխարհում[15]։

Իսկ դա հանդելու է այդ հասարակության «գործիչներից» շատերի համար «տհաճելի» խոսակցությունների, դա մերկացնելու է Թիֆլիսի այն ժուռնալիստների բարոյական դեմքը, որոնք այժմ արշավում են «Т. Л.»-ի էջերում՝ Նորդ, Զիգզագ, Ժիլ-Բլազ և այլ կեղծանուններով։

Շատ հասկանալի է նրանց վախը, նրանց ցանկությունը՝ մոռացության մատնել «Միխայլովյան ինցիդենտը», շատ հասկանալի է նրանց հույսը, թե ժամանակն այդ ամենը կքողարկի։

Ենթադրենք։

Սակայն դրա հետ միասին՝ դա նշան է նաև ժուռնալիստների ընկերության քայքայման և մահվան։

Էհ, թող գնա կորչի։

Անփառունակ ապրեց այդ ընկերությունը, անփառունակ էլ կործանվում է և ոչ ոք մի բարի խոսք չի ասի նրա հիշատակին։

«Листок-Копейка» № 56,
մարտի 9, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ԹԱՏՐՈՆԱԿԱՆ ՌԵՑԵՆԶԻԱՆԵՐ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ ՄԱՍԻՆ

ՌՈՒՍԱԿԱՆ ԴՐԱՄԱ

(ԱՐՏԻՍՏԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԹԱՏՐՈՆ)

«ԿԱՐՄԻՐ ԾԱՂԻԿԸ» ԵՎ «ՍԻՐՈ ՄԹՆՇԱՂԸ»

Անունները դրամիչ են։ Բայց ամեն պապղուն բան ոսկի չէ...

*«Կարմիր ծաղիկը»՝ Շչեգլովի[76] այդ դրամատիկական էյոյուղը, շատ թույլ գործ է, որ շաբլոն դրությունների և երկար գործածության հետևանքով մաշված մտքերից դենը չի գնում։ Անտառում, որտեղ հոգեկան հիվանդների սանատորիան է գտնվում, ձանձրույթ ու կարոտ է ապրում բժշկի կին Զեռնովան՝ Նադեժդա Մոդեստովնան (Զարովա). և ահա, երբ նա նորից մենակ է մնում և երաժշտության հնչյունների միջոցով իր վիշտն ու հոգու տառապանքներն է դեղում, վազելով սենյակ է մտնում իրեն «չարշարողների» հալածանքներից փրկություն փնտրող անծանոթը (Մուրոմցև), որին դրավում է այդ երաժշտությունը։ Իր հանկարծակի երևալուց զարմացած ու վախեցած կնոջը նա հրապուրում է իր տարօրինակ, ցնորական դեղումներով, որոնք դրա հետ մեկտեղ լի են մարդկության համար կրած տառապանքով, վշտով ու չթափած արցունքի և անմեղ թափված արյան դեմ ուղղված բողոքով։ Բայց սպասավորների հետ միասին հայտնվում է Նադեժդա Մոդեստովնայի ամուսինը և անսպասելի կերպով բռնում նրան բուռն խանդավառության պահին։ Անծանոթը հիվանդանոցից փախած հոգեկան հիվանդ է։ Ահա բոլորը։ Կրկնում եմ՝ թեման թույլ է մշակված, տրաֆարետային պրիոմներով... Դերասանները որքան կարողացան իրենց խաղով բովանդակություն տվին «էյոյուղին»։ Մուրոմցևն անծանոթի դերում շատ լավ էր և, որ

հաճելի է նշել, ոչ մի անգամ ավելորդ դրամատիզմի մեջ չընկավ։ Զարովան (Նադեժդա Մոդեստովնա) զարմանալի լավ կարողանում էր «լսել», իսկ դա դերասանի համար մեծ արժանիք է։

...«Սիրո մթնշաղը»՝ իտալական «հայտնի» դրամատուրգ Բրակկոյի այդ պիեսը— գտնվում է ուրախ կոմեդիայի և «սաբուրովյան»[77] ռեպերտուարի ֆարսի սահմանագծի վրա։ Այս երկի բովանդակությունը մենք չենք հաղորդի— այնքան անբովանդակ է այն։ Մարդ ցավելով էր նայում, թե ինչպես դերակատարներն իրենց խաղով փրկում են պիեսը կատարյալ տապալումից։ Իսկ խաղը լավ էր։ Մանավանդ որ այդ կոմեդիայում կան այնքան ռիսկոտ դրություններ, որոնք կարող են հարկադրել անցնելու դռեհիկ ֆարսի տոնի։ Դերակատարները ոչ մի անգամ չանցան այդ սահմանը և դրանով ցույց տվին իրենց ինտելիգենտությունն այս բառի լավագույն իմաստով։ Առանձնապես լավ, նույնիսկ հոյակապ էր տիկ. Ադրինցևան ոսկրոտ ծղոտե այրիմարկիզուհու դերում, որին շրջապատում են նրա բարեհաճությունը փնտրող երկրպագուները և որը վերջիվերջո իր «պատիվը» պահպանում է, որովհետև չափազանց հիմար ու դռեհիկ են նրա երկրպագուները— սկսած ձիամոլ կոմսից և վերջացրած սպիրիտուալիստ ու բուսակեր Ջուլիանո Դ՝ Ալմայոլի։

Պ. Նիկուլինը ցանկանում է, ձգտում է թատրոնի դեմոկրատականացման, դրամայի «վերածնունդին» մեզ մոտ. Թիֆլիսում, բայց այդպիսի ռեպերտուարով նրա առաջադրած համակրելի նպատակին չի կարելի հասնել։

«Курьер-Копейка» № 145,
սեպտեմբերի 30, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ս.

«ՍԵՐ ԵՎ ԽԱՐԴԱՎԱՆՔ»

Ավելի քան հարյուր տարի սրանից առաջ մեծ Շիլլերի գրած «մեղշանական ողբերգությունը» մեր օրերում էլ խորապես հուզում է և ցնցում ժամանակակից հանդիսատեսի սիրտը։

Եվ մեծ վարպետի, «մարդկության աղնիվ փաստաբանի»[78] երկի առջև նսեմանում են ժամանակակից դրողների տաղտկալի ստեղծագործությունները։

Մարդկային սրտի որպիսի՜ խորունկ հասկացողություն, կրքեր պատկերելու որպիսի՜ ուժ, երկու աշխարհների, երկու հակադիր աշխարհայացքների՝ ֆրանսիական մեծ ռևոլուցիայի հարվածների տակ իր դարն ապրող «հին ռեժիմի» և իր ուժն զգացած քաղաքային բյուրգերության, մեղշանականության ընդհարման որպիսի՜ ցնցող պատկեր։ Աղքատիկ զգեստի մեջ պարուրված մտքի և հոգու ազնվությունը բախվում է «կյանքի» երևելի «աղնվազարմ տերերի» նենդությանը, ագահությանը, ստոր կրքերին, հոգևոր և մտավոր դատարկությանը։ Բեմից հնչում էին «հին» խոսքեր, կարծես թե ամենքին հայտնի ճշմարտություններ, բայց չգիտես ինչու նրանք մեր սրտերում այնուամենայնիվ ջերմ արձագանք էին գտնում և մենք ծափահարությունների որոտով էինք ընդունում դրանք։ Որովհետև մեր օրերում էլ, թեպետև սոցիալական աստիճանում փոխվել են գործող անձերը, բայց և այնպես հաճախ, շատ հաճախ ծագումը, փողը մտքի և զգացմունքների դատարկության ու աղքատության հետ մեկտեղ հաղթող են հանդիսանում «մտքի ու սրտի արիստոկրատիայի» հանդեպ։ Չէ՞ որ մեր օրերում էլ հարկ է լինում ջերմորեն պայքարելու «մարդու» համար,

«մարդկային անձնավորությունը» պաշտպանելու՝ անարդանքից, հասարակական անարդարությունից և ճնշումից։

Երկկ թատրոնում անցկացրած ժամերն՝ աննկատելի թռան և հասարակությունը հեռացավ լիովին բավարարված ինչպես պիեսով, այնպես էլ կատարումով։ Իսկ կատարումը լավ էր, տեղ-տեղ նույնիսկ հոյակապ։ Առաջնության դափնին պետք է տալ պ. Մուրոմցևին (Ֆերդինանդ) և տ. Գոլոդկովային (Լուիզա Միլլեր)։ Նրանք երկուսն էլ խաղում էին շատ ու շատ լավ, հանդիսատեսներին հափշտակելով իրենց դեղեցիկ սիրով, իրենց տանջանքներով, իրենց մաքրությամբ և մարի ու սրտի վեհությամբ։

Մնացած դերակատարները նույնպես լավ էին։ Առանձնապես պետք է նշել Ագրինցևային (Լեդի Մալֆորդ), Նելիդովին (Միլլեր) և Պոկրովսկուն (Հոֆմարշ. ֆոն. Կալդ)։

Հասարակությունը շատ էր։ Թող ավելի շատ լինեն այդպիսի ներկայացումները, և դրամայի «վերածնության» գործը մեզանում, կարծում ենք, հաջող կընթանա, եթե միայն Թիֆլիսում կա ինտելիգենցիա, որը սիրում և գնահատում է լավ դրաման, լավ կատարումով։

«Курьер-Копсіка» № 147,
հոկտեմբերի 2, 1910 թ.։
«Յտորագրությունը՝ Ս. Ս.

«ԱՐԿԱԶԱՆՈՎՆԵՐԸ»— ԴՐԱՄԱ ԻՇԽ· ՍՈՒՄԲԱՏՈՎԻ։

Ֆրանսիական մի հին մելոդրամ՝ ռուսական ձևով փոփոխած։ Մի կողմից բարեծնունդյուն, աղնվություն, առաքինություններ, արտասովոր բարեկամություն և մտերմություն, որ տասնյակ հաղարավորներ է զոհում հանուն իդեալական զգացմունքների, մյուս կողմից՝ խաբեություն, չարագործություն, համարյա թե սպանություն, թեթևամտություն, թե՛ սիրո և թե՛ պատվի ծախսածություն իր անմաքուր նպատակներին հասնելու համար, իր ստոր կրքերը բավարարելու համար։ Իհարկե, բարեգործը հաղթում է, չարագործն իր նպատակին չի հասնում, բարեգործը բանտ է գնում, աքսոր, բայց պահպանելով իր անարատ մաքրությունը։

«Ամեն ինչ կորած է, բացի պատվից»։

Եվ այդ ամենը ճիշտ չէ, անբնական է, չի համապատասխանում մեր հասարակության սովորական մարդկանց, այժմյան ընտանիքի ժամանակակից բարքերին և ժամանակակից հոգեբանությանը։ Ժամանակակից ծնողները կհամաձայնեին, որ իրենց աղջիկն ամուսնանար հիմարի, ստորի, խեղկատակի հետ, միայն թե նա լիներ «լիողի պարկ», այն էլ այնպիսի հանգամանքներում, որոնց մեջ ընկել էր Արկազանովների ընտանիքը, այսինքն՝ լիակատար սնանկության, աղքատության և խայտառակման նախօրյակին. «մեր օրերի աղջիկը» ուրախ կյանքի համար ամեն ինչի համաձայն կլիներ, այն էլ եթե հնարավոր լիներ վայրկենապես ազատվել զզվեցրած ամուսնուց և ընկնել հեքիաթային հարուստ և իրեն դուր եկող պարոնի գիրկը, որն այս ամբողջ ամուսնությունը

հնարում է իր նվիրական նպատակին հասնելու՝ նրան տիրանալու համար։ Ո՛չ, ուղղակի ամենաանհաջող մի ստեղծագործություն այն բոլոր երկերից, որոնք դուրս են գալիս «դրամատիկական գործերի վարպետ» իշխ. Սոմբատովի արհեստանոցից։ Հեղինակը բեմը լավ գիտե, ինքը տաղանդավոր դերասան է, դրա համար էլ նրա պիեսում շատ էֆեկտավոր, արկածային մոմենտներ կան՝ ոչ պահանջկոտ հանդիսատեսի վրա տպավորություն գործելու, դերակատարին «խաղ» ցուցաբերելու հնարավորություն տալու համար։ Բայց մենք ինչքա՞ն առաջ ենք գնացել գրելու նման եղանակներից։ Ինչքա՞ն հեռու ենք գնացել բեմի վրայի այդպիսի «արտաքին» խաղն ըմբռնելուց։ Մենք՝ ժամանակակից հանդիսատեսներս սիրում ու գնահատում ենք ներքին ապրումները, որ դրսևորվում են շարժուձևով, դիմախաղով, ձայնով, աչքերով, տրամադրության այն հոգեբանական նուրբ կապը, որ պետք է ստեղծվի բեմի վրա և իրեն հետ կապի հանդիսասրահը։

Պ. Նիկուլինը մի քիչ տարօրինակ ռեպերտուար ունի՝ Շիլլերից դեպի Սոմբատովը, Լ. Անդրեևից դեպի Բրակկո։ Թռիչքները հսկայական են։ Այնինչ նա լավ ուժեր ունի, որոնք հարմարում են մեր և արտասահմանյան ռեպերտուարների լավագույն երկերը բեմադրելու համար։ Խաղը միջակ էր։ Լավ էր պ. Նիկուլինը շարադրած Նավարդինի դերում, որքան որ կարելի է այդ դերում լավ լինել։ Տիկ. Զարովա—Օլգան որքան կարող էր, կյանք ներշնչեց իր անգույն դերին։ Պ. Պոկրովսկի—Ֆուֆինը շատ լավ կլիներ, եթե մի քիչ շարժի մեջ չընկներ։

Մյուս բոլոր դերակատարները վայելուչ էին։

«Курьер-Копейка» № 148,
Հոկտեմբերի 3, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ա.

«ԴԱՌԴԵԱՄՈՒՍ»—Լ. ԱՆԴՐԵԵՎԻ

Երեկ Նիկուլինի մոտ երրորդ անգամ խաղացվեց Լ. Անդրեևի նոր պիեսը։ Բուն պիեսին և նրա քննադատական վերլուծությանը մենք կաշխատենք մոտ օրերս մի առանձին հոդված նվիրել, իսկ այժմ միայն մի քանի խոսք կասենք կատարման և Ռիֆլիսի հասարակության մասին։

Կատարումը շատ լավ էր, համերաշխ, ոչ մի տեղ կեղծ հնչյուն չէր սպրդում, բոլոր մասնակցողները, երևում է, խաղավարժված էին և ամբողջ ներկայացումն անցավ անապատքաք, անխափան։ Ինչ առանձնապես դուրեկան էր այդ երեկո, այն է, որ չէր լսվում հուշարարի բարձր ու ձանձրալի շշնջյունը։ Մուրոմցևը հին ուսանողի դերում, որը ջանում է վերադառնալ դեպի երիտասարդությունը, խորաթափանցորեն լավ էր և խիստ կամեցող, բայց ցանկացածին հասնել չկարողացող մարդու ողբերգությունը նրա կատարումով մեզ այնպե՞ս հասկանալի էր։ Լիխմարսկի-Բլոխինը շատ լավ էր կակազ ուսանողի դերում։ Գրիմը շատ հաջող էր և առհասարակ նրա ամբողջ խաղը բնական էր, առանց շարժի։

«Մեր կյանքի օրերից»[50] հին ծանոթ Օնոֆրի Նիկոլաևիչը հաջող մեկնաբանող էր դտել հանձին պ. Նելիդովի։ Տենոր-Գրինյովը թույլ էր, թեպետ, դուցե, նրա խաղի թերությունները նրանից էին առաջանում, որ արդեն չափազանց անգույն ու անհեթեթ է այդ գործող անձը Լ. Անդրեևի պիեսում։

Դոնա Շտերն-Զարովան ըստ սովորականի լավ էր, բայց մեկը, որ առանձնապես լավ էր, այդ Լիլի-Գոլոդկովան էր։

Սքանչելի, մաքուր դաշտածաղիկ, մի մանկիկ «հիմարուկ», միամիտ և սիրող սրտիկով։

Վիրավորական լինելու շատ քիչ էր հասարակությունը։ Ինչո՞վ բացատրել այդ։ Մի՞թե Լ. Անդրեևն այդ կատարումով ուշադրության արժանի չէ։ Թող ասեն, թե մեր տաղանդավոր գրողի այդ երկը թույլ է, անհաջող, բայց մի՞թե մեր ինտելիգենցիան չի զգում իր պարտականությունը անձամբ տեսնել, լսել, մտածել այնպիսի մի մեծության մտքի մասին, խորհել նրա ստեղծագործության մասին, ինչպիսին Լ. Անդրեևն է։ Մանավանդ, որ Անդրեևի այդ երկը հարուստ նյութ է տալիս թե՛ մտքի և թե՛ սրտի համար։ Այո, մեր քաղաքը և նրա ադոնիսականները սիրում են շաղակրատել իրենց ինտելիգենտության մասին, բայց միայն շաղակրատել։

«Курьер-Копейка» № 149,
հոկտեմբերի 4, 1910 թ.
Ստորագրությունը՝ Ս. Ս.

«ԻՎԱՆՈՎ»—Ա. Պ. ՉԵԽՈՎԻ

Երեկվա ներկայացումը մեզ բոլորովին չբավարարեց։ Այնինչ մենք այդ ներկայացմանը գնում էինք մեծ սպասելիքներով։ Չեխովը պահանջում է սիրով, լուրջ վերաբերմունք դեպի իրեն, իսկ երեկ դերակատարները նույնիսկ իրենց դերերն առանձնապես լավ չգիտեին և հաճախ հուշարարի խցիկի օգնությանն էին դիմում։

Դրամայի կենտրոնական դեմքը՝ Իվանովը պ. Մուրոմցևի կատարումով չէր տալիս այն մարդու պատկերը, որը շատ բան է կամեցել, շատ, ուժից վեր է աշխատել և այդ աշխատանքից ուժասպառվել է, չի կարողացել տանել այդ անուրախ, գորշ առօրյան, ռուսական պրովինցիալ, դավառական աղքատ և անգույն կյանքի այդ խուլ պատկերը, մարդու, որ ինքն է հասկացել իր կորուստը և ինքն է ատում, արհամարհում, ծաղրում իրեն։ Մուրոմցևն «Իվանովում» նույնն էր, ինչ նախընթաց օրը Լ. Անդրեևի պիեսում, հին ուսանողի դերի մեջ։ Նույն շարժուձևը, նույն առոգանությունը, գրեթե նույն գրիմը և արցունքները, անվերջ արցունքները... Իրականությունը «խոնավություն էր տարածում»։

Մոմենտներ կային, երբ «շրջիկ ազնվություն» բժիշկ Լվովը (պ. Լիխմարսկի) թվում էր Իվանովից ավելի համակրելի, ավելի ազնիվ և ավելի լավ, այնինչ Իվանովը գաճաճ բժշկի համեմատությամբ մի սար է։ Տիկ. Գոլոդկովան (Շուրա Լեբեդևա) բոլորովին չի հասկացել իր դերը, չի հասկացել Չեխովի մտադրությունը՝ այդ խելոք, գեղեցիկ, ազնվասիրտ աղջկա մեջ դուրս բերել գործունյա բնությամբ կին-մարդու, ոչ թե կնիկ կնոջ, ոչ թե սիրականի, այլ

բարեկամի, ընկերոջ տիպը։ Տիկ. Գոլոդկովան Շուրայի մեկնաբանության մեջ մտցրել էր կոկետության տարր, և ինչքա՜ն կեղծություն կար այն հեգնական հնչյունների մեջ, երբ նա Իվանովին խորհուրդ էր տալիս նստել մեռնող կնոջ անկողնի մոտ, եթե պետք լինի մեկ տարի, տաս տարի. խնամել նրան, շրջապատել գգվանքով և ուշադրությամբ։ Չեխովի Սաշայի մոտ այդ՝ Իվանովին ուղղված լուրջ, խիստ պահանջ է, որ լիովին ներդաշնակում է նրա լուրջ բնությանը, պարտքի մասին նրա ունեցած պատկերացմանը։ Իսկ տ. Գոլոդկովայի մոտ այդ ամբողջ տեսարանն անցավ կոկետության ու հեգնանքի և իր «երկրպագուին» բորբոքելու ամպի մեջ։ Այո՛, չի հասկացել տ. Գոլոդկովան Չեխովի Սաշային։

Ուրախալի բացառություն էր տ. Զարովան, որ հուզիչ ու ազդու տալիս էր բեմի վրա խեղճ «չհուդ կնոջ» տանջանքները, որ այնպես թանկ է վճարում իր երջանկության սակավաթիվ օրերի համար։

Հասարակություն շատ-շատ կար։ Չեխովը, ակներև է, գրավում է Թիֆլիսի հասարակությանը։ Որքան կարելի է շա՜տ այդպիսի պիեսներ և հարկավոր չէ «Արկազանովներն» ու «Սիրո մթնշաղը»։

«Курьер-Копейка» № 150,
Հոկտեմբերի 5, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ա.

«ԱՆԽՈՀԵՄ ԿՈՒՅՍ»—ԱՆՐԻ ԲԱՏԱՅԼԻ[1]

Ֆրանսիական գրական խոհանոցի մի տիպիկ երկ։ Այդ պիեսի գրական արժանիքների, գաղափարի, նրա հարուցած մտքերի մասին հարկ չկա խոսելու։ Պիեսի բովանդակությունը մոտավորապես այս է. Դիանա դը Շարանսը (տ. Զարովա), մի ջահել աղջիկ, սիրահարվում է Մարսել Արմորիին (պ. Մուրոմցև) և անձնատուր է լինում նրան։ Վերջինս ամուսնացած է, և այդ հողի վրա տեղի է ունենում ամբողջ դրամատ։ Մարսելի կինը՝ Ֆաննին (տ. Ագրինսկա), չնայած ամուսնու բացահայտ դավաճանությանը և սիրած աղջկա հետ փախչելուն, այնուամենայնիվ շարունակում է խելահեղորեն սիրել իր ամուսնուն և ամբողջ ժամանակ ինքնազոհ կերպով փրկում է նրան Դիանայի վիրավորված հարազատների հալածանքներից ու վրեժից։ Վերջին գործողության մեջ ջահել աղջիկը, զարմացած՝ լքված կնոջ այդ անձնազոհ սիրուց և նրա պատրաստակամությունից՝ իրեն զոհելու սիրած մարդու համար, հրաժարվում է իր երջանկությունից և ինքնասպան է լինում։ Պիեսում մոմենտներ կային, երբ արցունքների փոխարեն հասարակության մեջ ծիծաղ էր լսվում։ Իսկապես որ ծիծաղելի էր, երբ տեսնում էիր թե ինչպես Դիանայի եղբայր Գոստոնի ատրճանակի տակ միաժամանակ և լքված կինը և սիրականը ընկնում են Մարսելի կրծքին և իրենց մարմիններով փրկում նրան, կանայք սրտերի այդ անպարտելի նվաճողին։

Ընդհանրապես միջակ էին խաղում։ Աչքի էին ընկնում և իրենց խաղով ներկայացմանը հետաքրքրականություն էին տալիս տ. Զարովան և Ագրինսկան։ Առաջինը ջահել աղջկա դերում, որ առաջին անգամն է ճանաչել սիրո ուրախու-

թյունը, իսկ երկրորդը, լքված, իր լավագույն զգացմունքներում վիրավորված, բայց և այնպես սիրող կնոջ դժվար, անբնական դերում։ Մեկը, որ բոլորովին տիրավարար էր, այդ՝ պ. Մուրոմցևն է։ Շարժուձևի միօրինակություն, նույն ձևերը, նույն ինչ որ անհողորոշ հնչյունները, թառանչները, ինչ թե Իվանովում, թե հին ուսանողի դերում։ Այնինչ այդ դիշեր նա կատարում էր Փարիզի բարձր դասի փայլուն փաստաբանի դերը։ Մերքանի խոսք տ. Տայդինի մասին։ Իշխանուհու մոր դերը նա շատ և շատ հաջող տարավ։

Մեր առջև էր բարձր դասի մի տիկին, որ կարողանում է տիրել և կառավարել իր զգացմունքները, որպեսզի չխախտի վայելչությունը, լավ տոնը։

Թատրոնը լիքն էր և հասարակությունը դերակատարներին մարձակարում էր միահամուռ ծափահարություններով։

«Курьер-Копейка» № 152,
հոկտեմբերի 7, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ս.

«ԿԱԽԱՐԴՈՒՀԻ»— Վ.Լ. ՏՐԱԽՏԵՆԲԵՐԳԻ՝

Հայատարարություններից և լրագրական հոդվածներից դատելով՝ այդ պիեսը պետք է սեղմի «մեխը» դառնար։

Բայց «մեխը» շատ անհաջող դուրս եկավ։ Տրախտենբերգը մի ժամանակ հույսեր էր ներշնչում, բայց հետո ապագորեն դրելիքը պրծավ և էլ չի կարողանում միջակ մակարդակից ավելի վեր բարձրանալ։ Նրա այդ նոր երկի մեջ էլ երևում է, որ հեղինակը ճանաչում է բեմը, կան հետաքրքրական մոմենտներ, հոդեբանական ճիշտ շտրիխներ, բայց հեղինակին ստեղծագործական ուժերը չեն բավել, որպեսզի դրանք զարգացնի և պայծառ, ցցուն, համակիչ մի բան դարձնի։ Պիեսի կենտրոնական դեմքը՝ «Կախարդուհին» (տ. Ադրինցևա) շատ հետաքրքրական ձևով է գծված, բայց վերջին գործողության մեջ հեղինակը մի անսպասելի բիծ է մտցրել այն ձևով, որ «Կախարդուհին» սկսում է տեսնել իր հարբած ամուսնու, պաշտոնաթող գեներալի «սիրո և հզորության ամբողջ խորությունը», ամուսին, որը լավ վարձատրությամբ իր անունով ծածկել էր նրա «կուսության մեղքը»։

Այդ երեկո տ. Ադրինցևան «Կախարդուհու» դերում իսկապես ծավալեց իր տաղանդը։

Այն կինը, որը դեռևս իր կյանքի արշալույսին, անձնատուր լինելով վաղ զարթնած սեռական բնազդին, «մեղքի» մեջ է ընկել, այնուհետև «ամոթը» ծածկելու համար հարկադրված է եղել ամուսնանալ, առաջին անգամ սիրել է արդեն հասուն հասակում, սիրել առաջին, մաքուր, իսկական սիրով, հանձին տաղանդավոր արտիստուհու դտավ իր երևելի մեկնաբանողը։ Ինչքան կիրք, ինչքան հիվան-

դոտ կիրք կա այդ ուժեղ, հպարտ, պրակտիկ կնոջ մեջ դեպի ջահել պատանի Պորուբովը (պ. Մուրոմցև), որն առաջ նրա մոտ ռեպետիտոր է եղել, հետո դարձել է հայտնի գրող, ինչքա՜ն երկյուղ, թե կկորցնի իր երջանկությունը։ Տիկ. Ազրինցևան այս ամենը կարողացավ տալ իր խաղով և իրոք համակում էր հանդիսատեսին։ Նրա ամենաթույլ տեղը վերջին գործողության մեջ է, մանավանդ նրա բացատրությունն ամուսնու (պ. Պոկրովսկի) հետ, այն էլ ոչ իր մեղքով, այլ այդ ամբողջ տեսարանի անհեթեթության և անսպասելիության հետևանքով։

Լավ էր պ. Պոկրովսկին «Կախարդուհու» ամուսնու դերում։ Կահավորված սենյակների տիպիկ բնակիչ. շուկեր, անպատկառ և անամոթ ստախոս էր պ. Նիկուլինը Լիսոդորցևի դերում։

Մյուս բոլոր դերերը նույնպես հաջող էին բաշխված։ Հասարակություն ավելի քիչ կար, քան «Անխոհեմ կույսի» ժամանակ։

«Курьер-Копейка» № 154,
Հոկտեմբերի 9, 1910 թ.
Ստորագրությունը՝ Ս. Ս.

«ՔԱՐԱՓԸ»,— ԳՈՆՉԱՐՈՎԻ[32]

Մի ժամանակ մեզանում ռուս աչքի ընկնող կլասիկների և առհասարակ դրողների երկերի «վերամշակումների» համաճարակ կար։ Դրանք բոլորն էլ անհաջող էին։ «Քարափը» («Обрыв»), բեմին հարմարեցնելը կարելի է համարել ամենից անհաջողը։ Ստացվել է մի տեսակ կարիկատուրային տպավորություն։ Մարկ Վոլխովը, «նիհիլիստի» տիպը, որ Գոնչարովին բոլորովին չի հաջողվել, վերամշակման մեջ կոմիկական էր և բեմի վրա երևալիս ուրախ ծիծաղ էր առաջ բերում հասարակության մեջ։

Կատարման մասին կարիք չկա խոսելու։ Այսպիսի «մակուլատուրան» դժվար է լավ խաղալ։ Տիկ. Չարովան (Վերա) որքան կարող էր, կյանք ներշնչեց այդ ուժեղ, խելոք և այն ժամանակների համար նոր աղջկա «վերամշակումով» գունազրկված կերպարին։ Խմբի նոր անդամի՝ տ. Լաբունսկայայի մասին, որը կատարում էր Մարֆենկայի դերը, առայժմ ոչինչ չենք ասի, կսպասենք ուրիշ ելույթների։

Մի դիտողություն։ Ինչո՞ւ չի պահպանվում պատմական կոլորիտը։ Բոլոր գլխավոր գործող անձերը ժամանակակից կոստյումներով էին, այն էլ վերջին մոդայի։

Հասարակությունը շատ շատ էր։

«Курьер-Копейка» № 156,
հոկտեմբերի 11, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օ.

«ՏԱՅՖՈՒՆ» — ԴՐԱՄԱ ԼԱՆԳԻԵԼԻ

«Տայֆունը» թատրոնական ռեպերտուարի աղմուկ հանած վերջին նորույթն է, որ հաջողությամբ բեմադրվում է մայրաքաղաքի թատրոններում։ Գույն այդ պիեսի հաջողությունը մասամբ նրանով էլ է բացատրվում, որ նրանում գործող անձերը ճապոնացիներ են, «ծագող արևի խորհրդավոր երկրի» որդիները, որոնք վերջերս ամբողջ աշխարհը զարմացրին իրենց հաղթանակներով, որոնք այնպիսի հաջողություններ են ցույց տալիս եվրոպական կուլտուրան յուրացնելու գործում։ Եվրոպացիների կողմից վերջին տարիներս մեծ հետաքրքրություն է ցույց տրվում դեպի ճապոնացիները և դեպի այն ամենը, ինչ ճապոնական է, բայց մեծ մասամբ «ֆելիետոնային» հետազոտություններից և տուրիստների «տպավորություններից» դենը հանրամատչելի գրականության մեջ մենք ոչինչ չենք ունեցել ճապոնացիների մասին։ Հենց դրանով են բացատրվում այս և այն կողմ թռչող շափազանցված հայացքները Ճապոնիայի մասին, ճապոնացիների մասին, նրանց հոգեբանության, բնավորության մասին և այլն։ Հիսուն միլիոնանոց ժողովրդի արտասովոր համերաշխության, նրանց հեքիաթային հայրենասիրության, հանուն ընդհանուր բարորության անձնական ամեն բան վերհորեն մոռանալու, անձնական ցանկությունների վրա պարտքի իշխելու մասին եղած խոսակցությունները,— այդ ամբողջ անմտությունները մենք հանդիպում ենք նաև Լանգիելի պիեսում, որով ինքը՝ երկը դառնում է լրագրական սովորական ֆելիետոն, դույն շատ հետաքրքրական, բայց, դրա փոխարեն, ինչպես և օրիա շարիքի մասին գրված ամեն բան՝ հանուն «մորալի» փաստերը սարսափելի

շափազանցող։ Մեզանում պարբերական մամուլում ճապոնացիների այսպիսի բնութագրեր տրվում էին մանջուրական տիրահիշատակ էպոպեայի լիկվիդացիայի ժամանակ։

Յուրաքանչյուր ժողովրդի պատմության մեջ մոմենտներ են լինում, երբ հայրենիքի հանդեպ ունեցած պարտքի զգացմունքը առաջին պլան է ելնում, երբ «հերոսականը» դերակշռում է առօրեականին։ Այդպիսի «մոմենտ» ճապոնացիներն ապրեցին վերջին պատերազմում և այստեղից էլ ծագում են բոլոր առասպելները ճապոնացիների մասին, որոհետև եվրոպացիներն արդեն ապրել-անցել և նույնիսկ մոռացել են իրենց պատմության նման էջերը։

Բայց այդ «տոնական» շիրմայի հետևը Ճապոնիայում նույն սոցիալական սրված պայքարն է տեղի ունենում, ինչպես և հին Եվրոպայում, և մարդկային ոչ մի բան օտար չէ ճապոնացիների համար, ի հարկե, իր յուրահատուկ պատմական իրադրության մեջ։

Պիեսի հեղինակը հունգարացի է, դրանով էլ մասամբ բացատրվում է «Տայֆունի» իդեան։ Հունգարացին ցանկացել է ճապոնական ժողովրդի «համերաշխությունը» հակադրել իր հայրենիքին այժմ հոշոտող «պարտիական պայքարին», ճապոնացու «կոլեկտիվիզմը», եթե կարելի է այսպես արտահայտվել, եվրոպացու «ինդիվիդուալիզմին»։

Այս բոլոր նկատառումները մի կողմ նետելով, այնուամենայնիվ, կարելի է ասել՝ պիեսում կա հետաքրքրական բախում պարտքի զգացմունքի և անձնական զգացմունքի միջև, «ընդհանուր բարօրության» ընդհարում առանձին անձնավորության երջանկության հետ։

Դժբախտաբար, կատարումը միջակ էր։ Մուրոմցևը Տոկերամոյի դերում տեղ-տեղ լավ էր, բայց ընդհանրապես նրա շարժուձևերը ու քայլվածքն ինչ-որ ճապոնական բանի պատշաճ տպավորություն չէին թողնում ամենևին։ Նույնպես անհաջող էին նաև մյուս բոլոր ճապոնացիները, որոնք

մի տեսակ կապկավարի էին քայլում, շարժվում և քիչ էր մնում թռչկոտեին բեմի վրա։

Բեյնսկին (Գրինյով), դրականագետ, ջղագար և այլն— բոլորովին անհաջող էր։

Ուրախալի բացառություն էին կին դերակատարները։ Տիկ. Լաբունսկայան (Ելենա Լարոշ) շատ լավ էր «եվրոպացի կնոջ», «ինդիվիդուալիզմի սիմվոլի», «ցանկանալու ազատության», այդ դժվարին դերում, այն կնոջ դերում, որը կարողանում է սիրել և սարսափելի տանջել իր «զոհին», զարմանալի հեշտությամբ ծիծաղից արցունքների է անցնում, կրքոտ զուրգուրանքից նուրբ հեգնանքի, սարսափելի ծաղրի, որ մարդուն հասցնում են հանցագործության. և Նիկուլինի խմբի համար նա անշուշտ արժեքավոր ձեռքբերում է։ Թերեզա Մենյեն (Դոլինա) ճշմարտացի էր վերջին տեսարանում։

Բեմադրման մասին հարկ չկա խոսելու։ Դատարանի տեսարանը առանձնապես վատ էր բեմադրման իմաստով, դրանով էլ բացատրվում է այն, որ այդ տեսարանը պատշաճ տպավորություն չգործեց։ Իսկ չէ՞ որ այնքան հեշտ էր տեղեկություններ ստանալ ֆրանսիական դատարանի մասին և վերարտադրել այն։ Թատրոնը լիքն էր։

«Курьер-Копейка» № 159,
հոկտեմբերի 14, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օ.

«ՄՈՌԱՑՎԱԾ ԿԱՅԱՐԱՆՈՒՄ»,—ԴՐԱՄԱ ՍՄՈԳԵԴՈՎՍԿՈՒ

Այս դրամայի մասին դովասանական շատ հայտարարություններ արին, նրա մասին գրեցին իբրև կինեմատոգրաֆիական նկարների մասին, որ խիստ դրամատիկական է, նույնիսկ ողբերգական իր բովանդակությամբ։

Բայց երբ այդպես ռեկլամվում է, այն էլ դեռ անշլացով, թե՝ «աշակերտների մուտքն այդ ներկայացմանը արգելված է»,— կարելի է առաջուց ասել, որ մի ինչ-որ չափից դուրս վատ բան է լինելու։

Իսկապես երևվում ներկայացումը ամբողջովին ինչ-որ մի թյուրիմացություն էր։ Ինչո՞ւ, ինչի՞ համար, ինչ առթիվ բեմադրել մի այդպիսի անբնական անհեթեթություն։ Ինչո՞ւ բեմը դարձնել գինետուն, հարբած վայրենի խրախճան, ինչ-որ գաղափարների, ինչ-որ հոդեբանության խղճուկ նշույլներով։ Չէ՞ որ ամբողջ պիեսի մեջ ներքին դրամատիզմի մի կաթիլ անգամ չկա, այլ ամեն ինչ հիմնված է արտաքին սարսափների՝ տուր ու դմբոցի, խեղդելու, ինքնասպանության վրա և այլն։

Բայց լավ, նույնիսկ շատ լավ էին խաղում այդ անհնարին «անմտությունը», «Չեխովին նմանվելու» այդ կոպիտ ու հիմար կեղծվածքը։ Դերասանների խաղը զուր կորչում էր՝ պետք եղած տպավորությունը չթողնելով, ծիծաղ առաջ բերելով այնտեղ, որտեղ, ըստ հեղինակի մտադրության, հանդիսատեսը պետք է ցնցվեր սարսափից։ Կրկին հարցնում ենք, ինչո՞ւ է լուրջ ու ինտելիգենտ դերասանական խումբն այսպիսի, թող թույլ տրվի ասել, «գրական երկեր» բեմադրում։

«Курьер-Копейка» № 161.
Հոկտեմբերի 16, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ա.

«ՈՒՐՎԱԿԱՆ» –ԿՈՄՍ Լ. Լ. ՏՈԼՍՏՈՅԻ

Սրեկվա երեկոն Արտիստ. ընկ. Թատրոնում ինձ վրա ճնշող տպավորություն գործեց։ Ա. Պ. Չեխովի «Սև վանական» պատմվածքի ձևափոխումը ռուսական հողի մեծ գրողի «անհաջողակ» որդու ձեռքով միանգամայն անհաջող է։

«Սև վանականը» Ա. Պ. Չեխովի տուրքն է ռուսական հասարակության մեջ եղած որոշ հովերին, որոնք սակայն չեն շոշափել և խորապես չեն դիպել հեղինակին իրեն։ Բայց եթե բովանդակության անհաջողությունը Ա. Պ. Չեխովի մոտ փրկվում է գրելու զարմանալի վարպետությամբ, Լ. Լ. Տոլստոյի ձևափոխման մեջ չեխովյան պատկերի ամբողջ հրապույրը, դեղեցկությունը կորել է։

Այս դրամայի մեջ գործողություն չկա, միայն դատողություններ են, այն էլ անհաջող, տարրական ճշմարտությունների նմանող դատողություններ։ «Սև վանական» իբրև ուրվական դեռ հասկանալի էր, որպես հերոսի ներքին ապրումների, նրա «պաթոսի» մարմնացում, բայց երբ ձևափոխողի կամքով այդ «վանականը» մնացած հերոսի դիակի վրա մի երկար ճառ է արտասանում՝ դիմելով հանդիսատեսներին, նա դառնում է Լ. Անդրեևի «Գորշազգեստ մարդի»[64] բոլորովին անհասկանալի, խղճուկ նմանողություն։

Վատ չէին խաղում։ Բայց մի դիտողություն։ Մուրոմցևը շատ է սիրում տանջվել ու մնալ և այդ մոմենտները ձգձգում է, մինչև որ հանդիսատեսի տպավորությունները բթանում են հոգնածությունից։

Վերջում խաղացվեց «Սպասավորը սխալեցրեց», «հինավուրց» ոգևիլը։

«Курьер-Копейка» № 163,
հոկտեմբերի 18, 1910 թ.
Ստորագրությունը՝ Ա. Ա.

ԹԻՖԼԻՍ, 1 ՄԱՅԻՍԻ 1910 Թ.

Մեր թերթի այսօրվա համարում մի փոքրիկ լուր է տպված, որ հաղորդում է ժողովրդական տանը կից գործող սեկցիաների կուրյոզային միջնորդության մասին՝ ժողովրդական տունն ամառը 2 ամսով փակելու վերաբերյալ, իբր թե այն պատճառով, որ ամառ ժամանակ բանվորները ժողովրդական տուն չեն հաճախում։

Ըստ երևույթին, նման միջնորդությունը բխում է աշխատանքի զուտ տեղային պայմաններից, որովհետև բոլոր կուլտուրական քաղաքներում ժողովրդական տները ամառներն է, որ առնձնապես ինտենսիվ աշխատանք են կատարում, որովհետև հենց ամառը բանվորները հնարավորություն ունեն հաճախ լինելու այնտեղ։

Թիֆլիսում, ըստ երևույթին, գործը վատ է դրված, քանի որ նույնիսկ շահագրգռված կողմերն են միջնորդում նրա փակման մասին։

Մենք բոլորս էլ հրճվանքով էինք վերաբերվում ժողովրդական տանը, գովաբանում էինք նրա աշխատակիցներին, նրա կարգերը և չէինք նկատում նրա բացերը։

Սակայն ժողովրդական տան մեղրամիսն արդեն անցել է, և ծանր իրականությունն արդեն բոլորի համար էլ զգալի է դարձել։

Ժողովրդական տունն անկասկած գործում է աննորմալ պայմաններում։

Քաղաքային ինքնավարություններն ամենուրեք խոշոր գումարներ են ծախսում ժողովրդական տների վրա, իսկ մեր քաղաքային ինքնավարությունն ուղղակի գրոշներ է հատկացնում այդ գործին և տան վարիչներին դնում է այն-

պիսի դրության մեջ, որ նրանք անհրաժեշտորեն պիտի իրենց ամբողջ ուշադրությունը դարձնեն տան պահպանության ծախսերի համար ավելորդ փող վաստակելու վրա։

Կուլտուրական այդ հաստատությունը, որ ըստ նվիրաբերող եղբ. Զուբալովների հիմնական նպատակի՝ պետք է մնա զուտ ժողովրդական, կուլտուրական մի հիմնարկություն,— քաղաքային վարչությունն այդպիսով առևտրական ձեռնարկության է վերածում, որն իր պահպանության համար եկամուտ պիտի բերի։

Այս տեսակետը հիմքից վիժեցնում է մեղանում ժողովրդական տունը, մեծահասակների այդ դպրոցը, բանալու և նրա գոյության հիմնական միտքը։

Ինչպես որ քաղաքը պարտավոր է գումարներ ծախսել իր դպրոցները պահելու համար, նույն հիմունքներով նա պարտավոր է պահել նաև ժողովրդական տունը և այդ գործի լավագույն դրվածքի համար միջոցներ չխնայել։

Իսկ ի՞նչ ենք տեսնում այժմ։

Պրոֆեսիոնալ դերասաններ հրավիրելու համար միջոցներ չլինելու հետևանքով ժողովրդական տունն այժմ մի աստիճան է դարձել, որտեղ մարզանքներ (երբեմն զուտ մանկական մարզանքներ) են կատարում զանազան տեսակ սիրողներ, որտեղ հրահրվում է անճաշակությունը, սխալ պատկերացումն արվեստի մասին և ժողովրդական մասսայի մեջ տարածվում են հակագեղարվեստական սկզբունքներ։

Մենք միշտ պաշտպանել ենք սիրողներին, գնահատել ենք նրանց սերն ու ձգտումը դեպի բեմ, սակայն անվերապահորեն դեմ ենք, որ ժողովրդական տանը բոլոր ժամանակ ներկայացումներ տրվեն տնայնագործական եղանակով, և ոչ թե պրոֆեսիոնալ դերասանների կողմից և առանց անհրաժեշտ գեղարվեստական ձևավորման։

Անհրաժեշտության հետևանքով ուսրական խրախուսում է սիրողների դիլետանտիզմը և հոգևոր սննդի փոխարեն՝ արվեստի սուրոգատ է հրամցնում ժողովրդին։

Մենք նորից ենք կրկնում, որ դնահատում ենք սիրողների աշխատանքը (մանավանդ որ սիրողներից շատերը— վրացիներից, հայերից և նույնիսկ համեմատաբար թույլ ռուսական սեկցիայից— թե՛ խաղով և թե՛ պիեսների բեմադրությամբ հետ չեն մնում իսկական և փորձված դերասաններից), գովասանքի արժանի ենք համարում նրանց ջանքերը, սակայն սկզբունքորեն անպայման դեմ ենք արտահայտվում «սիրողականության» այն սիստեմին, որ ամուր բուն է դրել ժողովրդական տանը։

Թո՛ղ սիրողներն իրենց բավականության համար մարդանքներ կատարեն ակումբային բեմերի վրա, բայց ժողովրդական տանը— հենց այն պատճառով, որ դա ժողովրդական տուն է,—գլխավորող դիրք պիտի ունենան պրոֆեսիոնալ դերասանները և սոլիդ ուժերից կազմակերպված խմբերը։ Իսկ դրա համար, ի հարկե, միջոցներ են պետք, որ պարտավոր է հատկացնել քաղաքը և՝ անպայման պարտավոր է, եթե միայն մեր «հայրերը» ցանկանան զգոն աչքով նայել ժողովրդի հոգևոր կարիքները բավարարելու գործի վրա։

Ժողովրդական տան գործերը անօրինող հանձնաժողովը՝ քաղաքային վարչության անդամ իշխան Ա. Մ. Արղութինսկու գլխավորությամբ՝ պետք է յուրացնի այս տեսակետը և հարց հարուցի դումայի առջև՝ ժողովրդական տան աշխատանքի համար նորմալ պայմաններ սահմանելու մասին։

Այն ժամանակ, ի հարկե, խոսք չի կարող լինել ժողովրդական տունն ամառը փակելու մասին, մի բան, որ ակամայից ստիպված պիտի անել այժմ, որովհետև սիրողներն ամառանոցներն են ցրվելու (ժողովուրդն, ի հարկե,

դարձյալ մնալու է այստեղ) և ժողովրդական տանն այլևս խաղացող չի լինելու։

Ժողովրդական տունն ըստամենայնի արժանի է մեր հասարակության լուրջ ուշադրության և մենք դեռ առիթներ կունենանք նրան անդրադառնալու։

«Новая Рѣчь» № 96,
մայիսի 1, 1910 թ.։

ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ ԿԻՑ ԴՐԱՄԱՏԻԿ ԽՄԲԱԿԻ ՏԱՐԵԿԱՆ ԺՈՂՈՎԻ ԱՌԹԻՎ

Լրագրերում լույս տեսավ մի համառոտ հաշվետվություն ռուսական դրամատիկ խմբակի առաջին տարվա գործունեության մասին։ Պետք է սպասել ավելի լրիվ և մանրամասն հաշվետվության, որի հիման վրա կարելի լինի ավելի ճշգրիտ եզրակացություններ անել խմբակի գործունեության վերաբերյալ։ Շատ ցանկալի կլիներ հաշվետվության մեջ նշել հաշվետու տարում խաղացված ռեպերտուարը, հաճախորդների քանակը՝ գեթ միջին թվերով, ներկայացումների քանակը, ինչ պիեսներ են հաջողություն գտել ժողովրդից կազմված աուդիտորիայի մոտ, ինչով են զեկավարվել խմբակի աշխատողները ռեպերտուարը կազմելիս, ժողովրդական տան հաճախորդների մեջ անկետա կազմվե՞լ է արդյոք նրանց ցանկալի ռեպերտուարի և բնմադրած պիեսների մասին նրանց կարծիքի վերաբերյալ։

Ահավասիկ այն հարցերի մի մասը, որոնց պետք է պատասխան տալ, որպեսզի ապագայում կարելի լինի ժողովրդական աուդիտորիան խելացի կերպով զբաղեցնելու դործը դնել պնտշաճ բարձրության վրա, որպեսզի խմբակի աշխատանքը հնարավորության չափ ավելի արդյունավետ լինի։ Չէ՞ որ թատրոնը, բազմիցս ծամծմված և մաշված բնորոշման համաձայն, մի դպրոց է մեծահասակների համար։ Առանձնապես այս ճշմարտությունը կիրառելի է ժողովրդից եկած հանդիսականների համար, որոնք դեռևս ընդունակ են անմիջականորեն զգալու և բուռն կերպով արձագանքելու բեմի վրա կատարվածին։ Մենք

առիթ ենք ունեցել Կովկասի արդյունաբերական խոշոր կենտրոններից մեկում երկար ժամանակ դիտելու այդպիսի դյուրազգաց, կենդանի կերպով զգացող աուդիտորիա։

Ժողովրդական տան դահլիճը բառացի լեփ-լեցուն էր լինում, այնպես որ «ասեղ գցելու տեղ չէր մնում», և բանվորական հասարակությունը լարված ուշադրությամբ հետևում էր, թե ինչ է արվում և խոսվում բեմի վրա։ Սիրած հերոսի «ամեն մի հաջող խոսք», ռեպլիկա հավանություն էր առաջացնում հասարակության մեջ, իսկ «բացասական» տիպի ամեն մի ելույթ ուղեկցվում էր զայրագին թնդյունով։ Հիշում ենք բանվորուհի կանանց արցունքներն ու նույնիսկ հեկեկանքը, որ հարուցում էին «Մեր կյանքի օրերի» հերոս դժբախտ Օլ-Օլի բախտն ու տանջանքները։ Այնտեղ խաղացող դերասաններն զգում էին, որ իրենց առջև գտնվում է մի հատուկ աուդիտորիա, որ այստեղ կարևորը մանրամասնությունները չեն, ռեժիսյորական հրաշքները չեն, այլ իր դերով համակվելը, հանդիսականի հոգին շոշափել կարողանալը, իսկ այդ հոգին հեշտ էր ալեկոծել. հարկավոր էր միայն լավ խոսքեր ասել անկեղծ, ազնիվ ձայնով։ Իսկ անտրակտներին տեղի ունեցող վեճե՞րը, խոսակցությունն ե՞րը տեսածի ու զգացածի առթիվ, իսկ այն ջե՞րմ, բո՞ւռն շնորհակալությունը ժողովրդական բեմի գործիչներին, իսկ այն լո՞ւրջ, ներհո՞ւն վերաբերմունքը դեպի ռեպերտուարը— այս բոլոր փաստերը ոգևորում ու ամրապնդում էին կուլտուր-լուսավորական գործի աշխատողներին, հոգեկան ամուր կապ էին հաստատում դերասանների ու հանդիսականների միջև։ Ահա այս ամենը մենք իրավունք ունենք սպասելու և պահանջելու դրամատիկ խմբակից, որը գործում է ժողովրդական բեմի վրա։ Մինչև նույնիսկ այն համառոտ հաշվետվության մեջ, որը մենք կարդացինք, մի փաստ մեր աչքին ընկավ և ստիպում է լրջորեն մտածել։

1909 թ. ապրիլի 18-ից մինչև 1910 թ. ապրիլի 18-ը բեմադրված է 61 ներկայացում, որից 34-ը «հատկապես

ժողովրդական», էժանացրած գներով։ Հետևաբար 27 ներկայացում եղել է բարձր գներով, բարեգործական նպատակով, բենեֆիսներ և այլն։ Ամենից առաջ մեզ զարմացնում է ժողովրդական տան մեջ ներկայացումների այս բաժանումը ժողովրդականների և ոչ ժողովրդականների։

Ակամա հարց է ծագում, թե հապա ի՞նչ նպատակով են Զուբալովները փող նվիրաբերել, շենք կառուցել և անվանել ժողովրդական տուն։

Մի՞թե ժողովրդական տանը կարող են լինել ինչ-որ հատուկ ժողովրդական «ներկայացումներ»։ Բարեգործական նպատակների համար ուրիշ թատրոններ կան և կարիք չկա այդ երեկոների համար ժողովրդական բեմը տալու։

Խմբակի ամբողջ գործունեությունն արտահայտվում է այնքան համեստ թվով՝ 61։ Եվ սրանից էլ դեռ 27 ներկայացում միանգամայն կորել է ժողովրդի համար։

Բենեֆիսնե՞ր։ Բայց ո՞ւմ համար են սարքվել այդ «անվանակոչությունները» և ինչո՞ւ։ Պրոֆեսիոնալ դերասանների՞ համար, որոնք ապրում են բեմով, թե՞ սիրողների համար։ Բանից դուրս է գալիս՝ վերջիններին համար։ Հետևաբար «ժողովրդական գործին» անշահասիրաբար ծառայելու մասին խոսք անգամ չի կարող լինել, հետևաբար, ներկայացումը խլվել է ժողովրդից, որպեսզի դերասանության այս կամ այն սիրողի մեջ նյութապես պահպանվի սերը դեպի «մութ մասսաների ու կրտսեր եղբոր» լուսավորումը։

Մենք հասկանում ենք, երբ մի համակրելի գործի երկար ծառայելու համար հասարակությունը մեծարում է աշխատավորին. բայց ընդամենը մի տարի գոյություն ունենալով, խմբակն իր անդամների համար «բենեֆիսներ» է սարքել՝ ներս չթողնելով հենց այն աուդիտորիան, որը և պետք է դնահատեր այս կամ այն աշխատողի գործունեությունը հարազատ բեմի վրա։ Այսպիսի տխուր մտքեր է առաջացնում մեր մեջ Զուբալովի անվան ժողովրդական տան կից ռուսական դրամատիկ խմբակի այս «համառոտ հաշվետվությունը»։ Արդյոք նա գոյություն ունի ժողովրդա-

կան տան կից ժողովրդական աուդիտորիայի համար ներկայացումներ տալո՞ւ, թե ժողովրդական տունն է կցված նրան սիրողական վարժությունների և ժողովրդական լուսավորության գործի հետ քիչ ընդհանուր բան ունեցող նպատակների համար— ահավասիկ մի հարց, որին անհրաժեշտ է պատասխանել։

«Новая Речь» № 106,
Մայիսի 13, 1910 թ.
Ստորագրությունը՝ Ս. Օլդին

ԻՄ ՊԱՏԱՍԽԱՆԸ

Ռուսական դրամատիկ խմբակի նախագահ պ. Բուկշտեյնի տպագրվող նամակն ամբողջությամբ հաստատում է իմ բոլոր ցուցումները ժողովրդական տանը ժողովրդի համար ներկայացումներ տալու գործի մի քանի աննորմալությունների վերաբերյալ[85]։ Այս նամակով հաստատվում են. 1) ժողովրդական տան հատուկ ժողովրդական ներկայացումներ տալու փաստը, 2) խմբակի օրերը բարեգործական (նույնիսկ տոնական) երեկույթների հատկացնելու փաստը, 3) բարձր գներով և բենեֆիսային ներկայացումներ կազմակերպելու փաստը։ Այսպիսով, թե ինչ է հերքում պ. Բուկշտեյնը՝ ինձ համար անհասկանալի է։

Իսկ ինչ վերաբերվում է այս աննորմալությունների պատճառների բացատրությանը, ես իմ հոդվածում հո չեմ շոշափել դրանք, այլ միայն հավաստել եմ դրանց առկայությունը, որը չի ժխտվում պ. Բուկշտեյնի նամակով։ Ես միանգամայն ավելորդ եմ համարում նամակի հեղինակի հետ վեճի բռնվել այն մասին, թե՝ բարեգործական ներկայացումները «խանդարում են որևէ մեկին, թե ոչ», բենեֆիսների մասին, թեկուզ ի պատիվ «մեկնողների»,— այս ամենի մասին ես բավական պարզ արտահայտվել եմ իմ հոդվածում։

Երկու խոսք էլ։ Ես իմ հոդվածում չեմ դավաճանում «Новая Речь»-ի նախկին համակրական վերաբերմունքին դեպի դրամ. խմբակի գործունեությունը։ Ընդհակառակը, ուզ

ընդունակ է ուշադրությամբ կարդալու, նաև անկասկած գնահատի ամբողջ հոդվածի միջով անցնող հատկապես սիրալիր ու համակրական վերաբերմունքը դեպի շոշափված հարցը։

Այնպես, որ այս տեսակետից էլ վիճելու առիթ չկա և պ. Բուկշտեյնի ակնարկները անհիմն են։

«Новая Речь» № 110,
մայիսի 18, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ՈՒՐՎԱԳՐԵՐ

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏՈՒՆԸ

Քաղաքային վարչությունը Արտիստական ընկերության անտրեպրենյոր պ. Նիկուլինին մերժել է, որ «երկուշաբթիները» պրոֆեսիոնալ դերասանների խումբը ժողովրդական տան բեմի վրա ռուսերեն ներկայացումներ տա։ Քաղաքային վարչության այս որոշմանն անհրաժեշտ է միայն դատապարտությամբ վերաբերվել։ Ժողովրդական բեմը դարձյալ հանձնված է ռուսական դրամատիկական խմբակի «տիրությանն» ու տնօրինությանը, այսինքն՝ սիրողների, որոնք ժողովրդական բեմը դարձրել են իրենց բեմասիրությունը դրսևորելու ասպարեզ։ Մենք ավելի շատ տեսել ենք այդ խմբակի գործունեության «վարդագույն» կողմը, զանազան հանդիսավոր պատգամավորություններ ուղարկելը, ժողովրդական ներկայացումները, տարեկան հոբելյանները շամպայնով ու խնամակալ տիկինների հետ և այլն և այլն, շարունակական ռեկլամելը թերթերում, քան ժողովրդի համար գեղարվեստական խելացի զբաղմունք ստեղծելու խոհուն և սիրով կատարված աշխատանք։ Ով գեթ մեկ անգամ եղել է այդ խմբակի ներկայացումներին և ուշադիր դիտել թե՛ հասարակության կազմը և թե՛ նրա վերաբերմունքը դեպի բեմի վրա կատարվածը, նրա աչքին իսկույն զարնել է «ժողովրդի» գրեթե լիակատար բացակայությունը ժողովրդական տանը և թատրոնի լցվածությունը սիրողների և սիրողուհիների երկրպագուներով և երկրպագուհիներով։ Դերակատարների մեծ մասը, չունենալով բեմական տվյալներ՝ մեծ

հաջողությամբ յուրացրել են պրոֆեսիոնալ դերասանության բոլոր բացասական կողմերը։ Տողերիս գրողը ժողովրդական տանը ներկա է եղել ներկայացումների, որոնց ժամանակ նախկին գլխավոր դերակատարուհին, որին այս անգամ ուրիշն էր փոխարինել, ամեն անգամ հենց որ իր «մրցակցուհին» բեմ էր դուրս գալիս, իր երկրպագուների հետ մեկտեղ դեմոնստրատիվ կերպով թողնում էր դահլիճը՝ բնավ չքաշվելով հասարակությունից, որն ըստ երևույթին սովոր էր իսայիված ինքնասիրությունների այդ պայքարին և նույնիսկ մասնակցում էր նրան։ Ժամանակն է, որ պրոֆեսիոնալ դերասանների մասնակցությամբ ներկայացումներ դնելու միջոցով, ըստ քաղաքային ինքնավարության կից հատուկ հանձնաժողովի հավանած ռեպերտուարի, ժողովրդի համար ստեղծվի իսկապես դեղարվեստական թատրոն և ոչ թե ժողովրդական զվարճության այնքան լուրջ գործը դարձվի «սիրողների մարզանքներ» նրանց բեմական հակումները բավարարելու համար։

Թող «սուրբ դեղարվեստի սիրողները» մարզվեն ակմբային բեմերի վրա, որովհետև ակմբային հասարակությունը հնարավորություն ունի «քաջալերելու» նրանց փորձերը և միաժամանակ «իսկական» թատրոն հաճախելու, իսկ ժողովրդին տվեք պրոֆեսիոնալ լավ խումբ խելացիորեն ընտրված ռեպերտուարով։

«Курьер-Копейка» № 102,
օգոստոսի 18, 1910 թ.։
Ստորագրությունը՝ S

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՏԱՆ ՄԱՍԻՆ

Մեր քաղաքային ինքնավարությունը և նրա վարչական օրգան-ուպրավան հասարակական կարծիքի և նրա սրտա-հայտիչ մամուլի վերաբերմամբ յուրացրել են իրենց համար որոշակի տակտիկա։ Ուպրավացիները շատ հանգիստ անցնում են իրենց անգործունեության, թերացումների, խնամիության փաստերի կողքով, քաղաքային ուպրավայի՝ հանուն «քաղաքային չքավորության շահերի» զարմանալի քաղաքականությունը բացահայտող տվյալների կողքով։ Նրանք «լռության ֆիգուրա» են պահպանում, ղեկավարվելով հանդուցյալ կնյազ Վ. Ն. Չերբեզովի[88] ասացվածքով՝ «мало ли что пишут в газетах» և այլն։

Մամուլի նկատմամբ այսպիսի յուրահատուկ վերաբերմունք ունենալով հանդերձ, չի խանգարում քաղաքի գործերի այդ տնօրեններին լինել «մամուլի աշխատավորներ» և ժուռնալիստների խաչատուրովյան ընկերության անդամներ։ Իսկ նրանց մի մասն անցյալում (վաղուց մոռացված) ճառեր ունեն դումայական արձանագրություններում գրանցված՝ մամուլի ներկայացուցիչներին քաղաքային վարչության բոլոր հիմնարկներում թույլատրելու, նրանց առաջ քաղաքային տնտեսության առևտրական բնույթի բոլոր դաղտնիքները բաց անելու, մամուլի օրգանների և նրա անշահամոլ աշխատակիցների նկատմամբ լիակատար վստահություն տածելու մասին։

Իսկ այժմ ժամանակները փոխվել են, նրանց հետ և նման ճառեր արտասանած մարդիկ։

Հիմա ուշադրություն են դարձնում այնպիսի փաստերի

վրա, որոնք մամուլի էջերում երևալով, կարող են գրավել «իշխանությանը հետևողների» ուշադրությունը։

Այդպիսի դեպքերում վարչական ամենը մաքրում է արագ և եռանդով և ամեն բան պատրաստ է լինում տհաճ վիզիտի համար։

Բազմիցս մատնանշվել է Զուբալովյան ժողովրդական տան ամբողջ գործերի աննորմալ դրվածքը, բազմիցս ընդգծվել է այն հանգամանքը, որ ժողովրդական տունը անցել է ինչ որ սիրող խմբակների տնօրինությանը, որոնք այնտեղ կատարում են ինչ իրենց հաճելի է, որ այդ ժողովրդական տան շուրջը և նրա մեջ ստեղծվել են սիմեկուրաներ (վարձատրվող անաշխատ պաշտոններ) և ինչ որ «մաեստրո Թեոդորս Դոլիջեի»[87] տիպի գործարարներ, որ «ժողովրդին» հրամցվող սիրողների խմբակների ռեպերտուարներին հետևող իրավասություններից և գիտակ անձնավորություններից կազմված ոչ մի հանձնաժողով էլ չկա և այլն։ Նույնիսկ այնպիսի կազմակերպություն, ինչպիսին օրինակ, ժողովրդական համալսարանը ոչ մի առնչություն չունի ժողովրդական տան հետ և ոչ մի կերպ չի կարողանում իր նիստերի համար դահլիճ ձեռք բերել և դեռ շենքի համար պետք է վճար մուծի քաղաքային դրամարկղը։

Ես դիտեմ, որ կարող են ինձ հակաճառել, թե այդպես է նվիրատուի կամքը, թե քաղաքն իրավունք չունի այն փոփոխելու և խախտելու։

Բայց ինձ ամենից առաջ թվում է, որ նվիրատուի կամքը ոչ մի ժամանակ չի արտահայտվել նրանում, որպեսզի ժողովրդական տունը վերածվի բեմի՝ միայն սիրողական վարժությունների համար, որ նրանում իշխի «ո՞վ շատ» սկզբունքը, որպեսզի նրանում իրենց անհետաձգելի խնդիրներն իրագործելու համար տեղ չգտնեն այնպիսի կազմակերպություններ, որոնք իրենց անմիջական նպատակն են դրել ժողովրդական լայն մասսաների լուսավորությունը և հոգևոր աստիճանի բարձրացումը։

Այս բոլոր դեֆեկտների մասին մի անգամ չէ, որ նշվել

է մամուլում, բայց ի հարկե, առանց հետևանքի։ Քաղաքային ուպրավան նրանց կողքովն է անցել, քանի որ «мало ли что пишут в газетах»։

Օրերս մի ինցիդենտի առիթով քաղաքային ուպրավային զուբալովյան ժողովրդական տան գործերի մասին հարցապնդում արավ պ. նահանգապետը։ Թերևս հիմա կնյազ Արղութինսկիների բաղմաթիվ մունիցիպալյաններից ինչ որ «գնեցիկ արվեստի մինիստր» իր բարեհաճ ուշադրությունը կդարձնի ժողովրդական տան վրա։

«Листок-Копейка № 44,
փետրվարի 23, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ԿՈՒԼՏՈՒՐԱՅԻ, ԿՐԹՈՒԹՅԱՆ ԵՎ ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

«ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՐՑԸ ԵՎ ՍՈՑԻԱԼ-ԴԵՄՈԿՐԱՏԻԱՆ» ՀՈԴՎԱԾԻՑ[8]

Այժմ հայկական կյանքում խոշոր և հրատապ խնդիրներից մեկն է և՝ դպրոցական հարցը...

Դպրոցը, մատաղ սերնդի դաստիարակության, կրթության գործը և դրա կազմակերպությունը ունի ահագին նշանակություն երկրի, ժողովրդի տնտեսական, սոցիալական զարգացման համար։

Սոցիալ-դեմոկրատիան, որպես ներկայացուցիչ պրոլետարիատի շահերի, չի կարող անտարբեր վերաբերվել այդ հարցի այս կամ այն լուծման։ Սխալ է և միմիայն բուրժուական տգիտության ու տխմարության հետևանքն է այն կարծիքը, թե սոցիալ-դեմոկրատիան աշխարհ է եկել միմիայն «ստամոքսի հարցը» վճռելու։ Հետազոտելով և քննելով մարդկության էվոլուցիան, անալիզ անելով ներկա հասարակության կապիտալիստական կազմը և ըմբռնելով դասակարգային կռվի իսկական իմաստը—մենք կտեսնենք, որ սոցիալ-դեմոկրատիան ամենից շատ և ամենաղորեղ կերպով շահագրգռված է կուլտուրական, սոցիալական հարցերի լուծման մեջ։ Ժամանակակից հասարակության սահմաններում պրոլետարիատի շահերը, ձգտումները համապատասխանում են, իրենց օբեկտիվ նշանակությամբ, հասարակական, ընդհանուր մարդկության զարգացման առաջադիմության։

Այդ ի նկատի ունենալով, սոցիալ-դեմոկրատիան այս կամ այն դիրքն է բռնում կուլտուրական-սոցիալական հարցերում։

Բուրժուական հասարակության մեջ ամեն բան դառ-

նում է ապրանք, ծախու առնելու առարկա և այդ կանոնին ենթարկվում են ոչ միայն նյութական՝ ձեռքով շոշափելի իրերը, այլ և մասավոր, ոչ-նյութական բաները՝ գիտություն, տաղանդ, շնորհք և այլն։

Իզուր են մեր դիտնականները, գրողները, նկարիչները մեծ մեծ խոսում իրենց «ազատության» մասին, իզուր են իրանք իրենց բարձր դասում «շուկայից»։ Նրանք բուրժուազիայի ծառաներն են և իրենց գործունեությունը համակերպում են բուրժուազիայի պահանջներին և ճաշակներին։

Կրթության գործը այժմյան բուրժուական հասարակության մեջ նույնպես չի խուսափում այդ դրությունից և կրում է պարզ դասակարգային դրոշմ։ Ամեն տեղ, մինչև իսկ ամենաքաղաքակիրթ երկրներում, ժողովրդական ստորին ուսումնարաններում, որտեղ գլխավորապես սովորում են խեղճ, աշխատավոր դասակարգի զավակները, ապագա պրոլետարները, այդ դպրոցները ավելի վատ են կազմակերպվում, նրանց վրա համեմատաբար ավելի քիչ է ծախսվում, քան միջնակարգ և բարձր դպրոցների վրա, ուր դասավանդվում են միջին և հարուստ դասակարգերի զավակները։ Մատաղ սերնդի դասավանդության սիստեմումն էլ մենք տեսնում ենք մեր հասարակական կազմի բնորոշ հիմքը՝ դասակարգային բաժանումը, բարձր կրթությունն ստանում է ոչ թե նա, ով ձգտում, շնորհք ունի դեպի գիտությունը, այլ նա, որ փողի միջոց ունի սովորելու։

Ընդհանրապես, եթե քննենք լուսավորության գործի դրությունը զանազան երկրներում, մենք կնկատենք, որ ամեն տեղ զինվորական և ծովային մինիստրությունների բյուջեն անհամեմատ ավելի է, քան թե լուսավորության մինիստրության։

Ավելորդ է ասել, որ Ռուսաստանը այդ տեսակետից ամենակլասիկական երկիրն է Եվրոպայում։ Այդ էլ հետևանք է մեր բուրժուական կազմի, որի արդյունքն է միլիտարիզմի անսահման զարգացումը ուղղակի ի վնաս աշխատավորների, պրոլետարիատի։

Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է և ձգտում է իրականացնել այն, որ ժողովրդի կրթության, զարգացման վրա ծախսվի պետական բյուջեի խոշոր մասը, որովհետև այդ «ելքը» ահագին «մուտք» կտա, բարձրացնելով ժողովրդական լայն մասսաների կուլտուրականությունը, առաջ կտանի երկրի թե՛ տնտեսական և թե՛ սոցիալական պրոգրեսը։

Ժամանակակից տնտեսական դրությունը, կապիտալիստական կարգերը ավելի ու ավելի հեռացնում են ծնողներին իրենց երեխաների դաստիարակության գործից, և այդ ճշմարիտ է ոչ միայն բանվոր դասակարգի, այլ նաև ավելի ապահովված և մինչև անգամ հարուստ դասակարգերի վերաբերմամբ, այնպես որ կրթության գործն արդեն ստացել է ընդհանուր հասարակական կերպարանք։

Սոցիալ-դեմոկրատիան, կռվելով պրոլետարիատի շահերի համար, առաջ տանելով նրա դասակարգային պայքարը, հենց դրանով իսկ օրհասական կռիվ է մղում ամեն տեսակ դասակարգային բաժանման դեմ, ամեն տեսակ ճնշման և հարստահարության դեմ։ Այդ դասակարգային բաժանումը այժմ արտահայտվում է ամեն բանում, և ինչպես մենք արդեն ասացինք, և դպրոցներում, ուսման գործում։

Բանվոր դասակարգը ձգտում է այն նպատակին, որ դպրոցների տիպը լինի մեկ, որ կրթության գործը դառնա իսկական ազգային, հասկանալով այդ՝ ոչ ազգայնական, այլ ընդհանուր ժողովրդական, առանց դասակարգային բաժանման, առանց փողից կախումի, այլ պարտադիր և անվարձ։ Ստորին, միջին և բարձր դպրոցները միմյանց հետ պետք է անմիջապես կապված լինեն այնպես, ինչպես մի սանդուղքի աստիճանները։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ պարտադիր է միմիայն ստորին դպրոցը, ուր թե՛ խեղճի և թե՛ հարուստի զավակները մի նստարանի վրա պիտի սովորեն, իսկ հետևյալ աստիճանները կանցնեն նրանք, որոնք ձգտում և հակումն ունեն դեպի բարձր ուսումը։

Եվ այդպիսով վերջ կդրվի ամեն տեսակ առանձնաշնոր-

հումների՝ լուսավորության-դպրոցական գործում, այդպիսով ինքը Բուրժուազիան անմիջապես շահագրգռված կլինի ստորին դպրոցների բարեկարգության մեջ։

...Բայց այդ բոլորը դեռ բավական չէ, որ դպրոցը իսկական ժողովրդական դառնա։ Որքան էլ որ ուսումը լինի պարտադիր և ձրի՝ սովորելու համար անհրաժեշտ իրեր են հարկավոր։ Եվ այդ իրերը— գիրք, տետր, մատիտ, պայուսակ, թանաք, գրիչ և այլն և այլն ավելանում են որպես ծանր բեռ բանվորական խղճուկ բյուջեի վրա։ Կյանքը զարգանալով, թանգանալու տենդենցիա ունի, այնպես որ բանվոր դասակարգի համար ավելի ու ավելի դժվար է լինում հայթայթել իր ապրուստը։ Եվ շատ անգամ, ի նկատի ունենալով հենց այդ ծախսը, բանվորը չի ուղարկում իր երեխային ուսումնարան։

Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է, որ խեղճ ազգաբնակչության զավակները այդ բոլոր պիտույքները ստանան ձրի, հասարակության, պետության կողմից։ Բացի այդ՝ երեխան սոված և մերկ չի կարող սովորել։ Չի կարող կարդին հաճախել ուսումնարան և այդ հանգամանքը ազդում է նրա ուսման հաջողության վրա։ Այդպիսի աշակերտները պիտի ստանան նագուստ, կոշիկ և այլն, նույնպես և տաք կերակուր, որովհետև կրկնում ենք, կարգին և լավ սնունդը մեծ նշանակություն ունի երեխաների ֆիզիկական առողջության համար, իսկ «առողջ մարմնում առողջ կլինի և խելքը»— ինչպես ասում է լատինական առածը։

Խոսելով հագուստի, կերակրի մասին, հարկավոր է շեշտել և մարմնի մաքրության անհրաժեշտությունը սանիտարիայի, հիգիենայի տեսակետից և ուսումնարաններում կարոտյալ ընտանիքների զավակների համար պիտի լինեն բաղանիքներ, վաննաներ, դուշեր։

Բուրժուական հասարակությունը բնորոշող երևույթներից ամենախոշորներից մինն է երեխաների և կանանց աշխատանքը գործարաններում, զավոդներում և այլն։ Մենք կանգ չենք առնի այդ երևույթի պատճառների վրա, այլ կա-

անենք միմիայն այն, որ մինչև 16 տարեկան հասակը երեխաներին պիտի անպայման արգելվի աշխատել գործարաններում, որովհետև նրանք պիտի հաճախեն դպրոց։ Ինչպես արդեն վերև ընդգծեցինք, կանայք մասնակցում են տնտեսական պայքարին և տղամարդկանց հետ հավասար հարգահարվում, այնպես որ այն խոսքերը կնոջ կոչման մասին, թե նա «սուրբ և վեհ» մայրական պարտավորություններ ունի, չոր ու դատարկ ֆրազներ են, բուրժուական ստախոսության և փարիսեցիության արտահայտություններ են։

Բուրժուական հասարակության մեջ կինը ստրուկ է և տղամարդկանց քմահաճույքի առարկա։ Պրոլետարիատը կռվում է սեռի հավասարության դաղափարի համար։ Պետք է վերացնել հենց մանուկ հասակից ցավալի հայացքը կնոջ մասին որպես ո՞չ-հավասար արարածի։ Պետք է պատրաստել այդ ուղղությամբ մատաղ սերնդի ուղեղն ու հոգին։ Այդ նպատակով պետք է հենց ուսումնարանական հարկի տակ երկու սեռերը սովորեն միմյանց վրա հավասար, ընկերական աչքով նայել։

Սոցիալ-դեմոկրատիան պահանջում է երկու սեռի— *իգական և արական*—միատեղի ուսուցումը։

Դաստիարակությունը, մատաղ սերնդի կրթությունը՝ նպատակ պիտի ունենա երեխայի բազմակողմանի, ներդաշնակ զարգացումը։

Դրա համար ուսումնարանը պիտի տա ոչ միայն մտավոր պաշար, այլ և ֆիզիկապես զորեղացնի մարդուն։ Բուրժուական հասարակության մեջ մտավոր աշխատանքը, գործունեությունը բոլորովին անջատված է ֆիզիկականից և դա հետևանք է աշխատանքի ծայրահեղ սպեցիալիզացիայի և ինտենսիֆիկացիայի։ Ինքնըստինքյան հասկանալի է, որ այդ դրությունը շատ վատ ազդեցություն ունի մարդուս առողջության, գործունեության վրա։ Մի կողմից մենք տեսնում ենք բանվորին՝ թուլացած անսահման և անընդհատ ֆիզիկական աշխատանքից, մյուս կողմից, բուրժուային կամ ոչ ֆիզիկական աշխատանքով զբաղվողին՝ գիտնականին,

չինովնիկին և այլն, թուլացած մտավոր աշխատանքից։ Եվ հոգեբանորեն էլ կապիտալիստական կարգերում մարդս արհամարհանքով է նայում ֆիզիկական աշխատանքի վրա, որովհետև այդ տեսակ աշխատանքը ժամանակակից հասարակության մեջ այնքան զարհուրելի և տաժանակիր է, որ իր մեջ ոչ մի գրավիչ գիծ չի պարունակում։ Սոցիալիստական հասարակությունը միմիայն կարող է դարձնել ֆիզիկական գործունեությունը գրավիչ և համակրելի, երբ որ մարդ մի երկու-երեք ժամ կաշխատի հասարակության համար, իսկ մնացած ժամանակը կնվիրի զվարճության, մտավոր զարգացման, հասարակական գործերին։ Հենց այժմ բոլոր վերև ասվածը ի նկատի ունենալով, դպրոցներում պետք է մտցվի ֆիզիկական աշխատանք, բոլոր երեխաները, առանց դասակարգային խտրության, իբանց ընդունակությունների համապատասխան արվեստներ պետք է ուսումնասիրեն։

Ստորին ժողովրդական ուսումնարանի բարելավության գործում, իհարկե, մեծ դեր է կատարում այն համեստ գործիչը, որի անունն է «ժողովրդական ուսուցիչ»։ Այն պայմաններում, որի մեջ ընթանում է նրա լուսավորչական միսիան, առաքելությունը, շատ ծանր են և չեն կարող չաղդել բացասական կերպով ամբողջ գործի վրա։

Հայտնի է, որ այդ համեստ գործիչները շատ վատ են ապահովեցրած և նրանց ռոճիկները համապատասխան չեն նրանց գործի մեծության։ Այդ նյութական դրությունը, անապահովությունը մեծ խոչընդոտ է դառնում գործի հարատևության համար։ Տեսնելով ժողովրդական ուսուցչի այդ խղճուկ դրությունը—շատերը, որոնք կարող էին շատ օգտակար լինել այդ ասպարեզում, փախչում են, դնում են ուրիշ հասարակական ֆունկցիաներ կատարելու, որովհետև այնտեղ նյութական ապահովություն կա։ Այդ հանգամանքը մեծ վնաս է բերում ժողովրդի լուսավորության գործին և այն կողմից, որ նյութական սղության պատճառով ժողովրդական ուսուցիչը ետ է մնում գիտությունից, դրակա-

նությունից, և նրա մտավոր պաշարը շատ շուտով սպառվում է, նրա մտավոր զարգացումը կանգ է առնում։

Սոցիալ-դեմոկրատիան, կռվելով ժողովրդի լուսավորության, նրա կուլտուրականության համար, պահանջում է, որ ժողովրդական ուսուցիչն ստանա այնպիսի վարձատրություն, որը համապատասխան լինի նրա մեծ կոչման։ Նա պիտի համարվի ամենաօգտակար և ամենակարևոր հասարակական գործիչներից մեկը՝ և այդ տեսակետից նա բոլորովին ապահովված պետք է լինի իր գոյության խնդրի կողմից, որպեսզի կարողանա իր բոլոր ուժերը և գիտությունը նվիրել ժողովրդի զարգացման առաջադիմության գործին։

Մեզ մնացել է երկու գլխավոր պահանջների մասին խոսել։ Առաջինն այն է, որ ուսումնարանը պիտի լինի անպայման աշխարհական, կրոնի ուսուցումը բոլորովին պետք է հեռացվի կրթության ծրագրից։

Այդ պահանջը սոցիալ-դեմոկրատիան դնում է՝ ինկատի ունենալով խղճի և համոզմունքի ազատությունը և այն, որ այժմ բուրժուական հասարակության մեջ կրոնը, հավատքը դարձել է դասակարգային հարստահարության, ճնշման մի միջոց։

Բուրժուական հասարակության պահանջներին շատ դեղեցիկ կերպով համակերպվում են թե՛ քրիստոնեական և թե՛ ուրիշ կրոնները։

Այն մխիթարությունը, որ նրանք տալիս են խեղճ, աշխատավոր դասակարգին՝ խոստանալով «այստեղի» տանջանքների և տառապանքների փոխարեն «այնտեղի» երջանկությունը՝ խոնարհության, հպատակության, ստրկության այն քարոզն ու փիլիսոփայությունը, որի իմաստը կարելի է արտահայտել՝ «Ամեն բան աստծուց է կախված» խոսքերով, միշտ եղել է մի զորեղ լծակ հարստահարվողների դիտակցությունը բթացնելու, մթնացնելու, միաժամանակ տալով ազատ ասպարեզ բուրժուական սանձարձակությունների։

Կրոնի ուսուցումը պիտի լինի մասնավոր գործ և ոչ պարտադիր։ Մանուկների ուղեղը պետք չէ ծանրացնել ավելորդ բալաստով և հենց մանկավարժական տեսակետից վնասակար պիտի համարել երեխայի հիշողությունը ծանրաբեռնել աղոթքներով, սաղմոսներով և առողջ դատողության ու տրամաբանության հակասող առասպելներով։

Դպրոցը, ընդհանրապես, նպատակ պիտի ունենա տալ դրական գիտական պաշար, պիտի պատասխանի կյանքի իսկական պահանջներին ու կարիքներին։

Երկրորդ պահանջն այն է, որ սորին ժողովրդական դպրոցներում դասավանդությունը լինի մայրենի լեզվով։

Այդ պայմանը շատ կարևոր պահանջներից ամենախոշորն է և մեծ նշանակություն ունի այնպիսի պետությունների մեջ, որտեղ մի քանի ազգություններ հպատակվում են մի իշխանության, օրինակ Ռուսաստանում։

«Լեզուն,—ասում է Կարլ Կաուցկին,— արդյունաբերության ամենակարևոր միջոցներից մեկն է». և, հիրավի, բավական է մի թեթև հայացք գցել այժմյան բուրժուական կազմի վրա, նկատելու համար, թե ինչ մեծ դեր է խաղում լեզուն հասարակական հարաբերությունների, առևտրի և արդյունաբերության վերաբերմամբ։

Այդ տեսակետից իշխող ազգության բուրժուազիան ձգտում է իր լեզուն դարձնել ընդհանուր և պարտադիր, ձգտում է դեպի ստիպողական հավասարեցումն, նիվելլիրովկան։

Ազգերի ասսիմիլացիան (ձուլումն), ի հարկե, կատարվում է, բայց չի հասնում կապիտալիստական արտադրության արագ ընթացքին, չի կարող նրա հետ միաժամանակ գնալ։ Եվ այդ է ստեղծում այժմյան ազգային պայքարը, ազգային զժգոհությունը։

Պրոլետարիատը տուժում է այդ պայմաններում, որովհետև նրա զարգացման խոշոր խոչընդոտներից մինն է այն պարագան, որ ժողովրդական դպրոցում ուսումը տրվում է

օտար, ոչ մայրենի լեզվով, ոչ այն լեզվով, որով նա սկսում է մանկությունից սովորել և խոսել։

Այդ հանգամանքը, կրկնում ենք, բացասական ազդեցություն ունի բանվոր դասակարգի լուսավորության, առաջադիմության վրա։

Օտար լեզվով ուսուցումը վանում է իրենից խեղճ դասակարգի զավակներին և, հասկանալի է, որ միջոցների աղության պատճառով նրանք մնում են բոլորովին անգրագետ, առանց կրթության։

Սոցիալ-դեմոկրատիան, մեկնելով պրոլետարիատի շահերից, պահանջում է, որ ստորին դպրոցներում ուսումը լինի անպայման մայրենի լեզվով...

Մանրամասնությունների մեջ չենք կարող առայժմ մտնել. ինքնըստինքյան հասկանալի է, որ կան, իհարկե, առանձնահատուկ պայմաններ ամեն մի վայրի համար. սրանք միայն այն ընդհանուր պահանջներն են, որ սոց.-դեմոկրատիան առաջադրում է դպրոցական հարցի վերաբերմամբ։

«Նոր Խոսք» №№ 3, 4, 5, 6,
Հոգոստոսի 23—31, 1906 թ.։
Ստորագրությունը՝ S.

ՈՒՐՎԱԳԻԾԵՐ

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԴՊՐՈՑԱԿԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎՈՒՄ

Ժողովրդական լուսավորության գործը մեր ինքնավարությունների ամենապատասխանատու և ամենալուրջ ֆունկցիան է։ Ընթերցողների առջև պարզաբանել կանոնավոր դրված, ավարտուն, պրակտիկ կյանքի համար անհրաժեշտ որոշակի գիտելիքներ տվող լուսավորության ամբողջ նշանակությունը թե՛ բնակչության շունևոր խավերի և թե՛ հենց քաղաքի, ամբողջ երկրի համար,—դա նշանակում է կրկնել արդեն հաղար անգամ ծամծմված ճշմարտություններ, դա հավասարազոր է «տարրական» բաներ ասելուն։

Քաղաքային տարրական կրթությունը կազմակերպելու գործում հենց առաջին անդամից աչքի են զարնում բազմաթիվ թերություններ և բացեր, որոնցից խուսափելը հաճախ դուրս է քաղաքային հասարակական ինքնավարությունների համար հնարավորի սահմաններից։ Բայց շատ բան կախված է քաղաքային դումաներից, և ահա Թիֆլիսի մեր դումայի այս բնագավառի գործադիր օրգաններից մեկի առթիվ մենք ցանկանում ենք մի քանի խոսք ասել։ Մենք նկատի ունենք «դպրոցական հանձնաժողովը»։ Ուշադիր նայենք նրա կազմին և ակամայից հարց կծագի՝ իսկապես ասած՝ ի՞նչ առնչություն ունեն այդ բոլոր պարոնները ժողովրդական լուսավորության, ժողովրդական դպրոցների հետ։ Իսկապես մենք հաճախ ենք լսում քաղաքային դումային կից ուրիշ զանազան հանձնաժողովների մասին, իսկ դպրոցա-

կանի մասին իմանում ենք միայն... երբ ազատ տեղերի համար պետք է ուսուցչուհիներ ընտրել։ Ռուսաստանի խոշոր կենտրոններում, քաղաքային ինքնավարությունների գոյության տասնյակ տարիների ընթացքում, կարողացել են ժողովրդական լուսավորության գծով նշանավոր գործիչներ մշակվել (Ստասյուլևիչը[89], Պոտեխինն[90] օրինակ), իսկ Թիֆլիսը, ամբողջ մի երկրամասի կուլտուրական և մտավոր կենտրոնը, որ այնպես գոռոզանում է իր «ինտելիգենտությամբ», ժողովրդական լուսավորությանը հասարակայնորեն ծառայելու անդաստանում հասարակական գործիչ չունի։

Ֆինանսների մի մինիստրի մասին, երբ շրջապատողները զարմանում էին, նրան այդպիսի բարձր և դժվարին պոստում տեսնելով, ասում էին՝ «նա ջուրթակ լավ է նվագում»։

Քաղաքային դպրոցական հանձնաժողովի անդամներից մեկի մասին ասում են՝ «նա լավ է հասկանում կանացի դեմքերից»։

Մեզ թվում է, որ եթե «լավ քննենք» այդ հանձնաժողովի բոլոր հարգելի անդամներին, ապա նրանցից յուրաքանչյուրի մեջ անշուշտ կյանքի համար արժեքավոր բազմաթիվ հատկություններ կարտահայտվեն, բայց և ոչ մեկը, որ թեկուզ հեռավոր կերպով, առնչություն ունենար ժողովրդական լուսավորության գործի դրվածքի հետ։

Ուսուցչուհիներ ընտրելով զբաղվելը— հասարակության «օգտին» նրանց կատարած աշխատանքի ամենա«ուրախալի» պահն է,— ահա նրանց գլխավոր ֆունկցիան։ Եվ առաջին հարցը, որով այդ հանձնաժողովում դիմավորում են քաղաքային ուսուցչուհու պաշտոն խնդրողներին, այս է՝ քեզ ո՞վ է հանձնարարում, ի՞նչ կապեր ունես։ Կապեր, խնամիություն, պրոտեկցիա—ահա այն ներքին հատկությունները, որ պետք է ունենալ՝ քաղաքային ուսուցչուհու տեղ ձեռք բերելու համար, իսկ մնացածը (փորձի, դիտության, դեպի

«փոքրիկ ուժերի» կրթության գործով սիրով վերաբերվելու նման մանրունքները), անշուշտ, հետո կավելանա։ Այսպես է մեղանում «աշխատում» գպրոցական հանձնաժողովը, որին «ինտելիգենտական» գուման է ընտրել ի շահ բնակչության, ժողովրդական մասսաների լուսավորության գործի համար։

«Курьер-Копейка» № 107,
օգոստոսի 23, 1910 թ.։
Ստորագրությունը՝ S.

ՈՒՐՎԱԳԻՐԵՐ

ԷԼԻ ՄԻ ՔԱՆԻ ԽՈՍՔ...

Պատկերավոր արտահայտվելով՝ տպագրական ներկը դեռ չէր չորացել լրագրական այն թերթի վրա, որտեղ լույս էր տեսել իմ հոդվածը «քաղաքային դպրոցական հանձնաժողովի» մասին, երբ ինձ մի քանի կշտամբանքներ արին ուսուցչուհիները՝ թե ես անիրավացի, անհիմն եմ մեղադրել նրանց... Ուստի շտապում եմ բացատրվել, որպեսզի առիթ չտամ սխալ դատողություններ և իմ խոսքերի անճիշտ մեկնաբանման։ Ես մեղադրել եմ ոչ թե ուսուցչուհիներին, այլ «խնամիության, ազգակցության և պրոտեկցիայի» այն ղղվելի մթնոլորտը, որ անկասկած այնտեղ, դպրոցական հանձնաժողովում տիրում է, և այնտեղից մինչև այն ժամանակ չի արտաքսվի, քանի դեռ նրա անդամները չեն դարձել իրենց վրա դրված հասարակական կարևոր ֆունկցիային իսկապես լուրջ և սիրով վերաբերվող մարդիկ։

Մեր մունիցիպալ ավգյան ախոռների այդ մաքրմանը երկար պետք է սպասենք և դժվար թե շուտով իրականանա։ Բայց չնայած երկար սպասելու հեռանկարին, այնուամենայնիվ նրանց քննադատելը չէր խանգարի։

Գուցե ամաչեն...

Ուսուցչուհիների մեջ լավ, գիտակ, փորձառու աշխատավորներ շատ կան— ես այդ փաստը չեմ ժխտել։ Ինձ փասալի այլ կողմն էր հետաքրքրում. թե նրանք ի՞նչպես են ընկել քաղաքային դպրոցները։

Եղե՞լ է արդյոք նախնական «գայթակղություն», փորձից

հետո համոզվի՞լ են արդյոք այս կամ այն ուսուցչուհու լավագույն հատկությունների վերաբերմամբ, թե՞ ոչ։

Գերմանիայում, օրինակ, ոչ ոք չի կարող մանկավարժի պատասխանատու պոստը գրավել առանց նախնական միամյա ստուգման։ Իսկ մեզանո՞ւմ։ Ամբողջ ցավն այն է, որ լավ աշխատողը, լավ ուսուցչուհին պատահմամբ է ընկնում «ընտրյալների» շարքերը։

Ոչ թե իր պրոֆեսիոնալ հատկությունների շնորհիվ, այլ ուրիշ կարգի պատճառներով՝ կապեր ուղրավայում, աղդեցիկ ձայնավորի օժանդակություն և այլն և այլն։

Նորմա՞լ բան է արդյոք այս։

Նման կարգերը չե՞ն վնասում արդյոք ժողովրդական դպրոցին։

Չէ՞ որ քաղաքային յուրաքանչյուր ուսուցչուհի կարող է իր արկածների բազմաշարշար մի ողիսական պատմել, մինչև որ ինքը հասել է «խաղաղ նավահանգիստ» քաղաքային որևէ դպրոցում։

Ահա ինչ էի ուզում ես նշել և ինչի դեմ պետք է պայքարին հասարակական բոլոր կենդանի ուժերը։

«Курьер-Копейка» № 108,
օգոստոսի 24, 1910 թ.։
Ստորագրությունը՝ S.

ՈՒՐՎԱԳԻՐԵՐ

ԴՊՐՈՑԱԿԱՆ ՍՈՎ

Սկսվեց ուսումնական տարին և դարձյալ ծայր առավ դուրս մնացած երեխաների և նրանց ծնողների աղաղակը։

Հարյուրավոր փոքրիկ քաղաքացիներ քաղաքային դպրոցների շեմքից դուրս են մնացել և հարկադրված են նախանձով, արտասուքը աչքերին նայել իրենց ավելի երջանիկ հասակակիցներին։

Նորմա՞լ բան է արդյոք սա։

Ժողովուրդը սովորել է ուզում, գիտություն ու լույս է ուզում, նա գիտակցել է գրագիտության մեծ նշանակությունը, իսկ նրան մերժում են, փոխանակ լայնորեն ու հյուրընկալությամբ բանալու նրա առջև դպրոցական դռները։

Դուցե թե շատ երեխաների այլևս չվիճակվի նստել դպրոցական գրասեղանին, գիրք վերցնել ձեռքը, որովհետև անողոք կարիքը կբշի նրանց վաստակելու, արհեստ սովորելու, կդնի «աշակերտի» ծանր դրության մեջ։

Եվ դպրոցների այդ պակասը, քաղաքային տարրական դպրոցներում ա՛նտեղ մնացած երեխաների այդ մասսան կրկնվում է տարեցտարի։

Վերջ կդրվի՞ արդյոք իրերի այդպիսի դրությանը և մենք շուտո՞վ արդյոք ձեռք կբերենք ընդհանուր համաժողովրդական, ձրի, պարտադիր ուսում։

Քաղաքային ինքնավարությունը փող է փոխ առնում, մի՛լիոնանոց փոխառություններ է կնքում կամուրջների,

սպանդանոցների, էլեկտրական լուսավորության համար, երբ մեր երեխաների գլուխները չեն կարողանում լուսավորել գիտության լույսով, պետք է խորասուզված մնան խավարի և տգիտության մեջ։ Երբ բնակչության մասսան անդրադառնում անկուլտուրական է, կատարելագործված սալահատակը մի թանկարժեք ժապավեն է աղքատիկ բաճկոնի վրա։

«Ավելի լավ է, թող էլեկտրական լուսավորությունը հանդչի մեր դահլիճում»,—ասում էր Մոսկվայի դումայի մի ձայնավոր,—«քան թեկուզ մեկ երեխայի կրթություն մերժվի»։

Ոսկե՞ խոսքեր։ Թող այս մարդերում պինդ պահեն մեր ձայնավորները։ Իհարկե, նրանք առանձնապես տրամադրություն չունեն մտածելու ժողովրդական դպրոցների մասին։ Նրանք լավ սալահատակով կշրջագայեն, էլեկտրական լապտերները կլուսավորեն նրանց ուղին, իսկ նրանց որդիները քաղաքային տարրական դպրոցներում չեն սովորում։

Բայց քաղաքի արտաքին բարեկարգության գծով բոլոր ջանքերը ուղղակի ոչ մի բանի չեն հասցնի, և հարուստ թաղամասերի դիմաց կանգնած կլինեն սոսկալի տոնաների սարսափելի ուրվականները՝ համաճարակները, եթե գիտության բարերար ուժը չփարատի «խավարի իշխանության» ճնշումը ժողովրդական մասսաների վրա։

Լո՞ւյս, որքան կարելի է շատ լո՞ւյս—ահա թե հրամայական ինչ է պահանջում կյանքը, ահա թե ինչի է բնազդաբար ձգտում բնակչության լայն խավերի արթնացող ինքնագիտակցությունը։

Իսկ այժմ, ի՞նչ անել։ Ի՞նչպես բավարարել բնակչության օրինական պահանջը։ Ինձ թվում է, որ քաղաքային ինքնավարությունը կարող է ելք գտնել ստեղծված դրությունից և ոչ մի դպրոցականի դպրոցի շեմքից դուրս չի թողնի։ Դրա համար անհրաժեշտ է բանալ զուգընթաց բաժանմունքներ, իսկ եթե այդ հնարավորությունը չկա, ապա, այն ժամանակ, նույն շենքերի մեջ երեկոյան պարապմունքներ կազմակերպել։

Ճիշտ է, այս միջոցառումն էլ թերություններ ունի, բայց ավելի լավ է փոքրիկ անհարմարությունը, քան թե փողոցում մնան հարյուրավոր մանուկներ։

Ամենորդ ուսուցչական անձնակազմ վարձելու համար շատ ծախսելու հարկ չի լինի, և, վերջապես, բնակչության այս պահանջմունքի վրա ծախսը պետք է կատարվի ամենից առաջ։

Ահա ձայնավորները հավաքվել են «ընտրությունների» մասին դատելու և կարգադրելու։ Դուցե նրանք իրենց խորհրդակցություններում հիշեն նաև բնակչության կենսական անհետաձգելի կարիքների մասին, նրա դպրոցական սովի մասին։

«Курьер-Копейка» № 117,
սեպտեմբերի 2, 1910 թ.։
Ստորագրությունը՝ S.

ԿՅԱՆՔԻ ԿՈՆՏՐԱՍՏՆԵՐԸ

Կյանքը սիրում է կոնտրաստներ, սիրում է հակասություններ և փոխադարձաբար իրար բացառող փաստեր ստեղծել։

Ստրինդբերգի[1] «Կարմիր սենյակ» մի ռոման է, որ գրեթե լուսանկարչական ճշտությամբ պատկերում է Շվեդիայի հասարակական հոսանքները մարդկային մտքի բոլոր բնագավառներում։ «Կարմիր սենյակը» սիմվոլն է այն ամենի, ինչ որ պայծառ, ջահել, կենսուրախ և նորաշունչ է Սկանդինավյան թերակղզում։

Այդ նոր գաղափարները կրող երիտասարդները հավաքվում էին Ստոկհոլմի մի ճաշարանի «Կարմիր սենյակում»։

Իսկ մեզ մոտ, Թիֆլիսում «Կարմիր սենյակ» են անվանել երիտասարդ կյանքերի խորտակման տեղը, պատանեկական հույսերի ու սրտերի անբարոյացման որջը, սեռական այլանդակության պատսպարանը, ձիերի մարզարանը, ուր ապուշներն իրենց անասնական բնազդներն էին դրսևորում։

Այսպես, կյանքն իր զարգացման ընթացքում նորացման սիմվոլը դարձրեց նողկալիության ու դատարկության էմբլեմա։

***

Habeas corpus—անձի անձեռնմխելիություն— բազմաթիվ ժողովրդների երազանքի, ձգտումների, տենչանքի և պայքարի առարկան։ Այն երաշխիքն է դա, որ մենք սպա-

սել և սպասում ենք մեր յուրահատուկ «կոնստիտուցիայից» և որին գոնե մինչև այժմ դեռ չենք արժանացել։

Եվ հանկարծ՝ իրավական մեր ողջ խառնաշփոթության կողքին՝ մենք տեսնում ենք մեզ մոտ, Թիֆլիսում կոնստիտուցիոն ամենակարևոր երաշխիքի— անձի անձեռնմխելության իրականացումը։

Միայն թե այն, ինչպես և ամեն ինչ, շատ յուրովի և միակողմանի է բեկվում մեր կյանքի պրիզմայում։

«Կարմիր սենյակ» որջի կազմակերպիչներն ազատորեն զբոսնում են, իսկ նրանց վավաշոտության զոհերին, «փոզոցի» անզուսպ ծաղրանքների ներքո, քարշ են տալիս հարցաքննության։

Ակներև է, որ գլխավոր հանցապարտներին ձեռք չեն տալիս, պատասխանատվության չեն կանչում, որովհետև դատական որոշում դեռ չի եղել։

Իսկ բարոյապես սպանված և հոգեպես մաշված, տանջված երիտասարդության նկատմամբ յուրահատուկ այդ Habeas corpus-ը կիրառելի չէ՞ միթե։

***

Վերջապես, հինգ կոպեկանոց թերթերի մեծ սավաններն էլ խոսեցին այն խոցի, այն թարախակալած վերքի մասին, որ այնպես անսպասելի, այնպես հիմանդագին կերպով առաջացավ հասարակական օրգանիզմի վրա։

Բայց ի՞նչպես խոսեցին։ Մ. Վ. Մաշաբելին[92], Պ. Ա. Գոտուան և պ. Նորդը,— բոլորը միացած մի տարուկ ընկերության մեջ և մի բուռն ձգտումով,— պաշտպանել Սոլոլակի բուրժուազիայի[93] «ընտիր հասարակությունը»։ Մոռացված են բոլոր դասային, ազգային սահմանները ու միջնորմները. մոռացված են հայ—վրացական կոտորածի կոչերը և այդ տրիոն դուրս է գալիս մեր դեմ, փորձում է անզոր կատաղությամբ ու նախանձով քացի տալ մեզ։

Այսպես ահա փողի պարկը միավորեց «վրացական» օրգան «З[акавказская] Р[ечь]»-ը «հայկական» Т[ифлисский] Л[исток]»-ի և ազնվական «Закавказье»-ի հետ։ Սրտաուշ և խրատական միավորություն։

«Листок-Копейка» № 25,
փետրվարի 1, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ՊՆԱԿԱԼԵԶ ԺՈՒՌՆԱԼԻՍՏՆԵՐԻՆ

«Մեծ մամուլը» ոչ մի կերպ չի կարողանում հանդըստանալ և անզոր կատաղությամբ ջանում է կծել մեր կրունկները[94]։ Միանգամայն հարմար զբաղմունք է դա այդպիսի՝ թող ներվի մեզ ասել, «ժուռնալիստների» համար, որովհետև պարոնայք Նորդերը և Խաչատուրովի թերթի անոնիմները միայն մի բան գիտեն՝ սողալ այս աշխարհի հզորների առաջ, «հասարակության» ազդեցիկ անձնավորությունների, փողի պարկի առաջ։

Այո, մենք «փոքրիկ թերթ» ենք հրատարակում, մի թերթ, որ հանրամատչելի և մասսայական է, որը խոսում է բնակչության լայն խավերի կարիքների ու ցավերի մասին, ազնվորեն և միանգամայն անկախ կերպով մատնանշում բոլոր թերությունները, բոլոր պակասությունները, հասարակական բոլոր ախտերը։

Սենսացիա առաջ բերելու ցանկությամբ չէր, կոպեկներ վաստակելու ձգտումից չէր, որ մենք խոսեցինք «Կարմիր սենյակի», «սիրո լիդայի» մասին.— դրանով ապրում են պարոնայք Նորդերը, որոնք ծախել են իրենց բոլոր համոզմունքները, իրենց ամբողջ անցյալ կյանքը՝ «երեխաներին մի կտոր հաց հասցնելու համար»։

Մենք ղեկավարվել ենք միակ մի ցանկությամբ,— մեր երիտասարդության չկազմավորված, քնքուշ ծիլերը զերծ պահել ու փրկել այն մարդկանց սպանիչ ազդեցությունից, որոնք իրենց պոռնկական ընազդները բավարարելու համար ղոհեր են փնտրել սովորող երիտասարդության մեջ։

Եվ մենք այս ուղղությամբ մասամբ հասանք մեր նպատակին։

Մենք հաստատ հույս ունենք, որ պատշաճ անաչառության դեպքում, քննությունը պետք է դրսևորի մայթերը չափչփող ոսկեջրած պճնամոլների, հին ալֆոնսների և տհաս միտրոֆանուշկաների[93], այդ տաքուկ կոմպանիայի զզվելի ֆիզիոնոմիան։

Մի՞թե այդ սավրասների մերկացումը հավասարազոր է հիմքերի տատանման և սպառնում է հասարակական անողորմության։

Եվ մի՞թե տպագիր օրգանի համար լավագույն բնութագիրը չէ այդ բոլոր «հերոսների» պաշտպանությունը, այդ ամբողջ կեղտի կոծկումը։

Ա՜խ, պ. Նորդ, ավելի լավ կլիներ, որ դուք լռեիք։

Չէ՞ որ ձեր յուրաքանչյուր ելույթը գարշանքի զգացում է առաջ բերում շատ թե քիչ կարգին մարդկանց մեջ։

Չէ՞ որ էապես դուք մարդ էլ չեք, այլ՝ «մարդկային դոկումենտ»։

«Листок-Копейка» № 32.
փետրվարի 9, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ՄԱՄՈՒԼ

Հայ մամուլն ամբողջովին զբաղված է եկեղեցական գործերով և նրա յուրաքանչյուր էջից նայում է, ուղղակի ցցված է վարդապետական վեղարը։ Մնացած ողջ կյանքը հոսում է այդ մամուլից հեռու, կարծես չշփվելով նրան, չարտացոլվելով, չարձագանքելով նրա մեջ։

Վերջին ժամանակներս տեղական հասարակությունը խորապես հուզված էր այն կաղմակերպության հայտնաբերումով, որը սիստեմատիկորեն դայթակղեցնում էր սովորող երիտասարդությանը։ Հայերեն լեզվով հրատարակվող թերթերն ամբողջովին լռության մատնեցին այդ թարախակալած վերքը, կամ՝ եթե արձագանք տվին, այն էլ երկուերեք բառերով, իհարկե, ամբողջ մեղքը բարդելով ուրիշի վրա։

Ինչո՞ւ է հայ մամուլն այդպիսի լռության մատնում այդ հարցը, այդքան «փափկանկատ» վերաբերմունք ցույց տալիս դեպի այն։

Արդյո՞ք մեղադրանքի լրջությունն է կասեցնում հայ ժուռնալիստներին։

Փափկանկատությունը խորթ գաղափար է հայ մամուլի համար.— ամեն մի հայ լրագրի յուրաքանչյուր համարում դուք կգտնեք թե՛ հայհոյանք և թե՛ ամեն տեսակ մեղադրանքներ, որոնք շպրտվում են անպուսապ կերպով և առանց քաշվելու։

Արդյո՞ք դա այն պատճառով է, որ այդ կեղտոտ պատմությանը մեղսակից են նաև Սոլոլակի հենց այն բուրժուազիայի վերնաշերտերը, որոնց առջև հայ մամուլի բոլոր օրգանները, անկախ նրանց ուղղությունից ու գույնից, խոնարհվում են ինչպես «ազգային բարերարի» առաջ։

Բայց... մենք ներողություն ենք խնդրում այսպիսի հախուռն պարսավանքի համար։ Մի թերթ, այնուամենայնիվ, ձայն հանեց։ Դա «Կայծեր»[96] թերթն է։ Նա արհամարհանքով խոսեց «կոպեկանոց մամուլի» մասին, որն իբր թե եկամտի աղբյուր դարձրեց «Կարմիր սենյակը»։

Այդ հարցին այլ կերպ է վերաբերվել մեծ մամուլը,— հավատացնում է «Կայծերը»,— նա վերաբերվել է լուրջ, մատնանշելով միայն փաստը, սպասելով քննության արդյունքներին։

Հրաշալի է, պ. Դար. Երիցյան։

Սակայն դուք կրկնակի եք ստում։

Չէ՞ որ մեծ մամուլը ոչ թե երկու-երեք տողով է սահմանափակվել, այլ լռել է գիտակցաբար, իսկ երբ ստիպված է եղել խոսելու, նրա էջերից այնպիսի «բուրմունք» է փչել, որ հասարակության բոլոր կարգին տարրերը սկսել են երես դարձնել նրանից։

Իսկ պ. Դար. Երիցյանն իր թերթիկում հանդիսատ, առանց կարմրելու անճշտություն է ասում «ռուսական մեծ մամուլի» մասին և փորձում է կոպեկանոց մամուլին վերաբերող բարեհիմարություններով թոզ փչել ընթերցողների աչքերին։

Ընդամենը երկու-երեք օր առաջ «Կայծեր» թերթն արժեր մի կոպեկ, հետո բարձրացրին գինը, դարձրին «երկու կոպեկանոց» թերթ։

Եվ ահա այդ ավելորդ կոպեկը Դար. Երիցյանին հնարավորություն է տվել արհամարհանքով խոսելու «կոպեկանոց մամուլի» մասին։

Այսպիսով, կոպեկներով է չափվում միքանի «ժուռնալիստների» տոնը, ուղղությունն ու բարոյական դիմքը։

«Листок-Копейка» № 35,
փետրվարի 12, 1911 թ.։

ՄԱՄՈՒԼ

ԱՄԵՆԱՀԵՂԻՆԱԿԱՎՈՐ ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Արդյոք ընթերցողը գիտե՞, թե Ռուսաստանի պարբերական հրատարակություններից որն է ամենապատվելին։ Դուք կարծում եք «Вест. Евр.»[97] կամ «Русск. Богатство»[98]-ն, «Русск. Вед.»[99] ոմանց համար, իսկ «Новое Время»[100]-ն մյուսների համար։ Չարաչար սխալվում եք։ Այդ հրատարակությունը մեզանում, Թիֆլիսումն է և նրա անունն է... «Տարազ»[101], որ խմբագրում է փորթուգալական գիտությունների ակադեմիայի ներկայացուցիչ Տիգրան Նազարյանը։

Խոստովանք լինի, որ չգիտեինք և մենք թե գոյություն ունի այդպիսի հեղինակավոր հրատարակություն, այն էլ հենց մեր կողքին։ «Տարազը», ըստ նրա խմբագրի հաճախակի խոստովանության, ունի ընդամենը տասը վճարող բաժանորդ։ Դա հսկայական մի թիվ է «հեղինակավոր» ժուռնալի համար. հարկավ, մարդարեն իր գավառում պատիվ չունի, ինչպես այդ երևում է, «Տարազի» հետևյալ պատասխանից «Листок-Копейка»-ի այն կշտամբանքին թե՝ կովկասահայ մամուլը լռության մատնեց կարմիր սենյակի փաստը։ Փորթուգալական ներկայացուցիչը գրում է («Տարազ» № 2, 1911 թ.).

«Երևուն տարուց ի վեր մենք մամուլի մեջ աշխատում ենք և մեզանից ավագադույն խմբագիր-հրատարակիչ չկա Թիֆլիսում և անշուշտ (!) ամբողջ Կովկասում։ Հարցնում ենք, «Վիստ. Կոպ.», ե՞րբ և որտեղ է նա գտել մեր հրատարակությունների մեջ ամենահեռավոր պաշտպանությունն անգամ Սոլոլակի հպատակող բուրժուաներին։

Հրապարակով պահանջում ենք նորածին թերթից ապացույց, մանավանդ, որ մեր հրատարակություններն ոչ թե Ռուսաստանում այլ համաշխարհային մամուլի ընտանիքի մեջ ճանաչված են հեղինակավոր (ընդգծումը «Տարազի» խմբագրությանն է) և այդ վավերացված է նույնիսկ Լոնդոնի կոնֆերանսում, որին հրավիրված էին բացառապես աշխարհիս մամուլի ավտորիտետները, որոնց թվում Ռուսաստանից բացառապես մենք»։

Խոստովանում ենք, որ մեր կշտամբանքը ոչ մի կերպ չէր վերաբերում «Տարազին», որի գոյության մասին մենք չենք էլ կասկածել, բայց շատ ուրախ ենք, որ մի նոր Պապրիշչին[102] *հայտնաբերեցինք։*

«Листок-Копейка» № 43,
փետրվարի 22, 1911 թ.

ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՄՈՒԼԻՑ

Մեր թերթերի էջերում մենք մատնանշել էինք հայ մամուլի անտարբեր վերաբերմունքը դեպի այն հարցերը, որոնք անմիջականորեն չեն շոշափում հայ կյանքի սպեցիֆիկ շահերը, մատնանշել էինք, որ հայ թերթերում արծարծվում են միայն էջմիածնի և կոնսիստորիաների ինտրիգանների հարցերը[103]։ Այդ ակներև է բոլորին, ովքեր օրը օրին հետևում են հայ «այբենարան կազմողների» դրած նյութերին,— մարդկանց, որոնք մեր օրերում տիրացել են մամուլին և իրենց կոմպետենտ են երևակայում հասարակական ու քաղաքական բոլոր հարցերի նկատմամբ։

Բայց հայ մամուլի «հրապարակախոսները» երբեմն ընդհանուր հարցերի շուրջը ընդհատում են իրենց լռությունը և արձագանք են տալիս «օրվա թեմաներին»։ Այսպես, «Հորիզոն»-ն արձագանքեց երկու հարցի.— Ս. Ջ. Միրզոևի առաջարկին՝ անգլիական մի խումբ կապիտալիստների կողմից Մադաթովի կղզին քաղաքի և նրա բարեկարգության համար ձեռնտու և հարմար պայմաններով դնելու մասին և «Կարմիր սենյակի» վերաբերյալ պաշտոնական բացատրությանը։

Թե առաջին և թե երկրորդ դեպքում աչքի են ընկնում, թիթ են ծակում այն ցանկությունների բուրմունքները, որոնցով ղեկավարվել են և՛ Ս. Ջ. Միրզոևի մասին դրող պ. Խ.-ն և այն անանուն հեղինակը, որը ցասում է թափում «մամուլի մի որոշ մասի» հասցեին, որը տարածեց տխրահռչակ «սիրո լիդայի» վերաբերյալ լուրերը։

Նրանց բոլոր դատողությունները սպիտակ թելով են կարված, և նրանց շինծու վրդովմունքի թաքցրած դպա-

նակները պարզ են ինչպես արևի լույսը։ Չէ՞ որ մենք նրանց «թոկույն ճանաչեցինք ականջներից»։

Պ. Խ.-ն, որ բոլորովին չի առարկում Ս. Զ. Միրզոևի կողմից քաղաքին արված առաջարկի դեմ, փորձում է հարցը դնել «բարոյական հողի» վրա և տխրում է «մեր բուրժուական հասարակության անկման» առթիվ, որը փողեր է ընդունում նույնիսկ «արատավորված անձնավորություններից»։

Մենք բոլորովին նպատակ չունենք պաշտպանելու որևէ մեկին, բայց ուզում ենք «հորիզոնականներին» տալ մի հարց.— վազո՞ւց է, որ նրանք առել են փողի հոտը։ Եվ մի՞թե նրանք, փող ստանալով և «բարեգործներին» քծնությամբ ու ստրկամտությամբ վեր հանելով մինչև անհասանելի բարձրություն, ուշադրությա՞ն են առել այն, թե որտեղի՞ց, ի՞նչ աղբյուրից է ծագում այդ «ողորմածությունը»։ Վերջապես մի՞թե Ներսիսյան դպրոցը և շատ ուրիշ դպրոցներ կառուցված են, կառուցվում ու հիմնվում են այնպիսի փողերով, որոնք արդյո՞ւնք չեն ժողովրդի արյուն-քրտինքի և ձեռք են բերված նրա անօրինակ շահագործման միջոցով։

Պ. Խ.-ին հարկավոր էր անձնական հաշիվներ մաքրել և «հորիզոնականները» նրան տրամադրեցին իրենց թերթի էջերը։

Այդպես է միթե՞ վարվում լուրջ թերթը։

Սակայն նա ավելի հեռու է գնում իր ստրկամտությամբ և «Կարմիր սենյակի» առթիվ ասում է մի շարք բարեհիմարություններ, որոնք, իհարկե, ոչնչով չի կարելի հաստատել։

Շնորհավորում ենք «հորիզոնականներին» պ. Նորդի հետ «տաք և հաճելի» կամպանիա կազմելը և պ. Նորդին,— «միացյալ գռեհկության» նոր անդամ գտնելը։

Դեպի պաշտոնական բացատրությունը տածած հավատը, որ այնպես բոցավառվել է «հորիզոնականների» սրտե-

բում, թող ապադայում ուղեցույց աստղ լինի նրանց համար։ Այդ օգտակար է, մանավանդ որ մոտիկ ապադայում կատարվելու է «Հորիզոնի» «այուներից» մեկի՝ Շիրվանզադեի հոբելյանը։ Իսկ այդ «ազգային» հանդեսի համար Սոլոլակի բարեհաճությունը վճռական նշանակություն ունի։

«Листок-Копейка» № 61,
մարտի 15, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իզգոյ

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԷԼԻ ՄԻ ԼԱՎ ԴԻՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆ...

Թիֆլիսում կազմակերպվեց մի համակրելի հիմնարկություն՝ «մանկական ակումբ», որի նպատակն է, որքան ես կարողացա այդ հասկանալ ու ըմբռնել խոսակցություններից, նոր, «ազատ» սկզբունքներով ու հիմունքներով արտադպրոցական դաստիարակություն տալ երեխաներին։

Այս գործում առանձնապես համակրելի է մի ցանկություն՝ հավաքել «փողոցի երեխաներին», խելացիորեն աղդեցություն ունենալ նրանց խելքի և սրտի վրա, նրանց մեջ արթնացնել «մարդը», վայելչացնել, բարի խոսքով դուրդուրել նրանց, որի կարիքն այնքան շատ են զգում նրանք, պայքարել «փողոցի կյանքի» այն ապականիչ աղդեցության դեմ, որին ենթարկվում են նրանց զգայուն, քնքույշ հոգիները։

Չէ՞ որ երեխաները «կյանքի ծաղիկներն են»։

Այդպիսի դիտավորության հանդեպ կարելի է միայն ուրախանալ, կարելի է միայն հաջողություն ցանկանալ հասարակական այդ վեհ գործին։

Սակայն... հազիվ թե մեզանում որևէ բան դուրս գա այդ «ձեռնարկումից»։

Թերթերում գրեցին այդ «մանկական ակումբի» մասին, հայտարարություններ տպվեցին անդամների ժողովների մասին, հաշվետվություններ եղան, բայց իրականում գործը մի քայլ անդամ առաջ չշարժվեց։

Ինչո՞ւ։ Որովհետև մեզանում չկան գործի մարդիկ, որովհետև բոլորը խոսում են և խոսում, ժողովների են նստ-

տում երեկոյից մինչև ուշ գիշեր և տարրական ճշմարտություններով լի իրենց ճառերում «ընդհանուր հարցեր» են շոշափում։ Բայց ահա ոչ ոք չկար, որ գնար դասախոսական ժողովին և վերջինս չկայացավ։

Վերջերս մի մայր իր երեխաներով գնաց «մանկական ակումբի» էքսկուրսիային և սկզբում վրացական կիրակնօրյա դպրոցի աշակերտների հետ ընկավ Սիոնի տաճարը, ուր նրա երեխաները դիտեցին ժամանակի ընթացքում դեղնած մագաղաթները, հետո Հավլաբարի ինչ որ դպրոցի հետ գնաց «բնության գիրկը»—նահանգական բանտից այն կողմը։ Այդ մայրն իր երեխաների հետ «մանկական ակումբը», որպես այդպիսին, չգտավ։ Որոշեց այլևս չգնալ «մանկական ակումբի» էքսկուրսիային։

Այսպես մեզանում խորտակվում են բոլոր ձեռնարկությունները, այսպես մեզանում եռանդը չի պակասում միայն խոսքեր շռայլելու համար, այսպես մեզ «վիճակված են միայն բարի ձգտումներ, իսկ կատարել ոչինչ չենք կարող»[104]։

«Листок-Копейка» № 69,
մարտի 24, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

Մ. Ս. ՍՊԱՆԴԱՐՅԱՆԻՆ ԴՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

Նոյեմբերի 27, 1914 թ., [Մոնաստիրսկոյե գյուղ, Տուրուխանյան երկիր]

Թանկագին մանչուկս, սիրելի երեխաներ։

Ստացա բոլոր նամակները, բացիկներն ու լուսանկարները։ Դրանք բոլորը ես ստացա միանգամից, որովհետև համարյա երկու ամիս մեղանում փոստ չէր ստացվում, այստեղից էլ մոտավորապես նույնքան ժամանակ չէր գնում։ Ճանապարհները խանգարվել էին։ Այդ մասին մի քանի անգամ ես գրել եմ ձեզ։ Այս նամակից առաջ ես ձեզ գրել եմ մի մե՞ծ, մեծ նամակ։ Ստացե՞լ եք թե չէ։ Ձեր նամակներից այդ չի երևում։ Հիմա ստիպված պիտի միայն պատվիրված նամակներ ուղարկել ձեզ. հասարակները կկորչեն։

Չէ՞ որ այժմ պատերազմն անմիջականորեն ձեզ էլ է դիպել և պետք է հասկանալ, որ ամենայն հավանականությամբ խառնաշփոթություն է տեղի ունենում։ Բադրատ Սեմյոնիչին մեծ շնորհակալություն «Кавказское Слово»-յի համար։ Հետաքրքիր է կարդալ խատիսովների, Դոլուխանովների և այլ գրպանային գործոց վարպետների մեծախոսությունները։ Եթե դուք, զավակներս, երբեմն լսեք այն, ինչ որ նրանք գրում են կամ ասում, դուք նրանց բոլորովին մի հավատաք։ Նրանք խաբեբաներ են, որոնք վաճառում են իրենց խիղճն ու պատիվը, եթե միայն խիղճ ու պատիվ ունեն։

Երևի դուք, զավակներս, լսել եք, որ ֆրանսիական Ռեյմս քաղաքի ռմբակոծության ժամանակ գերմանական կրակոցներից վնասվել է հին եկեղեցին, կաթոլիկական տաճարը. այս առթիվ շատ են գրել և աղմկել, այդ տաճարի

ավերումն անվանել են վայրենություն, բարբարոսություն և այլն և այլն։ Հապա մտածեցեք, զավակներս, թե ո՞րն է ավելի սարսափելի,— տաճարի ավերո՞ւմը, թե հազարավոր ու միլիոնավոր մարդկանց կոտորածը։ Մինչդեռ հիմա ամեն օր, ամեն ժամ, ամեն րոպե հազարավոր, հարյուր-հազարավոր մարդիկ սպանում են մեկ մեկու, միլիոնավոր երեխաներ որբ են մնում, միլիոնավոր մայրեր զրկվում են իրենց երեխաներից, տասնյակ-միլիոնավոր մարդիկ քայքայվում են, սովի մատնվում։ Պատերազմն ինքնին զարհուրելի, վայրենի, բարբարոսական բան է, մանավանդ այնպիսին, ինչպիսին է այս համաշխարհային պատերազմը։ Մենք այժմ բոլոր տեսակետներով տխուր մի ժամանակ ենք ապրում, և դուք, զավակներս, մի՛ շարունակ... Կգա ժամանակ, մշուշը կցրվի, վրա կհասնի արդյունքների ծովի, արյան օվկիանոսների, միլիոնավոր խորտակված կյանքերի հաշվելման ժամը։

Ուղարկում եմ ձեզ իմ լուսանկարները։ Զմիծաղեք։ Ես ուղղակի ինչ-որ արաբի նման եմ դուրս եկել։ Այն էլ ասեմ, որ ընտրել եմ ամենալավ նկարները։ Այդպես է մեր լուսանկարիչը։ Ինձ, ուղեղիս, նա դեռ զարդարել է։ Իսկ շունը, դա Վերնին է, իմ շատակեր ու խորամանկ շունը։ Նրա մասին ես արդեն գրել եմ ձեզ։ Հիմա ես շնասահնակ ունեմ, լծում եմ Վերնիին, Լեբեդին և Դամկային ու գնում։ Չիերս դեռ մատաղաշ են, շատ են շարշարվում, բայց ոչինչ, կսովորեն։ Ես մի շաբաթ աշխատել եմ անտառում, ապրել եմ անտառի հեռու խրճիթում, քիչ էր մնացել, որ քիթս սառեցնեի (43 աստիճանի սառնամանիք էր), բայց և այնպես վաստակեցի 9 ռուբլի։ Բայց էլ չգնացի։ Շատ ծանր է և վեր է իմ ուժերից։ Պարտք ունեի, վճարեցի այդ վաստակով։

Այն գրքերը, որ դու կարդում ես, ոչինչ, վատ չեն, բայց ավելի լավ կլիներ շատ կարդալ բնագիտությունից։ Այ, ես շատ քիչ բան գիտեմ բնության մասին և հաճախ տուժում եմ դրանից։ Ժամանակ ունես՝ կարդա՞, սովորի՛ր։

Հիմա քո իսկական ոսկի ժամանակն է։ Ուրախ եմ քո առաջադիմության համար, Մանյուրկա։ Եվ է՛լ ավելի ուրախ կլինեի, եթե քո զարգացման, քեզ հետաքրքրող և հուզող հարցերի մասին դատեի ո՛չ թե թվանշաններից, այլ քո նամակների բովանդակությունից։

Ինչպե՞ս եք սովորում նոր լեզուները— գերմաներենը, ֆրանսերենը։ Գրիր ինձ հաճախ, գրեցեք, զավակներս։ Ես շատ անգամ մտածում եմ ձեր մասին, խախծում ու ձանձրանում եմ այս մռայլ օրերում։ Մեղանում լույսը բացվում է տասներորդ ժամին և մթնում է ժամը 3-ին, ցերեկն էլ այնպես է, ինչպես ձեզանում լինում է աշնանը, մթնշաղին։

Ես արդեն ձեզ գրել եմ, որ կարիք ունեմ ամեն ինչի, մանավանդ գրքերի և ընթերցանության։ Եթե մի բան ձեռք ընկնի, չմոռանաք ինձ։

ՁԵՐ ՊԱՊԱ

Թարգմ. ռուս.։

ԵՐԵԽԱՆՆԵՐԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

Մարտի 9. [1915 թ., Մոնաստիրսկոյե գյուղ, Տուրուխանյան երկիր]

Իմ թանկագին զավակներս։ Ահա արդեն երեք անգամ փոստ է եկել, իսկ ձեզանից նամակ չկա։ Ինչո՞ւ չեք գրում։ Չէ՞ որ առանց նամակների ձանձրալի է։ Մինչև այս նամակը հասնի ձեզ, արդեն կլինի ապրիլի վերջը և շուտով կբացվեն ձեր փոխադրական քննությունները... թե՞ այս տարի քննություններ չեն լինելու։ Այս բոլորի մասին ինձ գրեք մանրամասն և հանգամանորեն։ Եղանակը մեզ մոտ արդեն

սկսել է տաքանալ և սառնամանիքներն այլևս խիստ չեն լինում՝ 20—25 աստիճան։ Այստեղ սա նույնիսկ հաճելի է։

Սարսափով եմ մտածում ամառվա մոտենալու, այսինքն մոծակների ու մժղուկների մասին։ Ինչպիսի տանջանք կըսկըսվի։ Այժմ ես եռանդով զբաղվում եմ գերմաներեն լեզվով, իսկ մոտ օրերս կսկսեմ նաև ֆրանսերենը։ Մի բան վատ է. ես կանոնավոր բառարան չունեմ ոչ մեկ և ոչ էլ մյուս լեզվից, չունեմ նաև ընթերցանության գիրք։ Գուցե դուք ունեք, ապա եթե կարող եք՝ ուղարկեք ինձ։ Շնորհակալ կլինեմ և կվերադարձնեմ, երբ այլևս նրանց կարիքը չեմ ունենա։ Եթե լեզուներ սովորելու գործերը հաջող գնան, կձեռնարկեմ նաև անգլերենին, թեև այս լեզվից էլ ես ոչ մի ձեռնարկ չունեմ։ Իսկ ինչպե՞ս է ձեզ մոտ լեզուները սովորելու գործը։ Չէ՞ որ մաման լավ գիտե ֆրանսերեն, իսկ դուք այժմ այնպիսի հասակ ունեք, որ հեշտությամբ կարող եք յուրացնել ֆրանսերենը։ Մամուսյային ասիպեցեք, որ ֆրանսերեն խոսի ձեզ հետ։ Ես շատ կուզեի, որ դուք սովորեիք հայերեն կարդալ, խոսել և գրել։ Բայց այս իմ ցանկությունն ըստ երևույթին անիրագործելի է։ Թեև Թ[իֆլիս]-ում այս բանը հեշտությամբ կարելի էր զլուխ բերել։ Լեզուներ իմանալը չափազանց կարևոր ու անհրաժեշտ է բոլոր տեսակետներից։ Մաման ձեզ կասի, թե եվրոպական լեզուների տիրապետելն ինչ նշանակություն ունի կրթություն-դաստիարակներ ձեռք բերելու, համամարդկային կուլտուրան յուրացնելու համար։ Առանձնապես ամառը կարելի է ամբողջապես նվիրել լեզուներին։ Սկզբում կլինի դժվար, ձանձրալի, արտասովոր, իսկ հետո հեշտ կլինի և հաճելի։ Մի խոսքով, ես ձեզանից լուրջ աշխատանքներ եմ սպասում

այս ուղղությամբ։ Ինձ համար չափազանց ծանր ու անախորժ կլինի, եթե դուք դառնաք «անլեզու մարդիկ»։ Դրանից ես շատ բան եմ կորցրել և այժմ կորցնում եմ։

Եվ այսպես, լրջորեն դեպի գործ։

ՁԵՐ ՍՈՒՐԵՆ

Թարգմ. ռուսերենից։

ԵՐԵԽԱՆԵՐԻՆ ԴՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

Փետրվարի 4, [1916 թ., Մոնաստիրսկոյե գյուղ, Տուրուխանյան երկիր]։

Իմ թանկագիններս։ Ստացա Ձեր նամակը և դոնե մի քիչ ուրախացա իմ այս տաղտկալի կյանքում։ Մի բան միայն ինձ համար անախորժ էր, դա Մարուսկայի դպրոցական գործերն են։ Նա ոչ միայն սկսել է ավելի վատ սովորել, այլ նույնիսկ նրա նամակներն էլ հիմա առաջվա նամակների նման չեն. գրում է կեղտոտ, թանաք կաթեցնելով գրածի վրա, սխալներով։ Ի՞նչ է պատահել, աղջիկս։ Դու նույնիսկ այնպիսի առարկաներից, ինչպիսիք են պատմությունն ու աշխարհագրությունը, հաղիվ կարողանում ես 3 ստանալ։ Ապա ի՞նչն է քեզ հետաքրքրում, ի՞նչ ես անում ամբողջ օրերով։ Դու մի անգամ գրել էիր ինձ, որ քեզ շատ է հետաքրքրում պատմությունը։ Բանից դուրս է գալիս, որ քո այդ հետաքրքրությունը 3-ից դենը չի գնում։ Քո այդ անշեղորեն ընկնող հաջողություններն ինձ շատ են անհանգստացնում և մտահոգություն պատճառում։ Ահա—նստած եմ լինում կամ պառկած, կարծես թե ոչ մի բանի մասին չեմ մտածում, մեկ էլ տեսար՝ սիրտս ցավից։ Ի՞նչ պատահեց։ Պատճառն ի՞նչ է։ Որ մի քիչ սկսում եմ խորանալ,—

բանից դուրս է գալիս, որ ամբողջ ցավը քո-նամակի և քո թվանշանների մեջ է։ Իհարկե, ես այն կարծիքը չունեմ, թե թվանշաններն իսկապես ճիշտ կերպով են որոշում և չափում աշակերտների գիտելիքների պաշարը, բայց և այնպես—գոնե հարաբերական չափով նրանք ինչ-որ գաղափար տալիս են աշակերտի գիտեցածի մասին։ Իսկ քո նամակն ըստ ամենայնի հաստատում է նույնիսկ 2-ը ռուսաց լեզվից։

«Կարմիր ծովահեններ» կարդալով շատ էլ առաջ չես գնա, սիրելիս։ Թո՛ղ ապա այդ բաներն ու զբաղվիր որևէ ավելի օգտակար գործով։

Քո հասակում ես կարդում էի շատ ավելի լուրջ գրքեր, մինչդեռ ինձ վրա այնպիսի ազդեցություն գործադրող չկար. ֆենչպիսին քեզ վրա է տարածում քո սիրելի և թանկագին մայրիկը։ Իմ մտավոր զարգացմամբ դրեթե ոչ ոք չէր հետաքրքրվում, և ես դեռ մինչև այսօր էլ տառապում եմ դրանից։ Եվ այնուամենայնիվ ես բնազդաբար ձգտում էի գեպի լուրջ գրքերը, և ոչ թե դեպի ինչ-որ «ծովային և այլ տեսակի ավազակները»։ Ուզում եմ հուսալ, որ այսուհետև իմ անուշիկ Մերին վճռական շրջադարձ կկատարի դեպի հաջողություններ ձեռք բերելն իր պարապմունքներում։

Ձեզ սիրող և ձեր կարոտը քաշող պապա—ՍՈՒՐԵՆ.

Թարգմ. ռուս.։

Ռ. Ս. ՇԱՀ-ՊԱՐՈՆՅԱՆԻՆ ԳՐԱԾ ՆԱՄԱԿԻՑ

Դեկտեմբերի սկզբներին, 1915 թ., [Մոնաստիրսկոյե գյուղ, Տուրուխանյան երկիր]։

Սիրելի Բագրատ Սեմյոնովիչ... Իմ հայերենից մի վրդովվիր, այսքան էլ լավ է։ Շատ խնդրեցի հայոց քերականություն, ուղղագրություն, գիրք, ոչինչ չկարողացա ստանալ...

Համբույրս քո ՍՈՒՐԵՆ.

Բ. Ս. ՇԱՀ-ՊԱՐՈՆՅԱՆԻՆ

Փետրվարի 27, [1916 թ., Մոնաստիրսկոյի գյուղ, Տուրուխանյան երկիր].

Սիրելի Բագրատ Սեմյոնովիչ... Չես կարող մի քանի հայերեն գիրք, քերականություն ուղարկել ինձ։ Մանուկ Աբեղյանը այստեղ է, խնդրիր նրանից նորա «ուղղագրությունը», կարելի է ավելց։

ՔՈ ՍՈՒՐԵՆ.

ԿՈՒԼՏՈՒՐ-ԼՈՒՍԱՎՈՐԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔԸ

Նավթարդյունաբերական բանվորների միությունը իր ծագման հենց սկզբից մայրաքաղաքային բանակի կյանքի ու պայքարի բոլոր կողմերով դրված է եղել առանձնահատուկ պայմանների մեջ։ Նրան հարկ է լինում գլխավոր, կարելի է ասել բացառիկ ուշադրություն դարձնել ձեռնարկատերերի դեմ բանվորների ամենօրյա տնտեսական պայքարի վրա, նրան հարկ է լինում հսկայական ուժեր և աշխատանք գործադրել այդ պայքարը կանոնավորելու համար, նրա մեջ պլանաչափություն և նպատակահարմարություն մտցնելու համար։ Եվ կարելի է համարձակ ասել, որ միությունն այս ուղղությամբ լուրջ և հսկայական աշխատանք է կատարել ու արդեն որոշ ռեալ արդյունքներ են ձեռք բերվել։ Հիմք կա ասելու, որ Բաքվի պրոլետարիատի քաղաքային պայքարը մոտիկ ապագայում ավելի կազմակերպված բնույթ կընդունի, որպիսին այն այժմ էլ ընդունում է մեզ մոտ, միության գործունեության ազդեցությամբ։

Պրոֆեսիոնալ միության գործունեության այդ կողմը լավագույն օրինակ կարող է ծառայել խորհրդակցության վերաբերյալ ամբողջ կամպանիան և նավթարդյունաբերական բանվորների միության տակտիկան, որ առաջին անգամ ին խորհրդակցության և ին կոլեկտիվ պայմանագրի հարցը դրել է խստորեն դասակարգային, պրոլետարական քաղաքականության հողի վրա։

Բայց այդ ամենօրյա աշխատանքը, այդ վազվզոցը բանվորների պահանջների ու կարիքների բավարարման ուղղությամբ, այդ մանր, թեպետ և իհարկե խիստ կարևոր աշխատանքը հետին պլանն է մղել պրոֆեսիոնալ միությունների գործունեության մյուս, ոչ պակաս կարևոր կող-

մը, այն է՝ կուլտուր-լուսավորական աշխատանքը բանվորական լայն մասսաների մեջ։ Եվ այս երևույթը միանգամայն հասկանալի է։ Ընդհանրապես Ռուսաստանում երիտասարդ պրոֆեսիոնալ շարժմանը վիճակվում է ավելի մեծ ուշադրություն դարձնել իր գործունեության առաջին կողմի և ավելի քիչ՝ երկրորդ կողմի վրա։ Բայց մեզ թվում է, որ ուր այդ հնարավոր է, ուր արդեն պայմանները թույլ են տալիս, անհրաժեշտ է անմիջապես ու անհապաղ անցնել կուլտուր-լուսավորական աշխատանքի ծավալման։ Անհրաժեշտ է ամեն օրվա աշխատանքը, նրա արդյունքները լուսավորել թեորիական գիտակցության լույսով, անհրաժեշտ է դրանք ընդհանրացնել և արմատավորել բանվորական մասսայի մեջ։ Մեզ մոտ, մազութային թագավորության մեջ, կան պայմաններ այդպիսի աշխատանքի համար, և միությունը պետք է անհապաղ ձեռնամուխ լինի որպեսզի բանվորների դասակարգային ինքնագիտակցության զարգացման գործը դրվի ամենալուրջ հիմքերի վրա։ Հակառակ դեպքում միության ամբողջ աշխատանքը կարող է ապարդյուն անցնել, եթե, կրկնում ենք, այն չամրապնդվի պրոպագանդայի միջոցով։

Այն ժամանակ միությունը կդառնա կոնֆլիկտների հարթման բյուրո, մի գրասենյակ, որտեղից «միջնորդ» է ուղարկվում բանվորների գործերով։ Եվ ուրիշ ոչինչ։

Մինչդեռ մեզ մոտ կան ժողովրդական տներ, որոնք կարելի է և պետք է դարձնել բանվորների լուսավորման կենտրոններ, բանվորական համալսարաններ։ Այժմ ոչ իրենք բանվորները, ոչ էլ նրանց կազմակերպությունները, խստորեն ասած՝ չեն միջամտում լուսավորության և զվարճալիքի գործի դրվածքին։

Անհրաժեշտ է միջամտել այդ բնագավառին, անհրաժեշտ է այն ամբողջովին վերցնել յուր ձեռքը։ Հարկավոր է ճիշտ դնել դրադարանային գործը, հարկավոր է պատշաճ բարձրության հասցնել բանվորական թատրոնը և վերջ տալ այն շիլափլավին, որ իրենից ներկայացնում է թատրոնա-

կան ռեպերտուարը ժողովրդական տներում ամբողջ գործի ժամանակակից դրվածքի պայմաններում։

Եթե նավթարդյունաբերողների հետ խորհրդակցությունը վիճակված է տեղի ունենալ, եթե կոլեկտիվ պայմանագրին վիճակված է լույս աշխարհ գալ, ապա մեզ չափազանց կարևոր է թվում, որ այդ պայմանագրով նվաճվի արհեստակցական միությունների իրավունքը՝ վարելու ժողովրդական տները և ուրեմն բանվորների լուսավորման ամբողջ գործը։ Որովհետև երբ վերջանա խորհրդակցությունը, երբ բոլոր հանձնաժողովները ցրվեն, բանվորների բնական ներկայացուցիչը կհանդիսանա պրոֆեսիոնալ միությունը։

Բայց, իհարկե, առանց սպասելու խորհրդակցության արդյունքներին, որը դեռ միայն ուրվագծվում է մշուշապատ հեռվում, միությունն անհրաժեշտաբար պետք է օգտագործի եղած բոլոր հնարավորությունները։ Կարելի է մի շարք դասախոսություններ կազմակերպել, կարելի է տալ մի շարք ներկայացումներ, որոնք բանվորներին ծանոթացնեն համաշխարհային գրականության լավագույն երկերին և որոնք հսկայական դաստիարակչական նշանակություն ունեն։

Միության կուլտուր-լուսավորական գործունեության ամբողջ հարցի մանրամասն մշակմանը կնվիրվի մի առանձին հոդված։ Վերջացնելով այս դիտողությունը, մենք ողջունում ենք նավթարդյունաբերական բանվորների միության վարչության որոշումը, վարչության, որը ուշադրություն է դարձրել միության գործունեության այս կողմի վրա և այս ուղղությամբ մի շարք գործնական միջոցներ է ձեռք առել։ Մնում է ցանկանալ, որ անմիջական պայքարի շահերը նորից հետին պլանը չմղեն միության գործունեության այս կարևոր կողմը, ցանկանալ, որ որքան կարելի է խոսքից շուտ անցնեն գործի։

«Гудок»[105] № 31,
Մայիսի 12, 1908 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ս-յան

ԲԱՆՎՈՐՆԵՐԻ ԻՆՔՆԱԿՐԹՈՒԹՅԱՆ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Բանվոր դասակարգը միշտ էլ զգացել է գիտության անհրաժեշտությունը, կրթության անհրաժեշտությունը։ Այս ուղղությամբ եվրոպական երկրների բանվորներն անհամեմատ ավելի շատ բան են արել, ավելի լավ և ավելի առաջքան ռուս բանվորները։ Եվ այդ միանգամայն հասկանալի է։ Արևմտա-եվրոպական բանվորներն ավելի շուտ են ձեռք բերել ազատ կազմակերպվելու, իրենց կարիքներն ու իրենց պահանջները ազատորեն բավարարելու հնարավորությունը։ Մինչդեռ մեզանում շարունակ խոչընդոտներ են հարուցվել բանվորների ինքնագործունեության դեմ և հիմա մենք, չնայելով մեր «կոնստիտուցիայի» և նույնիսկ վերջինիս շնորհիվ դեռ ենթակա ենք բազմաթիվ ճնշումների, որոնք հաճախ իր չիք են դարձնում կազմակերպվելու այն խղճամիտ հնարավորությունն անգամ, որ գոյություն ունի մեզ մոտ։ Սակայն բանվորների դեպի լույսն ու գիտությունը մեկ անգամ արդեն արթնացած ձգտումը այլևս չի կարող հեշտությամբ ճնշվել և նա ելք կգտնի իր համար։

Ինչպես միշտ, այնպես էլ այս խնդրի նկատմամբ, մենք պետք է օգտվենք ուրիշ երկրների փորձից, պետք է օրինակներ վերցնենք ուրիշ քաղաքներից, որտեղ բանվորներն արդեն ունեն կամ ունեցել են կուլտուր-լուսավորական բնույթ կրող ընկերություններ։

Այս տեսակետից շատ բան են արել գերմանական բանվորները։ Կար ժամանակ, երբ այնտեղ ևս բուրժուազիան փորձում էր իր ձեռքն առնել բանվորների կրթության գործը և այդպիսով տնտեսական ստրկացմանն ավելացնել նաև

հոգևոր ստրկացումը։ Սակայն զարգացող դասակարգային տպայքարը շուտով անհրաժեշտ դարձրեց այս տեսակետից ևս ազատանալ բուրժուազիայից, թեկուզ և ամենադեմոկրատականից։ Գերմանական բանվորներն սկսեցին հիմնել իրենց սեփական, զուտ պրոլետարական կրթական ընկերությունները, որտեղ բանվորները, դիտելիքներ ձեռք բերելով, դրա հետ միասին նաև դաստիարակվում էին խիստ դասակարգային ոգով։

Այդ ընկերությունները դպրոցներ են հիմնում, դասընթացներ են բաց անում թե՛ ընդհանուր և թե՛ հատուկ դիտությունների, սերտ հարաբերություններ են պահպանում բանվորական մյուս կազմակերպությունների հետ։ Քաղաքային ինքնավարությունների դեմոկրատական հիմունքների շնորհիվ, որոշ չափով օգտվելով նրանց վրա ունեցած մեծ ազդեցությունից, բանվորները ստիպում են քաղաքային գումաններին նյութական օգնություն ցույց տալ պրոլետարական կրթական ընկերություններին։ Մեզանում, Ռուսաստանում, այդպիսի կրթական ընկերություններ, բանվորական ակումբներ կազմակերպելու փորձերը կատարվել են վերջին ժամանակներս Պետերբուրգում։ Այնտեղ ընդունված է կազմակերպության ռայոնական ձևը, ելակետ ունենալով այն, որ յուրաքանչյուր ռայոն ունի իր առանձնահատկությունները, որոնց պետք է հարմարվել՝ բանվորական մասսայի հետ ավելի սերտորեն կապվելու համար։ Սակայն այդ հիմնարկությունները շուտով մեծ մասամբ կործանվեցին, որովհետև «խափանման և կանխելու» միջոցները վտարում էին նրանցից ամեն մի կենդանի շունչ։

Նույն Պետերբուրգում կազմվեց նաև ժողովրդական համալսարանների ընկերություն, որը նույնպես կործանվեց, կամ, համենայն դեպս, խղճուկ գոյություն է քաշ տալիս։ Այդ ընկերությունը, որ կազմակերպված էր ինտելիգենցիայի դեմոկրատական մասի կողմից, մերժեց Պետերբուրգի բանվորների առաջարկը՝ ժողովրդական համալսարանների վարչության մեջ բանվորների պրոֆեսիոնալ միությունը-

ների ներկայացուցիչներին տեղ տալու մասին։ Նա մերժեց, իհարկե, պատճառաբանելով իր այդ մերժումը գիտության «ապադասակարգային» բնույթով։ Դրա հետևանքը եղավ նրա բնական մահը, որովհետև բանվորներն այլևս չէին պատրաստ լսելու նրանց «ապադասակարգային գիտությունը»։

Բաբվում նույնպիսի ընկերություններ կազմակերպելիս մենք պետք է նկատի ունենանք վերևում ասածը։

Իսկ ինքնակրթության այդպիսի բանվորական ակումբները մեզանում շատ և շատ են հարկավոր։

Բաբվի բանվորները գիտելիքներ ձեռք բերելու մեծ պահանջ են զգում։ Սակայն դրանք ձեռք բերելու հնարավորությունը շատ չնչին է։

Եղած բոլոր տեխնիկական և կիրակնօրյա դասընթացները, թե ավանդվող գիտությունների սահմանափակությամբ և թե նրանց սակավությամբ, բնավ չեն կարող գոհացնել բանվորներին։ Բանվորական մասսաների կողմից փորձ է եղել իրենց ձեռքը վերցնելու նավթարդյունաբերողների համագումարի[100] ժողովրդական տները, խելացի հիմքերի վրա դնել այնտեղ բանվորների ազատ ժամանցի գործը, հետզհետե դարձնելով այդ տները բանվորական համալսարաններ։ Սակայն համագումարի խորհրդի քաղաքականությունը միշտ էլ ուղղված է եղել այդ ձգտումների դեմ։ Բավական է հիշեցնել Կենտրոնական Կոմիտեի ցրումը, ռայոնական կոմիտեները չճանաչելը, ժողովրդական տների նախահաշվի կրճատումը և վերջապես, իրև լրացում այդ ամբողջ քաղաքականության, ժողովրդական տների ընդհանուր վարիչի պաշտոնի վերացումը։

Բուրժուական մամուլը, տեղական ինտելիգենցիայի շարքերից եղած պրոլետարիատի զանազան «բարեկամները», ս. Պ. Կ-զան[107], որոնք այնքան շատ են վրդովվում բանվորների «վայրենությունից և անկուլտուրականությունից», ոչ մի տեղ և ոչ մի անգամ հանդես չեն եկել ժողովրդական տները ոչնչացնելու դեմ, բանվորներին հենց իրենց խնդ գործից վտարելու դեմ։

Այժմ Բաքվում կազմակերպվում է ժողովրդական համալսարան, և նրա գործիչների նիստերն առայժմ տեղի են ունենում համագումարի խորհրդի շենքում։

Հետաքրքիր է, որ ո՛չ բանվորները և ո՛չ էլ նրանց օրինական ու բնական ներկայացուցիչները— պրոֆեսիոնալ միությունները— տեղ չեն գտել այդ հիմնարկի վարչության մեջ, որի նպատակն է կուլտուրա-լուսավորական աշխատանք կատարել բանվորական մասսաներում։ Այս փաստը բավականաչափ ուրվագծում է բանվորների մեջ դիտություն տարածող այդ օջախի բնույթը։ Ստացվում է «գործազուրկներին խնամող» «հռչակավոր» ընկերության նման մի բան, որտեղ իրենք, գործազուրկները զրկված են ամեն մի իրավունքից և խնամվում են կարեկից ու բարի պարոնների կողմից։

Ահա թե ինչու մեզ տարօրինակ է թվում մեխանիկների միության որոշումը[103], որ մի կողմից՝ բանվորներին կոչ է անում անդամագրվելու այդ ընկերությանը, իսկ մյուս կողմից՝ առաջարկում է հիմնել ինքնակրթության անկախ ընկերություններ։ Մենք կարծում ենք, որ մեր՝ Բաքվի պայմաններում, մենք կարող էինք ուղղակի լոզունգ տալ ինքնակրթության ընկերությունն ինքնուրույն կերպով կազմակերպելու մասին։

Ելնել այն դրույթից, թե բանվորների համար չափազանց անհրաժեշտ է գիտելիքներ ձեռք բերելը և որ դրա համար նրանք կարող են դիմել թեկուզ հենց անդամ սատանային,—դա ընդհանրապես ասած՝ ճիշտ է, բայց ո՛չ միշտ և ո՛չ ամենուրեք։ Օրինակ, ծիծաղելի կլիներ, եթե գերմանական բանվորները մտնեին բուրժուական կրթական ընկերությունների մեջ, երբ նրանք հնարավորություն ունեն ազատորեն կազմակերպելու զուտ պրոլետարական ընկերություններ։

Պետերբուրգում, ուր պայմանները շատ ավելի վատթար են և ուր այդ իսկ պատճառով թույլատրելի է դիմել «սատանային»,— բանվորները ձեռք են առնում նախազգուշական բոլոր միջոցները։ Մենք արդեն մատնանշեցինք դե-

պի ժողովրդական համալսարանները եղած վերաբերմունքը, անհրաժեշտ է նաև նշել վերաբերմունքը դեպի բուրժուական մամուլը։ Պետերբուրգի պրոֆեսիոնալ միությունների Կենտրոնական բյուրոն որոշել է տեղեկություններ չտալ «Копейка» թերթին[100], որը մի կոպեկով բուրժուական անբարոյականություն է սերմանում բանվորների մտքերում։ Մենք չենք կարող ընկ. մենշևիկների ուշադրությունը չհրավիրել Կենտրոնական բյուրոյի այդ որոշման վրա։

Մեղանում նույնպես անհրաժեշտ է նախ քննարկել բոլոր պայմանները և հետո արդեն բանաձևեր ընդունել։ Հենց բոլոր պայմանների անբավարար լուսաբանությունն էլ ահա արտահայտվել է ընկ. մենշևիկների այդ բանաձևում, որն ունի «մեկ կողմից... մյուս կողմից...» բանաձևին հատուկ բոլոր թերությունները։

Չի կարելի ընդհանուր ֆրազներով խոսել Բաքվի բանվորների համար այնքան հրատապ այդ հարցի մասին։

Չնայած ունևոր դասակարգերի ներկայացուցիչների ձեռքին գտնվող այդ հիմնարկների դասակարգային բնույթի մասին եղած լավ դատողություններին, չնայած դեմոկրատացման և լայն մասսաների հետ կապ ունենալու բարի ցանկություններին,— ամբողջ բանաձևից, այնուամենայնիվ, բխում է մի գործնական հետևություն միայն,—ընկերներ, անդամագրվեցեք ինքնակրթության և ժողովրդական ժամանցների այդ ընկերության։

Հարցը պետք է դնել այսպես. արդյոք Բաքվի բանվորները կարող են ինքնուրույն կերպով ձեռնամուխ լինել ինքնակրթության ընկերությունների և ակումբների կազմակերպման։ Մենք ասում ենք՝ այո՛, կարող են, ուստի և պետք է այս ուղղությամբ անհապաղ գործնական քայլեր կատարել։

Սլանելով գործի շահերից, այդպիսի ընկերությունները պետք է կազմակերպել ըստ ռայոնների, քանի որ քաղաքի և նրա ռայոնների համար մեկ կազմակերպությունը նրա կառավարման տեսակետից փաստորեն կլինի միմիայն քա-

միջամտել իր ընթացքին, պահանջում է մեր ուժերն ու մեր գիտելիքները։

Անհրաժեշտ է, որ մենք հաղթահարենք «մեռյալ կետը» հենց ուղղակի մեր անձնական «կաշվի» շահերից ելնելով, որովհետև իսկապես կարող է այսպիսի պարադոքս առաջանալ—մինչդեռ մասսայական ընդհանուր տգիտություն է, բանվորական ինտելիգենտ ուժերի հակայական պահանջ է զգացվում ամբողջ երկրում,—«ինտելիգենցիայի գերարտադրություն» է, որը չգիտե, թե որտեղ կիրառի իր ուժերը։

Բազմաթիվ խոչընդոտներ կան, որ խանգարում են մեր ուժերի կիրառմանը հասարակական ասպարեզում, բայց ի՞նչ արած։ Պետք է հարմարվել հանգամանքներին և կարելի է հարմարվել նրանց՝ մաղաչալի անգամ չդավաճանելով սեփական համոզմունքներին։ Պատմության այդպիսի մոմենտներին պիտի կիրառել Լասալի «հանճարեղ օպորտունիզմը», երբ հիանալի են դառնում այն խոսքերը, թե «իրական շարժման յուրաքանչյուր քայլն առավել կարևոր է, քան մի դյուժին ծրագրերը»[112]— խոսքեր, որ այնքա՞ն հաճախ խեղաթյուրվում են։ Պատմությունը քշել և դրել է մեզ անհրապույր մի կացության մեջ, բայց մի՞թե այդ պատճառով մենք պիտի ծալենք մեր «հզոր ձեռքերը դատարկ կրծքերի վրա»... Ընդհակառակը— աշխատել և աշխատել ամեն տեսակ պայմաններում։ Սովորեցնել «այս փոքրերին», փոքր բանով մեծ բան սովորել։ Իսկ քաղաքային ինքնավարությունը կլինի այն փոքր դպրոցը, որ ավելի մեծ մասշտաբի հասարակական ծառայության խնդիրների լուրջ ըմբռնողություն կմշակի մասսաների մեջ։

«Новая Речь» № 102.
Մայիսի 8, 1910 թ.։

Ստորագրությունը՝ Ս. Սպգին

ՆԱՄԱԿՆԵՐ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Մեզանում երկու հիմնարկ կա, որոնք պատկառելի և մեծահռչակ անուններ ունեն—«Ժողովրդական համալսարանների ընկերությունը» և «Հասարակական ակումբը», որոնք նպատակ են դրել ծառայել հասարակական շահերին։ Հիշյալ կազմակերպություններից առաջինում հնարավոր է շփվել քաղաքային բնակչության լայն խավերի հետ, իսկ երկրորդն ավելի ընտիր ինտելիգենտական աուդիտորիա է։ Թվում է, որ թե՛ մեկը և թե՛ մյուսը պետք է օգտագործվեին ինչպես այն իմաստով, որ բնակչության լայն խավերը նախապատրաստեին հասարակական դաղափարների յուրացման և խելացի վերաբերմունքի դեպի հասարակական գործերը, այնպես էլ այն իմաստով, որ կազմակերպեին այդ ներգործությունը Թիֆլիսի բնակչության ամենից ավելի քիչ կուլտուրական մասսաների վրա։ Պետք է որ այդ ակումբում համախմբվեր մեր առաջավոր, դեմոկրատական և ոչ թե «ցենզային» ինտելիգենցիան և լրջորեն նախապատրաստվեր ու մշակեր հասարակական կարգի հարցեր, դլխավորապես տեղական տնտեսության վերաբերող հարցերը, իսկ «ժողովրդական համալսարանի» միջոցով հաղորդեր իր աշխատանքի արդյունքները ժողովրդական լսարանին։

Կարելի է և պետք է մշակել մի ամբողջ շարք թեմաներ քաղաքային տնտեսության հարցերի և քաղաքային հասարակական ինքնավարության այն դերի մասին, որ նա պետք է խաղա քաղաքի բնակչության «զրկված ու մոռացված»

ստորին խավերում իր կուլտուր-լուսավորական գործունեությամբ։

Արևմտյան Եվրոպան, Ամերիկան, Ավստրալիան և Նոր-Զելանդիան մեզ այդ բնագավառում չափազանց հարուստ նյութ են տալիս, մեծ քանակությամբ հետաքրքրական էքսպերիմենտներ...

Մենք ապրում ենք այնպիսի մի ժամանակ, երբ քրտնաջան և համառ աշխատանքը տեղերում— մասսաների լուսավորման, նրանց մտավոր մակարդակի բարձրացման, նրանց տեսաշրջանի լայնացման աշխատանքը—միակ խելացի և հանրորեն անհրաժեշտ գործունեությունն է հանդիսանում։ Այդ, առաջին հայացքից թերևս և անհետաքրքրքրական թվացող, աշխատանքը զորեղ հիմք կդառնա ապագա վիթխարի և չքնաղ շինարարության համար։ Այժմ առօրյա է, դորշ առօրյա, ուրեմն և հարկավոր է առօրյային վայել կերպով աշխատել՝ բանվորական բլուզով, չվախենալով կոշտուկներից, փոշուց, և ստեղծագործական աշխատանքի ազնիվ ու զտող մրից։ Մինչդեռ մեր «Հասարակական հիմնարկներում» շատ ավելի խոսվում է «կասպույտ թռչունների[110]» և «Շանտեկլորների[111]» մասին, «գեղեցկության և տառապանքների կրոնների» մասին, քան թե մեր անմիջական ցավերի և կարիքների, քան թե մեր հասարակական աշխատանքի խնդիրների և նպատակների մասին՝ այդ աշխատանքի արդի պայմաններում։ Խոսք չկա, որ հետաքրքրական է և պետք է խոսել և՛ Լեոնիդ Անդրեևի, և՛ Մետերլինկի, և՛ «աստվածավորոնման ու աստվածաշինարարության» և «միստիկական անարխիզմի» մասին,—թեկուզ հենց նրա համար, որ մեր ինտելիգենցիան ինքնորոշվի, վերջնականապես դիֆերենցիացիայի ենթարկվի և բյուրեղանա ինքն իր մեջ, բայց մեր դեմոկրատիայի առաջավոր և ինտելիգենտական մասը չպիտի անձնատուր լինի գեղեցիկ խոսքերի և միստիկական մշուշի այդ ագիտոնին։

Կյանքը հրամայաբար պահանջում է գործոն կերպով

միջամտել իր ընթացքին, պահանջում է մեր ուժերն ու մեր գիտելիքները։

Անհրաժեշտ է, որ մենք հաղթահարենք «մեռյալ կետը» հենց ուղղակի մեր անձնական «կաշվի» շահերից ելնելով, որովհետև իսկապես կարող է այսպիսի պարադոքս առաջանալ—մինչդեռ մասսայական ընդհանուր տգիտություն է, բանվորական ինտելիգենտ ուժերի հակայական պահանջ է զգացվում ամբողջ երկրում,—«ինտելիգենցիայի գերարտադրություն» է, որը չգիտե, թե որտեղ կիրառի իր ուժերը։

Բաղմաթիվ խոչընդոտներ կան, որ խանգարում են մեր ուժերի կիրառմանը հասարակական ասպարեզում, բայց ի՞նչ արած։ Պետք է հարմարվել հանգամանքներին և կարելի է հարմարվել նրանց՝ մաղաչափ անգամ չդավաճանելով սեփական համոզմունքներին։ Պատմության այդպիսի մոմենտներին պիտի կիրառել Լասսալի «հանճարեղ օպորտունիզմը», երբ հիանալի են դառնում այն խոսքերը, թե «իրական շարժման յուրաքանչյուր քայլն առավել կարևոր է, քան մի դյուժին ծրագրերը»[112]— խոսքեր, որ այնքա՞ն հաճախ խեղաթյուրվում են։ Պատմությունը քշել և դրել է մեզ անհրապույր մի կացության մեջ, բայց մի՞թե այդ պատճառով մենք պիտի ծալենք մեր «հզոր ձեռքերը դատարկ կրծքերի վրա»... Ընդհակառակը— աշխատել և աշխատել ամեն տեսակ պայմաններում։ Սովորեցնել «այս փոքրերին», փոքր բանով մեծ բան սովորել։ Իսկ քաղաքային ինքնավարությունը կլինի այն փոքր դպրոցը, որ ավելի մեծ մասշտաբի հասարակական ծառայության խնդիրների լուրջ ըմբռնողություն կմշակի մասսաների մեջ։

«Новая Речь» № 102,
մայիսի 8, 1910 թ.

Մտորագրությունը՝ Ս. Օլգին

ԺՈՂՈՎՐԴԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՆԵՐԻ ԹԻՖԼԻՍԻ ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՇՈՒՐՋԸ

Մարտի վեցին նշանակված է ժողովրդական համալսարանների Թիֆլիսի ընկերության անդամների ընդհանուր ժողովի շարունակությունը։ Արդեն առաջին ժողովում մի շարք հեռտորներ մատնանշեցին այն խոշոր թերությունները, այն աղաղակող պակասությունները, որ տեղի ունեն կուլտուրապես բարձր նպատակներ հետապնդող այդ հիմնարկի գործունեության մեջ։ Կասկած չկա, որ այդ թերությունները, որոշ չափով, բացատրվում են մեղանում գիտական ուժերի և այնպիսի մարդկանց պակասությամբ, որոնք իսկապես նվիրված են ժողովրդական և բանվորական մասսաների լուսավորության գործին։ Եթե մեղանում լիներ բարձրագույն ուսումնական հաստատություն, լիներին այլ իրավական պայմաններ, բնական է, որ ժողովրդական համալսարանի գործերը բոլորովին այլ կերպ կընթանային, նրա կյանքի տեմպն այլ կլիներ։

Սակայն, նկատի առնելով այդ բոլոր անբարենպաստ հանգամանքները, հաշվի առնելով այստեղից բխող այն բոլոր բացասական հետևանքները, որոնք բավական տխուր են անդրադառնում այդ հիմնարկության գործունեության վրա, մենք, այնուամենայնիվ, չենք կարող չմատնանշել և նույնիսկ չընդգծել, որ նույնիսկ այն հնարավորության սահմաններում, որը տրված է եղել բոլոր պայմանների ամբողջությամբ հանդերձ, ժողովրդական համալսարանի ներկա վարչությունը չի արել այն, ինչ որ կարելի էր կատարել, եթե ամբողջ կազմակերպությունն այլ հիմքերի վրա դրված լիներ։

Գործը դրված չի եղել ամուր հողի վրա և նույնիսկ ժողովրդական համալսարանի գաղափարն անգամ, դժբախտաբար, վարկաբեկվել է հասարակության և գիտության լույսի կարիքն զգացող բնակչության աչքում։

Ամենից առաջ մատնանշենք բոլոր դասախոսությունների պատահական բնույթը և դասախոսների անհաջող (նույնպես պատահական) ընտրությունը։ Հաշվետվությունից երևում է, որ վարչությունը դասախոսություն կազմակերպելիս չի ունեցել ոչ մի ղեկավար իդեա, որ վարչությունը նույնիսկ նեղություն չի քաշել նախապես ծանոթանալու դասախոսության բովանդակության հետ և այդ պարտականությունն ամբողջովին ընկած է եղել ոստիկանության վրա։ Դասախոսներն իրենք են իրենց առաջադրել դասախոսություններ կարդալու, իրենք են իրենց համար թեմաներ ընտրել, չի եղել ոչ մի սիստեմ, որ միավորեր կարդացվող դասախոսությունների գաղափարները։ Ժողովրդական լուսավորության գործի դասախոսական սիստեմի կատարյալ բացակայությունը և քաոսային վիճակը ժողովրդական համալսարանում պարզ ու ցայտուն կերպով բնորոշվում են երկու փաստով՝ մշտական դասախոսական հանձնաժողովի բացակայությամբ և ղրույցների համար պահանջվող թեմաների ցանկալի լինելու մասին ունկնդիրների շրջանում անկետա չանցկացնելով։

Ավելորդ է խոսել գիտության այս կամ այն ճյուղի վերաբերյալ սիստեմատիկ դասընթացների մասին։ Այդպիսիք բոլորովին տեղի չեն ունեցել և, որքան մեզ հայտնի է, վարչությունը նեանդուն միջոցներ ձեռք չի առել այդպիսի դասընթացներ ստեղծելու համար։ «Անկախ հանդամանքներ» վկայակոչելը տվյալ դեպքում կարող է բոլորովին անընդունելի լինել, քանի որ կան շատ գիտություններ, որոնց շուրջը կարելի էր պարապմունքներ վարել առանց որևէ երկյուղի ու ակնածության։ Մինչդեռ վարչությունն իր ամբողջ հաշվետվության մեջ փութաջանությամբ փնտրում է իր անհաջողությունների «մեղավորին», մերթ հարձակվում է

«ինտելիգենցիայի», մերթ տեղական մամուլի վրա և այլն և այլն, իսկ իրեն շարունակ և բոլոր դեպքերում, ըստ երևույթին, անմեղ է համարում։

Ամենից շատ մեզ զարմացնում են տեղական մամուլի դեմ ուղղված դանդատները, որոնք արտահայտված են ոչ միայն տպագիր հաշվետվության մեջ, այլև հաշվետվությունը քննարկելիս վարչության անդամների արտասանած հառերում, որ իբր թե տեղական թերթերը «գոնե համառոտ դիտողություններ չեն արել կազմակերպվող դասախոսությունների մասին», իսկ դասախոսները «մամուլի կողմից չեն տեսել ակտիվ ու արտացավ վերաբերմունք»։

Այսպիսով դուրս է գալիս, որ ժողովրդական համալսարանները, թատերական ձեռնարկության նման, կարիք են զգում ռեկլամի, իսկ դասախոսները՝ խրախուսանքի։

Ժողովրդական համալսարանի նկատմամբ ոչ մի տեղ այդպիսի բան չի կատարվում, քանի որ այն ազատ դպրոց է։ Իսկ ո՞րտեղ է ընդունված «խրախուսել» դասախոսներին, որոնք պարապում են ունկնդիրների հետ։

Իրականում մեզ մոտ ամեն ինչ թարս է գնացել, թերթերում հայտարարություններ են տպվել, փողոցների անկյուններում աֆիշաներ են փակցվել, իսկ մի շարք հավակնոտ դասախոսների համար ժողովրդական համալսարանը եղել է միայն շիրմա, ցուցանակ, դրոշակ։

Եվ ինչո՞ւ ժողովրդական համալսարանի «քարտուղար» Ֆ. Դալիձեն իր «ձեռնարկումների» համար գտնում էր թե՛ դասախոսներ և թե՛ իրեն տրամադրվող էջեր տեղական թերթերում, իսկ ժողովրդական համալսարանը ոչ մի կերպ չէր կարողանում տեղ գտնել մամուլում, և նրա վարչությունը դառը դանդատվում ու արցունք է թափում։

Անցնենք այն դպրոցական ցանցին, որ փորձում է ստեղծել ժողովրդական համալսարանը։ Այստեղ ևս կարելի է զարմանալ, թե վարչությունը վիճակագրական ինչպիսի խղճուկ տեղեկություններ է հաղորդում։

Դպրոցական գործը սաստիկ կաղում է. չկա ռուսական

դպրոց, իսկ հայերը, բանից դուրս է գալիս, որ չեն ուզում սովորել։ Մնացած դպրոցներում պարապմունքները մի կերպ ընթանում են։ Անհրաժեշտ է մատնանշել, որ քաղաքային վարչությունը խիստ անհամակրելի վերաբերմունք է ցույց տալիս դեպի ժողովրդական համալսարանը. շենքի համար վարձ է վերցնում, տրամադրելով այն միայն կիրակի առավոտները։ Սակայն ժողովրդական համալսարանի վարչությունն այս հարցում ևս անճարակ եղավ և չկարողացավ իր համար շենք գտնել, հայտնի չէ, թե ինչու, կառչելով քաղաքային ժողովրդական տան շենքին։

Գործի հաջողության համար նույնիսկ անհրաժեշտ էր դասախոսություններն ու պարապմունքները կազմակերպել քաղաքի զանազան մասերում, օրինակ, Նախալովկայում, Հավլաբարում, Դիդուբեում, որտեղ ապաստանել և ապրում են հենց այն տարրերը, որոնք ամենից շատ են զգում ժողովրդական համալսարանի, կենդանի խոսքի, դիտության բարերար ուժի կարիքը։

Անհրաժեշտ է մեզանում սկսել ժողովրդական լուսավորության վերին աստիճանի օգտակար կազմակերպության ամուր հիմքը դնելը, անհրաժեշտ է ժողովրդի համար ստեղծված համալսարանը մոտեցնել և միաձուլել ոչ-շահերտավոր ժողովրդին։ Ժողովրդական մասսաների դիտակցության արթնացման և պայծառացման ասպարեզում հաջողակ ու բեղմնավոր աշխատանք կատարելու համար անպայման հարկավոր է ժողովրդական համալսարանի գործը հանձնել հենց ժողովրդի ծոցից եկած գործիչներին։

«Листок-Копейка» № 53,
մարտի 5, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ոլգին

ԱԿՆԱՐԿՆԵՐ

Ժողովրդական համալսարանի գործերը նորից մի շաբաթով հետաձգվեցին և նորից՝ անցյալ կիրակի օրը՝ համալսարանի վարչությունն ապացուցեց իր դանդաղաշարժությունն ու անհոգությունը։ Վարչությունն իր տրամադրության տակ ուներ ամբողջ երեք շաբաթ ժամանակ՝ սկսած առաջին ժողովի օրից, և այդ երկար ժամանակի ընթացքում չկարողացավ, անզոր գտնվեց ժողովի համար շենք գտնելու։

Կիրակի, մարտի 6-ին, ժողովը հրավիրված էր ժողովրդական տան բուֆետում, որովհետև դահլիճն զբաղեցված էր մանկական ներկայացման համար։

Եվ ահա, անհարմար պայմաններում, առանց աթոռների և այն աղմուկ ու աղաղակի մեջ, որ բարձրացնում էր բուֆետում անվերջ այս ու այն կողմ գնացող կողմնակի հասարակությունը, փորձում էին լուծել ժողովրդական համալսարանի կյանքին վերաբերող անհետաձգելի հարցերը։

Սակայն նույնիսկ այս օրիգինալ նիստն էլ ընդհատվեց ժողովրդական տուն եկած քաղաքային վարչության անդամներ՝ Ա. Մ. Արղությինսկի-Դոլգորուկովի և Ն. Պ. Կոկշաների կողմից։

Նրանք առաջարկեցին շենքն ազատել, որովհետև ժողովրդական համալսարանի անդամների նիստը խանգարում է մանկական ներկայացմանը։ Եվ բոլորն ստիպված եղան՝ հարցերի քննարկումն ընդհատելով՝ թողնել շենքն ու հեռանալ։

Այսպես է գործում համալսարանի վարչությունը։ Այսպես ուսուցիչները ժողովրդական համալսարանն անամոթաբար դուրս են անում ժողովրդական տնից։

Եվ այս պայմաններում, գործի այսպիսի տնօրինության և դեպի լուսավորության գործն ունեցած այսպիսի «եռանդի» դեպքում,— տարօրինակ չէ՞ միթե լսել պ. պ. Երմոլաևի և Ռցխիլաձեի[113] անվերջ դանդատները հասարակության անտարբերության մասին։

«Листок-Копейка» № 56,
Մարտի 9, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլգին

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ՏԱՐՕՐԻՆԱԿ ՉԷ՞

Զատկական և բարեկենդանի օրերին աֆիշաների սյուների ու ցանկապատերի վրա երևի համառորեն ընթերցողի աչքին են ընկնում գույնզգույն պլակատներ, որոնք հասարակությանը հրավիրում են անսպասման շնորհ բերել կրկեսի այսօրվա ներկայացման, որտեղ կիսաղացվեն 3000 նոր համարներ, ընդ որում տիկինները մտնում են ձրի և այլն և այլն։ Միամիտ հասարակությունը, մեծ մասամբ մեշչաններից, գայթակղվելով «ձրի պրեմիայով»՝ կռվով, դրավում է բոլոր տեղերը։

Փորձանք չէ, որ կրկեսի վարչության այդպիսի «աֆյորան» հաճախ էժան չի նստում. ջարդում են աթոռները, քարուքանդ անում բարյերը և հարվածներ տեղում արվեստի տաճարի բոլորովին անմեղ սպասարկուների վզակոթին։ Ժողովրդի ցասումն ունի իր իրավունքները։

Սակայն «մանստրո» Թեոդորս Դոլիջեն շահագործման համար ունի մի այլ աուդիտորիա, որ ավելի ինտելիգենտական է, ավելի կոռեկտ և ընդունակ չէ «աթոռները ջարդելու»։

Այս պատճառով նա համարձակորեն բաց է թողնում այսպիսի աֆիշաներ.—«Սերը նորագույն դրականության մեջ»— հինգ հոգու մասնակցությամբ։

Այստեղ են և՛ Տուրգենևը, և՛ Արցիբաշևը, և՛ Կնուտ Համսունը, և՛ Պշիբիշևսկին, և՛ Լև Տոլստոյը, և՛ Նույնիսկ Ա. Չեխովը։ Թվում է թե նրանցից յուրաքանչյուրի մասին «սիրո վերաբերյալ» թեմայի շուրջը կարելի էր շատ բան ասել, ասել այնքան, որ բավական լիներ մի լուրջ և գործնական դասախոսության համար։

Սակայն «Մահստրոն» հետաքրքրվում է այլ նպատակով. նրա համար կարևոր է ավելի շատ հասարակություն հավաքել, ավելի շատ հինգ կոպեկանոցներ գչլել, իսկ մնացածին նա բոլորովին անտարբեր է։ Նրան հարկավոր է «հաջողություն», իսկ դա ապահովում է՝ «աշակերտներին մուտքն արգելվում է» անշլադով։ Ոնց որ ֆարս կամ «ֆրինա» սենսացիոն պիեսը։

Տվյալ դեպքում մեզ հետաքրքրում է մի հանգամանք.— ինչպես են ինտելիգենտ մարդիկ ընկնում նման ձեռնարկատերերի ծուղակը և իրենց անունով քողարկում են օբիվատելներին այդպես բացահայտ կերպով խաբելը։

Չէ՞ որ առանց այն էլ հասարակության մեջ ասում են, թե կլինիկաներից զուրկ փաստաբանները և չակերտավոր պրոֆեսորները ծառայության են մտել «ժողովրդական համալսարանի քարտուղար», «ժողովրդական լուսավորության» անտրեպրենյոր պ. Դոլիձեի մոտ։

Այս երևույթն էլ ավելի տարօրինակ է նրանով, որ ժողովրդական համալսարանի վարչությունը շարունակ դանդաղում է ինտելիգենտ աշխատողների պակասության, դասախոսների լիակատար բացակայության վրա, իսկ նրա քարտուղարը պետական թատրոնի բեմի վրա դյուժիններով «ինտելիգենտ դասախոսներ» է ցուցադրում։

Մի՞թե այս փաստը չի ցույց տալիս մեր ինտելիգենցիայի իսկական էությունը, ինտելիգենցիայի, որը խուսափում է ժողովրդական մասսաների լուսավորության կարևոր և լուրջ աշխատանքից և հաճույքով զբաղվում է դատարկաբանությամբ պ. Դոլիձեի կազմակերպած «սիրո վերաբերյալ երեկոներին»։

«Листок-Копейка» № 65,
մարտի 19, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Իզզոյ

ՈՒՍԱՆԵԼԻ ԹՎԵՐ

Մեզանում սիրում են շատ խոսել, գեղեցիկ խոսել, զատարկ ոգիով արտասանել մի շարք ամպագոռգոռ և ընդհանուր ֆրազներ, և «ընդհանուր տեղերի» այդ մուղիկայի տակ քնեցվում է հասարակական ինքնագործունեությունը, կազմակերպչական էներգիան, և «ճառերի» հետևանքն այն է լինում, որ այսպես ճշգրիտ բնորոշվում է առածով՝ «Լյառը մուկ ծնեց»։ Զարժե թվել մեր «անգործունեության» օրինակները, որովհետև դրանք հայտնի են ամեն մեկին, ամեն ոք գիտե, թե ինչպես համակրելի և անկասկած հասարակականորեն օգտակար նախաձեռնությունն անդառնապիսին ընկղմվել է «բառերի ծովի» անդունդում։

Այսպիսի մտքեր ծագեցին իմ գլխում, երբ Մոսկվայի թերթերում ես կարդացի համառոտ հաշվետվություն ժողովրդական համալսարանների ընկերության գործունեության մասին։

Անցյալ ուսումնական տարում Մոսկվայի ժողովրդական համալսարանը, բացի կենտրոնական ռայոնից, քաղաքի ծայրամասերում ուներ 9 աուդիտորիա, 2.375 մշտական ունկնդիրներով և տարեկան 52.506 հաճախորդներով։ Ներկա տարվա կեսին ծայրամասերում ունի 11 աուդիտորիա, իսկ հաճախորդների ընդհանուր թիվը հասնում է 80—100 հազարի։ Իհարկե, թվերի մեծությունը բացատրվում է գլխավորապես այն հանգամանքով, որ Մոսկվան առևտրա-արդյունաբերական խոշոր կենտրոն է, միլիոնավոր բնակչությամբ։

Սակայն մեզանում, Թիֆլիսում, չեն եղել նույնիսկ զուրջ ու նանդան փորձեր, այն ծայրամասերում աուդիտո-

բիաներ ստեղծելու համար, որ ապրում են բանվորները և այլ աշխատավոր մարդիկ, չեն եղել մշտական, սիստեմատիկ դասընթացներ՝ ժողովրդական համալսարանի մշտական հաճախորդների հիմնական կադր ստեղծելու համար։

Ամեն ինչ արված է ոստյունակերպ, առանց որոշ խստորեն մշակված պլանի։

Օսկար-Ուայլդից անցել են Արարատի գագաթը, «մարդկության որդանի» ձյունապատ գագաթից անսպասելիորեն իջել են մինչև «խորհրդակցություն Անդրկովկասում դեմատվ մացնելու մասին», և այս խառնաշփոթությունն անվանել են գիտության լույսի տարածում ժողովրդական մասսաների մեջ։

Սակայն ժողովրդական համալսարանի Մոսկվայի ընկերությունն իր գործունեության մեջ ավելի հեռու է գնում և Մոսկվայի ծայրամասերում ժողովրդական տներ է կազմակերպում, որովհետև կենտրոնը (պոլիտեխնիկական թանգարանը) հեռու է բանվորական ավաններից, գործարաններից և, բացի այդ, շարունակ զգացվում է շենքերի պակասություն։

Իսկ մեղանում ժողովրդական համալսարանի վարչությունն ամրացվել է քաղաքային ժողովրդական տան, որը հեռու է ծայրամասերից և կենտրոնն է սպասարկում. այդ վարչությունը ոչ մի կերպ չի կարողանում բաժանվել ժողովրդական տնից, կենտրոնացնելով իր փոքրիկ գործունեությունը միայն և զրեթե բացառապես այնտեղ, երբեմն իբր ողորմություն ստանալով «սիրողների մարզանքներից» ազատ դահլիճը։

Մատնանշելով մեր ժողովրդական համալսարանի գործունեության բացասական կողմերը, մենք չենք կարող մատնացույց չանել մի խոչընդոտ, որ կախված չէ նրանից,—դա միջոցների պակասությունն է, նույնիսկ լիակատար բացակայությունը։

Նայեցեք Մոսկվային. ընկերության օգտին ստացվեց

է Վ. Ա. Մորոզովայից 1000 ռուբլի, Ա. Ի. Կոնովալովից՝ 8000 ռուբլի և այլն և այլն։

Եվ հասկանալի է դառնում ժողովրդական համալսարանների վարչության դիմումը, որով հասարակությանը կոչ է արվում նվիրատվություններ անել։ Այնտեղ դրամ կտանլավ գործի համար։

Ի՞սկ մեզանում։

Մենք ամենաինտելիգենտ քաղաքն ենք, մեզանում կա իր ինտելիգենտությամբ առաջին քաղաքային դուման Ն. խլեստակովյան[114] այլ ինքնագովություններ, բայց, որպեսզի գործի համար նվիրաբերվի որևէ ռեալ...

Ռուբլ տվեք, իսկ դրա համար ի՞նչ կլինի։ Շքանշան, թմբուկ, ծնծղա, մութ գործերի ծածկում և քողարկում... էն ժամանակ աչքիս վրա... Մեծ հաճույքով...

Հակառակ դեպքում ամեն մի դիմում հասարակական նախաձեռնությանը ապարդյուն փորձ է, կմնա «ձայն բարբարո հանապատի»։

«Листок-Копейка» № 67,
մարտի 22, 1911 թ.
Ստորագրությունը՝ Ս. Ոլդին

ԱԿՆԱՐԿՆԵՐ

ԻՍԿ ՍԱՅԼԸ ԴԵՌ ՆՈՒՅՆ ՏԵՂՈՒՄՆ Է...

Փետրվար ամսից է, ինչ ծայր է առել ժողովրդական համալսարանի վարչության վերընտրության գործը՝ նրա նախահաշվի քննության կապակցությամբ, սակայն՝ հին վարչությունը դեռ ևս շարունակում է իր դիծը, և համալսարանի գործերի դրությունը մնում է նույնքան տխուր, եթե՞ոչ առավել վատթար... Այս երեք ամիս տևող բավական երկար ժամանակի ընթացքում մարդիկ նույնիսկ չկարողացան ընտրել նոր վարչություն, հրավիրել այդ նպատակի համար մի ժողով, չկարողացան ժողովրդական կրթության գործը դնել կազմակերպչական կայուն հողի վրա։

Միակ բանը, որ վարչությունը կատարել է, դա— համերգի կազմակերպումն է ժողովրդական համալսարանի օգտին, մի համերգ, որ 200 ռուբլուց ավել վնաս բերեց գործին։

Ահա մի նոր տխուր դատին՝ նրա առանց այդ էլ ոչ փառավոր պատկում։

Զուգահեռաբար մեծ «հաջողությամբ» գործում էր այդ հաստատության «քարտուղար» պ. Դոլիձեն՝ արցիբաշևյան թեմաների շուրջ կազմակերպված իր վուլգար «դատերով» և պարոնայք ինտելիգենտների վուլգար ճառախոսություններով[115]։ Գոնե վարչությունը խորհրդակցեր իր ամենուր գրտնվող և ամենաղոր քարտուղարի հետ։

Կամ մի գուցե համերգի այդ օրինակ փառավոր տապալումը տեղի ունեցավ հենց պ. Դոլիձեի բարեհաճ աջակցության հետևանքով։

Բայց իրավ, չէ՞ որ չի կարելի անվերջ դատել ու խոսել միայն վարչության մասին, հարձակվել նրա վրա և միայն նրա վրա։

Ժամանակ է արդեն, որ ժողովրդական համալսարանների ընկերության անդամներն էլ ցույց տան իրենց կենսունակությունը և օրինական կերպով պահանջեն ժողով գումարել՝ նոր վարչություն ընտրելու համար։

Չէ՞ որ շատով կմոտենա, վրա կհասնի ամառը, շոգը, շատերը կցրվեն և գործը կհետաձգվի մինչև աշուն։ Իսկ աշնանից նորից կսկսի պտտել նույն անվերջ անիվը...

Անհրաժեշտ է գործն կենդանացնել, անհրաժեշտ է ներշնչել նրան կազմակերպության շիտակ և կենսական սկզբունքներ, կարևոր է մանավանդ այժմ զարկ տալ կուլտուրական աշխատանքին՝ բնակչության լայն խավերում։ Մինչդեռ այն վերաբերմունքի պայմաններում, որ նկատվում էր մեզ մոտ մինչև այժմ ինչպես վարչության, այնպես էլ ժող. համալսարանների ընկերության անդամների կողմից, ստեղծվում է այնպիսի դրություն, երբ այլևս ակներև է, որ լավ, համակրելի և անհրաժեշտ այդ գործը հաստատուն քայլերով դնում է դեպի կործանում, դեպի քայքայում և միմիայն խորին հոռետեսություն է ստեղծում հասարակության ստորին խավերի մեջ՝ լուսավորական բոլոր այդպիսի ձեռնարկումների վերաբերմամբ։

«Трудовая-Копейка» № 3,
Ապրիլի 17, 1911 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլդին

ԻՆՉՊԵՍ ՉՊԻՏԻ ԳՈՐԾԻՆ ՕԳՆԵԼ

(Թոշակների հարցի կապակցությամբ)

Պարոն Պ. Պավլովիչը «Тифл. Листок»-ի էջերում հետաքրքրական մի հարց է հարուցում՝ հասարակական թոշակների և բարձրագույն դպրոցների թոշակառուների մասին[110]։ Նա առաջարկում է այդ գործի դրվածքը նոր սկզբունքներով վերակազմելու մի նախագիծ։ Սակայն նախքան այն աննորմալությունների և թերությունների մասին խոսելը, որ գոյություն ունեն դեպի բարձրագույն ուսում ձգտող երիտասարդությանը հասարակական օգնություն ցույց տալու մեջ, պ. Պ. Պավլովիչը մի շարք մտքեր է արտահայտում բարձրագույն, համալսարանական կրթության մասին։

Պ. Պավլովիչի հիմնական դրույթը հետևյալն է.—բարձրագույն կրթությունը մի շքեղություն է, երբ որ բնակչության հսկայական մասսան կատարելապես տգետ է, երբ նույնիսկ տարրական և միջնակարգ կրթությունը շքեղություն և անհասանելի մի իդեալ է հանդիսանում։ Սակայն պ. Պ. Պավլովիչը նույնիսկ չի էլ փորձում բացատրել, թե ինչու է դա չափազանց թանկարժեք մի պահանջ հանդիսանում։ Արդյո՞ք իր ներքին պատճառների շնորհիվ, թե՞ կան դրա արտաքին պատճառները։

Մեզ թվում է, թե բարձրագույն կրթությունը մեզանում թանկ արժեցող և անմատչելի է գլխավորապես ժողովրդական լուսավորության մինիստրության վարած քաղաքականության պատճառով, որն իրեն նպատակ է դնում, որքան հնարավոր է, կրճատել «խոհարարուհիների երեխաների» մուտքը դեպի լուսավորության բարձրագույն օջախները։

Այսպիսով բարձրագույն ուսում ստանալը փաստորեն դժվարանում է, հաճախ նույնիսկ անմատչելի է դառնում բացառապես բնակչության աղքատ խավերի համար, նրա նյութական անապահով շերտերի համար։ Եվ հետևաբար եթե հասարակությունն իր ուժերի և հնարավորությունների չափով ջանում է լրացնել այդ բացը, եթե նա փորձում է ուղղել սոցիալական այդ անարդարությունը,— ապա նրա այդ ջանքերը պետք է միայն ողջունել և խրախուսել, այլ ոչ թե դատապարտել, ինչպես այդ անում է իր հոդվածում Պ. Պավլովիչը։ Եթե մի պահ ենթադրենք, թե նրա մտքերով ներշնչվելու են հասարակական այն բոլոր հաստատությունները, որոնք օգնություն են ցույց տալիս ուսանող երիտասարդությանը, ապա դուրս կգա, որ համալսարանների և բարձրագույն մասնագիտական դպրոցների մուտքը փակվելու է նյութապես անապահով երիտասարդության համար, և նրանց մեջ տարածված ինքնասպանությունները, որոնց մասին այնքա՜ն վշտանում է Պ. Պավլովիչը, հասնելու են հրեշավոր թվի։ Սակայն պ. Պ. Պավլովիչը մի ուրիշ արգումենտ էլ է բերում՝ չոմեևոր երիտասարդության դեպի համալսարաններն ունեցած ձգտման դեմ և նրանց հասարակական օգնություն հասցնելու դեմ. դա ինտելիգենցիայի դերարտադրությունն է։ Մինչև այժմ մենք գիտեինք, և վիճակագրությունն էլ մեզ միանգամայն հակառակն էր ապացուցում, այն է՝ թերարտադրություն, ինտելիգենտ ուժերի պակաս։ Մենք գիտենք, թե անծայրածիր Ռուսաստանի հարյուր հիսուն միլիոնանոց ժողովուրդը որքա՜ն մեծ պակաս է զգում բժիշկների, իրավաբանների, տեխնիկների, մանկավարժների և այլնի։ Եվ եթե այժմ մեր աչքին է զարնում ինտելիգենտական աշխատանքով որոշ մասնագիտությունների գերլցվածությունը և այն էլ խոշոր քաղաքային կենտրոններում, ապա մենք չպիտի մոռանանք, որ երկրի հսկայական տարածությունները ինտելիգենտ աշխատավորների կարիք են զգում և որ ինտելիգենտական աշխատանքի արհեստական այդ կուտակումը քաղաքներում առաջացել է

ոստիկանական արդելքների և ընդհանրապես քաղաքական և հասարակական ամբողջ այն մթնոլորտի հետևանքով, որ տիրում է այժմյան Ռուսաստանում։ Կարելի է և հարկ է խոսել ինտելիգենցիայի գերարտադրության մասին Գերմանիայում, օրինակ, որտեղ խոշոր կապիտալի կողմից ճնշվող և քայքայման ենթարկվող մանր բուրժուազիան՝ փրկություն որոնելով պրոլետարիատի շարքերը դուրս գալու վտանգից,— լցնում է համալսարաններն ու ինտելիգենտական աշխատանքի շուկան։ Ինտելիգենցիայի գերարտադրության մասին մեզ մոտ խոսք անգամ չի կարող լինել և Պ. Պավլովիչի այդ արգումենտը պետք է մի կողմ նետել։ Էլ ի՞նչ է մնում ուրեմն նրա բոլոր դատողություններից։ Բարձրագույն կրթությունը մեզանում թանկ է նստում, անմատչելի է սակավազոր դասակարգերի միջոցներին, հետևապես, կարիք չկա, որ նրանք ձգտեն դեպի բարձրագույն կրթություն, և կարիք չկա, անօգուտ բան է հասարակական միջոցները նման մի «խելահեղ շքեղության» վրա ծախսելը։ Սակայն մեզանում թանկարժեք մի հաճույք է հանդիսանում նաև միջնակարգ կրթությունը, և դրա վերաբերմամբ ևս կիրառվում է «խոհարարուհիների երեխաներին» գիմնազիաներ մտնելու արգելքը։ Սակայն պ. Պ. Պավլովիչն ինչ որ անհայտ պատճառներով, անհետևողական կերպով պահանջում է, որ միջնակարգ կրթությունը մատչելի լինի բոլոր ցանկացողների, բայց միջոցներ չունեցողների համար, սակայն, ինչ-որ բոլորովին անհասկանալի նկատառումներով չի տարածում իր այդ ցանկությունը նաև բարձրագույն ուսման վրա։ Առավել ևս դա տարօրինակ է այն պատճառով, որ առանց բարձրագույն կրթության, առանց լուսավորության այդ օջախների, առանց ինտելիգենտական ուժերի մեզ համար անկարելի կլիներ բարձրացնել երկրի կուլտուրական մակարդակը, դուրս բերել նրան ծանր ժամանակների անմխիթար վիճակից, բարձրացնել և կանոնավոր հիմքերի վրա դնել հենց այն ստորին և միջնակարգ կրթությունը, որոնց մասին այնքան հոգում է ինքը՝ Պ. Պավլովիչը։

Պ. Պ. Պավլովիչը շատ ճիշտ և ըստ արժանույն է դատապարտում թոշակներ բաժանելու գործի գրվածքը մեզանում, երբ թոշակներն ստանում են շատ հաճախ ոչ թե նրանք, ովքեր իսկապես դրա կարիքն ունեն, այլ զանազան տեսակ «թեթևսոլիկ ֆրանտները»։ Դժբախտաբար հասարակական այս նախաձեռնության մեջ ևս, ինչպես և բոլոր մյուսներում, մեզանում խոշոր դեր են կատարում «ֆավորիտիզմը» և խնամիությունը։

Ինչպե՞ս օգնել ցավին։ Ելնելով իր բացասական վերաբերմունքից դեպի հասարակական միջոցների ծախսումը բարձրագույն դպրոցներում սովորող թոշակառուների վրա, Պ. Պավլովիչն անսպասելի կերպով հակառակ եզրակացություն է անում— թոշակներն այնուամենայնիվ պետք է տալ, բա՛յց միայն տաղանդավոր երիտասարդներին։

Ահա նրա հիմնական շափանիշը, որի վրա է կառուցված նրա ամբողջ նախագիծը։ Սակայն ամենից առաջ՝ ոչնչով ապացուցված չէ, թե տաղանդավոր, ընդունակ պատանին, բարձրագույն ուսումն ավարտելուց հետո, իրեն անպայման կնվիրի հասարակության բարօրությանը ծառայելուն։ Մենք կարծում ենք, որ ինքը Պ. Պավլովիչն էլ շատ օրինակներ գիտե, երբ տաղանդավոր երիտասարդներն իրենց ուժերը նվիրել են ոսկի հորթին ծառայելուն կամ փակվել են իրենց անձնական կյանքի մեջ։ Եվ ապա՝ ո՞վ է որոշում այս կամ այն թոշակ խնդրողի տաղանդավորությունը և ինչո՞վ է որոշվում այդպիսին։ Պ. Պավլովիչն ասում է.— այն գիտությունների մեջ ունեցած առաջադիմությամբ, որոնցով բարձրագույն դպրոցում զբաղվում է հասարակական օգնության արժանի տվյալ թեկնածուն։ Սակայն առաջադիմություն դրսևորելու համար հարկավոր է նախ բարձրագույն դպրոց ընկնել, իսկ դրա համար անհրաժեշտ են նյութական միջոցներ։ Կան ֆակուլտետներ, որտեղ չկան ամենօրյա պրակտիկ աշխատանքներ, որտեղ պրոֆեսորները դասախոսություններ են կարդում, .ուսանող-

ները լսում են և միայն քննությունների ժամանակ է, որ առաջին անգամ հանդիպում են իրար։ Սակայն մենք չենք կարծում, թե պ. Պավլովիչը հանձն կառնի պնդելու, որ այս կամ այն երիտասարդի՝ քննությունների ժամանակ ցույց տված առաջադիմությունը կարող է նրա տաղանդավորության ցուցանիշը հանդիսանալ։ Շատ է հանրածանոթ արդեն լոթորեա-ալլեգրիին շատ նմանող մեր «տոմսային» սիստեմը, որպեսզի արժենար երկար խոսել նրա մասին։

Մենք դեռ կհասկանայինք Պ. Պավլովիչին, եթե նա խոսեր «գերազանց առաջադիմության և հիանալի վարքի» մասին, բայց նա խոսում է տաղանդավորության մասին, իսկ դա վեր է սովորական առաջադիմություն ունենալու հատկությունից, դա նախատեսում է թոշակ խնդրողի մի այնպիսի օժտվածություն, որ բնությունից է, դա նախատեսում է «կայծն ասուվածային»։ Եթե ղեկավարվենք նրա սկզբունքով, այնպես կարող էր պատահել, որ Լև Տոլստոյ և Լեոնիդ Անդրեևը,— որոնց տաղանդավորության մասին, մեզ թվում է, Պ. Պավլովիչը կասկածներ չունի,— թոշակներից զրկված լինեին, որովհետև իրենց ուսումնասիրած գիտությունների մեջ որևէ աչքի ընկնող առաջադիմություն չեն ցուցաբերել։ Մինչդեռ Լեոնիդ Անդրեևը շատ սուր կարիքի մեջ է եղել և այդ հողի վրա նույնիսկ ինքնասպանության փորձ է կատարել։ Բարեբախտ պատահականությունն է փրկել նրա տաղանդը ռուս հասարակության համար, ռուս գրականության, համամարդկային կուլտուրայի և պրոգրեսի համար։

Եվ Լեոնիդ Անդրեևի նման մեկը կարդարացնի այն բոլոր ծախսերը, որ կատարում է հասարակությունը՝ օգնելու համար դեպի բարձրադույն ուսումը ձգտող նյութապես կարիքավոր երիտասարդությանը։ Եվ հենց ինքն այն փաստը, որ ավելանալու են հասարակության կրթված անդամները, չի՛ կարող չնպաստել երկրի կուլտուրական մակարդակի բարձրացմանը, նրա տնտեսական և մտավոր առաջադիմությանը։ Իսկ կրկնել շարլոն աղաղակներն ու մեղադրանքնե-

քն այն մասին, թե թոշակառուներից ոմանք անազնվորեն ի չարն են գործադրում իրենց ստացած հասարակական օգնությունը,— այդ նշանակում է մթագնել գործի բուն էությունը, նշանակում է— ո՛չ թե օգնել ցավին կամ շտկել թերությունները, այլ առավել ևս խճճել այն։ Պարոն Պ. Պավլովիչը զարմանալիորեն անհետևողական է, և արդեն իսկ իր «կանոններում» փոխարինում է «տաղանդավորությունը» պարապմունքներում ձեռք բերած «առաջադիմությամբ»։

Նրա նախագծի այլ կետերի շարքում ուշադրության է արժանի այն, որ նա ցանկալի է համարում թոշակներ նշանակելու գործը հանձնել հենց իրեն՝ ուսանողությանը։ Սակայն այս միջոցառումն էլ առանձնապես ցանկալի չէ և կարող է առաջացնել մի շարք անհաճելի փաստեր։ Օրինակ՝ ինչպե՛ս բաշխել կովկասյան թոշակները, բացի հատուկ թոշակներից, որոնք նախապես հատկացված են որոշ ազգության համար։ Այս կամ այն ուսումնական հաստատության մեջ կարող է ավելի բազմամարդ լինել նաև մեկ ուրիշ ազգային խմբակ, և այդ հողի վրա կարող են տեղի ունենալ և տեղի կունենան անցանկալի բախումներ։ Թոշակներ բաշխելու պահին վիրավորված այս կամ այն անձնավորությունը կարող է հարցը փոխադրել ազգային հողի վրա, իսկ մարդիկ, որոնք իսկույն և ամեն րոպե պատրաստ են աղաղակ բարձրացնել «ճնշման» և «իրավունքների ոտնհարման» մասին և այլն,— միշտ էլ կգտնվեն բավական մեծ քանակությամբ։ Էլ մենք չենք խոսում այն բախումների մասին, որոնք բնականաբար ծագելու են այդ առթիվ նույնիսկ մեկ միասնական կորպորացիայի մեջ։

Հասարակական լայն օգնությունը բոլոր նրանց, ովքեր ձգտում են դեպի բարձրագույն ուսումը, բայց նյութական միջոցներ չունեն,— անհրաժեշտ է, խելացի և արդարացի։ Այդ օգնությունը հասցնելու չափանիշներն են հանդիսանում.— թոշակ խնդրողի իսկական կարիքի պարզումը՝ յուրաքանչյուր թեկնածության հրապարակային, բացահայտ և

ծավալուն քննարկումը և հասարակության վերահսկողությունն իր թոշակառուների վերաբերմամբ։

Ահա՛ խնդրի միակ ճիշտ դրվածքը։ Իսկ այն միջոցառումները, որ առաջարկում է Պ. Պավլովիչը, սխալ են արմատապես, անիրականանալի են գործնականում և չեն հասնում իրենց նպատակին։

«Новая Рсчь» № 83,
ապրիլի 13, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Օլդին

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԸ

Հին այն հարցը, որ քանիցս բարձրացվել և քննարկվել է, ինչպես տեղական՝ կովկասյան մամուլում և հասարակական շահագրգռված շրջաններում, այնպես էլ պաշտոնական-զանազան խորհրդակցություններում, — դա Կովկասում բարձրագույն դպրոց ունենալու հարցն է։ Մեր երկրամասի տասն միլիոնանոց բնակչությունը վաղուց արդեն գիտության և լուսավորության բարձրագույն օջախի կարիք է զգում, սակայն հասարակական բոլոր ձեռնարկումներն այդ ուղղությամբ մինչև այժմ ապարդյուն են մնացել՝ չհանդելով այդ կուլտուրական գործի իրականացման։ Վերջին ժամանակներս հետաքրքրությունը դեպի այդ հարցը նորից է կենդանացել, թերթերը նորից սկսել են խոսել ապագա բարձրագույն դպրոցի տիպի և նրա որտեղ գտնվելու մասին։ Մեղթվում էր, թե այդ հարցերը թե՛ մամուլի էջերում և թե՛ հասարակական այլ և այլ հաստատություններում և խորհրդակցություններում այսքան տարի քննարկելուց հետո կարելի էր հանդել որևէ որոշակի եզրակացության։ Սակայն ըստ երևույթին— «տայլը տեղից չի շարժվել», և այդ կենսական նշանակություն ունեցող հարցերի լուծման ուղղությամբ ոչ մի բան չի արված և հարցերը շարունակում են վեճերի և տարաձայնությունների առարկա լինել։ Այս օրերս «Баку» թերթը մի ամբողջ անկետա էր կազմակերպել այդ հարցերի շուրջը և հավաքել էր այն բոլոր անձերի կարծիքները, որոնց նա, ըստ երևույթին, հեղինակավոր անձեր է համարում։

Մի ժամանակ, Վիտտեի[117] մինիստրության օրով, առանձնապես աշխուժացավ հետաքրքրությունը դեպի տեխ-

նիկական բարձրագույն կրթությունը և հիմնվից միքանի պոլիտեխնիկում։ Հենց այն ժամանակ էլ մեզանում սկսեցին եռանդուն կերպով խոսել հատկապես պոլիտեխնիկում հիմնելու մասին, և բարձրագույն դպրոցի այդ տիպն առանձնապես ժողովրդական դարձավ մեզ մոտ։ Սակայն ոգևորությունն անցավ և, մենք կարծում ենք, այժմ կարելի կլիներ ավելի հանգիստ կերպով քննարկել այդ հարցը։ Խնդիրը քննարկելիս՝ նրա լուրջ և բազմակողմանի լուսաբանության համար՝ անհրաժեշտ է հրաժարվել տեղային, ծխական շահերից, «սեփական զանգակատան» քաղաքականությունից, և գործը քննել լայնորեն և զգոն կերպով, բազմագիտ մեր երկրամասի շահերի տեսակետից։ Իսկ այդ՝ միակ ընդունելի տեսակետից՝ մենք համարձակ կերպով կարող ենք պնդել, որ մեր երկրին ամենից առաջ հարկավոր է համալսարան։

Երկրի բնակչության բազմազանությունը, առանձին ժողովուրդների կուլտուրայի մակարդակի տարբեր աստիճանները, նրանց կենցաղը, բարքերը, նրանց աշխարհայացքը, նրանց կյանքի ողջ ձևն ու եղանակը, նրանց պատմությունը, լեզուն, կրոնական պաշտամունքը,— այս ամենը գիտական մշակության և հետազոտության համար այնքան հարուստ մի գանձարան է հանդիսանում, որ այդ գործի համալսարանական դրվածքով միայն կարող են էական նվաճումներ ձեռք բերվել գիտության համար և մեր երկրամասի ու նրա բնակչության մտավոր և նյութական առաջադիմության համար։ Համալսարանական այն կրթությունը, որ մեր երիտասարդությունն ստանում է Ռուսաստանի կենտրոնում, չի տալիս նրան մեր երկրի կարիքների համար անհրաժեշտ գիտությունների այն պաշարը, որ անպայման պետք է ունենալ՝ մեր ծայրամասի բարեկեցության բարձրացման նպատակով արդյունավետ աշխատանք կատարելու համար։ Որքա՞ն խոչընդոտներից մենք խուսափած կլինեինք ցավոտ հարցերը լուծելու ժամանակ, եթե այն մարդիկ, որոնց ձեռքին է գտնվում այդ կարիքների լուծումն ու

բավարարումը,—ծանոթ լինեին բնակչության ոգուն ու կենցաղին, նրա պատմական զարգացմանն ու տրադիցիաներին և Կովկաս չգային որպես մի terra ingognita*, լեցուն ինչ-որ ֆանտաստիկ առասպելներով և անեկդոտներով այդ «կորստաբեր» երկրի մասին։ Իսկ այդ ամենին կարելի է հասնել, հիմնելով կովկասյան համալսարան, որ իրեն ներպատակ կդնի երկրի ուսումնասիրությունը՝ նրա բովանդակ բազմազանությամբ։ Բարձրագույն տեխնիկական դպրոցն ի վիճակի կլիներ բավարարելու երկրի որոշ տեսակի պահանջները, բայց ոչ բնակչության հրամայական և անհետաձգելի կարիքները։ Իսկ բարձրագույն կրթության ապագա այդ օջախի տեղի մասին կարիք էլ չկա վիճելու.— Թիֆլիսը հանդիսանում է երկրամասի իրական կենտրոնը, երկաթուղային հանդուցային կետը և, առհասարակ, նա միշտ դեր կատարող դեր է կատարել մեր ամբողջ երկրամասի կուլտուրական և հասարակական կյանքում։

«Новая Рѣчь» № 89,
ապրիլի 23, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ալգին

*)— Անծանոթ երկիր, հող։

ՀԱՄԱԼՍԱՐԱՆԱԿԱՆ ՆՈՐ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Հեռագիրը հաղորդում է Շվարցի մինիստրության մշակած համալսարանական նոր կանոնադրության հիմնական դրույթները։ Կատարյալ հրաժարում ավտոնոմիայից, 1905 թվականի օգոստոսի 27-ի հրամարտակից, պրոֆեսորների խորհրդի դերի իջեցումն աննշան չափերի, դիտության տաճարի պատերի մեջ քաղաքական հսկողության մուծում «պրիստավների» ձևով և ուսանողական ամեն տեսակ, նույնիսկ զուտ դիտական, նեղ-մասնագիտական կազմակերպությունների կատեգորիկ արգելում։ Դարձյալ համալսարանների և ժողովրդական լուսավորության մինիստրի միջև կանգնում է օկրուգի հոգաբարձուն, դարձյալ ուսանողները վեր են ածվում «առանձին այցելուների»— «մինչ սահմանադրական շրջանի» մեր դպրոցական կյանքի էպոխայի հռչակավոր ֆորմուլը։ Այսպիսով, «նորոգված հասարակարգը», Պետական Դումայի գոյությունը ռուսական հասարակության համար այնպիսի ցավոտ հարցի վերաբերմամբ, որպիսին բարձրագույն դպրոցի բախան է, ոչ մի նոր բան չտվին մեզ, ամենևին չխախտեցին մեր բյուրոկրատիայի դիրքը, այլ, ընդհակառակը, շատ բան, ինչ անկարելի էր հին ռեժիմի ժամանակ, դարձավ ռեալ փաստ, դարձավ մեր կյանքի վառ իրականություն։ Բյուրոկրատական լաբորատորիայի դաղտնարաններում այնքան ժամանակ պատրաստվող՝ «իսկական ռուս»[118] մինիստր Շվարցի գավակը, անկասկած, հանդիսանում է մի քայլ դեպի ետ, դրության փատթարացում նույնիսկ ռուսական դիտության ու հասարակայնության զարգացման պատմության մեջ «հռչակավոր»՝ 1884 թ. համալսարանական կանոնադրության հանդեպ։ Նոր

կանոնադրությունը, անկասկած, հիացմունք ու ցնծություն կառաջացնի աջերի մեջ, սևհարյուրակային բանակում, որովհետև բարձրագույն դպրոցի այն խղճուկ ավտոնոմիան, որ կար մեզ մոտ և մի կերպ քարշ էր տալիս իր գոյությունը վարչական հայեցողության սանձարձակության պայմաններում, այն «կարմիր թաշկինակն» էր, որը գրգռում և զազրելի ցինիզմի ու կատաղի լկտիությունների էր հասցնում պարոնայք Պուրիշկևիչներին Դումայի ամբիոնի վրա։ Այժմ նրանք կարող են տոնել և մի անգամ ևս արտահայտել իրենց հիացմունքն «իսկական ռուս» Շվարցի հանդեպ, և մի անգամ ևս համառուսաստանյան ամբիոնից կհոսի կեղտը երիտասարդության հասցեին, դիտության աշխատավորների հասցեին։

Ինչպես կվերաբերվի Դումայի մեծամասնությունը համալսարանի վրա, դիտության ու մտքի ազատության վրա կատարված այս վոտնձգությանը... Քիչ հույս կա, որ հունիսի 3-ի Դումայի մեծամասնությունը համարձակվի հակազդել այս նոր արշավին լույսի ու դիտության օջախների դեմ, մեր դպրոցները սևհարյուրակայինների կողմից նորից տակնուվրա անելու դեմ։ Ֆինլանդական օրինագծի բախտն ու Հարավ-արևմտյան երկրի զեմստվոյի հարցը բավականաչափ հիմք կարող են ծառայել պեսսիմիստական եզրակացությունների համար։ Պետական Դումայի կենտրոնը— օկտյաբրիստների պարտիան[119] վաղուց արդեն կորցրել է ղեկավարող թելը, վաղուց հրաժարվել է իր իսկ ծրագրից և դարձել «ինչ կբարեհաճեք»-ի[120] պարտիա Պ. Ա. Ստոլիպինի կառավարության հանդեպ։

Իսկ ռուսական դպրոցը, ռուսական դիտությունն ու երիտասարդությունը կանցնեն այս փորձությունից էլ։

«Новая Речь» № 109,
մայիսի 16, 1910 թ.։
Թարգմանությունը՝ Ս. Օլդին

ՈՒՐՎԱԳԻՐԵՐ

ԼՈՒՍԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՏՈՆԸ

Կիրակի, սեպտեմբերի 26-ին, ես ներկա էի մեզ, կոմ-կասցիներիս համար առհասարակ և Ռիֆլիսցիների համար մասնավորապես հազվադեպ մի հանդեսի։ Իր գոյության առաջին տարին տոնում էր մեր երկրամասի միակ բարձրագույն ուսումնական հաստատությունը՝ կանանց բարձրագույն դասընթացները։ Դուրեկան և ուրախալի էր տեսնել հանդիսասրահը լիքը լցված ինտելիգենտ ամբոխը, դուրեկան էր տեսնել պրոֆեսորական ամբիոնը, որ այնպես վաղուց չէինք տեսել, մեր ուսանողուհիների զվարթ դեմքերը, լսարանները, գիտական կաբինետներն ու լաբորատորիաները։ Կուլտո՞ւրայի տոն։ Մեր երկրամասը վաղուց է սպասում բարձրագույն ուսումնական հաստատության, լույսի և գիտության որրանի և օջախի, և մինչև այժմ դեռևս չի հասել դրան։ Կհասնի՞ արդյոք։ Վերջապես սկիզբ կդրվի՞ արդյոք լայնորեն դրված համալսարանական գիտության օգնությամբ մեր հարուստ, բազմազան և բազմացեղ երկրամասը՝ կենցաղի իր յուրահատուկ պայմաններով, կուլտուրայի և աշխարհայացքի իր տարբեր աստիճաններով, բազմակողմանի ուսումնասիրելուն։ Եվ երբ պրոֆ. Բլագովիդովը խոսում էր տեղական հասարակական ուժերի երկարատև ջանքերի մասին, ապարդյուն ակնկալիքների մասին, համալսարանի հարցի հիսունամյա պատմության մասին,— ակամայից հարցեր էին առաջ գալիս՝ ինչո՞ւ, ի՞նչ պատճառով, ի՞նչ նկատառումներով մեր հրաշագեղ Կովկասը զուրկ է համալսարանից։

Եվ ահա մեր առաջին բարձրագույն ուսումնական հաս-

տատության համար մենք պարտական ենք մասնավոր նախաձեռնության։

Բայց չնայած այն լավ ուրախությանը, որ ես զգում էի դասընթացների օրիգինալ, արևելյան ոճով զարդարված շենքում՝ կարիք կա միքանի, ոչ «տոնական», դիտողություններ անելու։ Այդ է ժուռնալիստի պարտականությունն արդեն։ Միշտ մեդալի հակառակ կողմն էլ տեսնել։ Ամենից առաջ տարօրինակ կերպով տհաճ ազդեցություն գործեց հաշվետվության մի ֆրազը, այն է՝ «առաջին ուսումնական տարիները ոչինչ չեն կարող «տալ» դասընթացների հիմնադիրներին»...։

Կնշանակի՝ դասընթացները ոչ միայն մասնավոր, այլև առևտրական ձեռնարկություն է։ Եվ դրանից հետո դիմել հասարակությանը և կոչ անել նյութապես օգնել՝ միքիչ տարօրինակ է։ Անհրաժեշտ է Թիֆլիսի կանանց բարձրագույն դասընթացները հանձնել հասարակական կազմակերպության տնօրինության։ Այլապես այստեղ բախվում են երկու անհաշտելի սկզբունք՝ մասնավոր— ձեռնարկատիրական և հասարակական։ Եվ հիմնադիրների դիվիդենդների վերաբերյալ հաշվետվության մի ֆրազից ներշնչված այս մտքերը փչացրին իմ լավ տրամադրությունը և այն վերականգնել այլևս չկարողացավ պ. Ժուրակովսկին[121] *դավառական թատրոնի իսկական դերասանի շարժուձևով ու շեշտով արտասանած՝ «անհատականությունն ստեղծագործության մեջ» թեմայի մասին իր գունեղ ճառով։*

Համենայն դեպս ես ողջունում եմ երկրամասի առաջին բարձրագույն ուսումնական հաստատությունը և ուրախ եմ կովկասցի կնոջ համար, որ հնարավորություն է ստացել դիտության ազբյուրներին մոտենալու, և, իբրև տղամարդ, նախանձում եմ նրանց համալսարանից զրկված կովկասցու բարի նախանձով։

«Курьер-Копейка» № 143,
սեպտեմբերի 28, 1910 թ.։
Ստորագրությունը՝ S.

ՀԱՄԱԳՈՒՄԱՐՆԵՐԻ ՇՈՒՐՋԸ

Ապրիլ ամիսը հարուստ էր հասարակական խոշոր նշանակություն ունեցող համագումարներով.— գրողների համագումար[122], Պիրոգովյան[123], պոռնկության դեմ պայքարող համագումար[124], կրիմինալիստների համագումարը[125]։ Այդ համագումարների մի մասը բարեհաջող կերպով ավարտեց իր աշխատանքը, մի քանիսն ընդհատվեցին ոստիկանության միջամտության հետևանքով, ինչպես օրինակ, կրիմինալիստների համագումարը Մոսկվայում, իսկ մի մասն էլ տուժեց մասնակի կերպով. այսպես, օրինակ, պիրոգովյանների քննարկումից հանվեցին մի շարք հետաքրքրական զեկուցումներ, իսկ կանանց վաճառքի դեմ պայքարող համագումարի առաջին սեկցիան փակվեց՝ պետական և հասարակական անվտանգության նկատառումներով։

Պատժական այս միջոցառումները որոշ իմաստով միանգամայն օրինական և տրամաբանական էին մեր «կոնստիտուցիոն» բյուրոկրատիայի կողմից։ Այդ զեկուցումները քննարկելիս, աշխատավոր մասսաների տնտեսական բարեկեցությունը բարձրացնելու միջոցառումները քննարկելիս, իբրև պոռնկության զարգացման և բորի, տուբերկուլյոզի կամ սիֆիլիսի նման սարսափելի համաճարակների տարածման դեմ իրական, և ոչ թե «ֆիլանտրոպիկ» պայքար մղելու իսկական եղանակներից մեկի,— չի կարելի խուսափել «քաղաքականությունից», չի կարելի շիսոսել և հերթի չդնել ժողովրդական մասսաների լուսավորության բարձրացման հարցերը, պրոֆեսիոնալ միությունների աղատության, աշխատանքի օրենսդրական պաշտպանության և խոսքի ու մամուլի աղատության հարցերը։ Այս բոլոր հարցերն, ան-

կասկած, ներխուժում են «քաղաքականության» բնագավառը, իսկ դրանցից շատերն իրենց էությամբ քաղաքական կարգի հարցեր են։ Հետևաբար, մեր իշխանությունները՝ համաձայն մեր «կոնստիտուցիայի» յուրատեսակ ոգու,— շատ հետևողական էին, երբ եռանդուն կերպով դիմադրում էին քաղաքականության մուտք գործելուն այդ հասարակական համագումարները։ Բայց «դուրս քշիր բնությունը դռնից, ներս կմտնի պատուհանից»[126]։ «Քաղաքականությունն» այնուամենայնիվ արտահայտվում էր բոլոր համագումարների աշխատանքներում, զեկուցումներում, վիճաբանություններում և բանաձևերում, չնայած որ ամենաաչալուրջ հսկողություն էր սահմանված ինչպես համառուսական այդ ժողովների քաղաքական անմեղության անմիջական վերակացուների, այնպես էլ հենց համագումարներին մասնակցողների կազմից առաջ եկած «կամավորների» կողմից։

Աջակողմյան մամուլը թախծով և տարակուսանքով է նշում այս տխուր փաստը և վշտով է արձանագրում, որ «Պոլիտիկանությունից» այսքան տարի եռանդուն կերպով բուժման ենթարկվելուց հետո էլ ռուս մարդիկ դեռ չեն ապաքինվել։ Բավական է, որ նրանք միատեղ հավաքվեն,— և իսկույն նորից առաջին պլան են մղվում «անիծյալ հարցերը»[127], նորից հնչում են «միտինգային ճառերը»։ Սահմանադրականները, իհարկե, չեն հասկանա այն պարզ ճշմարտությունը, որ անհնարին է հասարակական որևէ նախաձեռնություն և ինքնագործունեություն, անիրագործելի է հանրային որևէ շինարարություն՝ առանց դրան նպաստող համապատասխան պայմանների, առանց քաղաքացիական-նության և կուլտուր-իրավական կյանքի ամուր հիմքեր սահմանելու։ Չի կարելի տան կառուցումը կտուրից սկսել, չի կարելի ծառի բուժումը ճյուղերից սկսել։

Այսպես թե այնպես, համագումարները ռուս ժողովրդի հասարակական ինքնագիտակցության առջև նորից ամբողջ սլությամբ դրին ցավոտ հարցերը, որքան որ կարող էին և որքան կարողացան, նշեցին նրանց լուծման ամենամոտիկ ճանապարհը։

Շնորհակալ ենք նրանցից և այդքանի համար։

«Новая Речь» № 96,
մայիսի 1, 1910 թ.։
Ստորագրությունը՝ Ս. Ոլգին

ՈՒՐՎԱԳԻՐԵՐ

«ԷՍԹԵՏԻԿԱՅԻ ՄԱՍԻՆ»

Արևմտա-եվրոպական մունիցիպալիտետներն ամեն միջոցի դիմում են քաղաքները զարդարելու համար, նույնիսկ հատուկ պրեմիաներ են սահմանում, որոնք տրվում են գեղեցիկ, շքեղ շենքերի տերերին։ Եվ այդ կատարելապես ճիշտ է։ Անհրաժեշտ է զարդարել քաղաքը, անհրաժեշտ է մասնավոր և հասարակական այնպիսի շենքեր կառուցել, որոնք կարողանան քաղաքային բնակավայրին գեղեցիկ տեսք տալ, բնակչության մեջ զարգացնեն էսթետիկական ճաշակ։ Արտասահմանում հասարակական ինքնավարություններին այդ գործում օգնության գալիս են ամեն տեսակ «վայրը զարդարելու ընկերություններ»։ Իսկ մեզանում մասնավոր նախաձեռնության մասին ստիպված ենք երազել հեռավոր ապագայում։ Մանավանդ որ սենատի վերջին պարզաբանումով նման մասնավոր փորձերը, որոնք քաղաքային տնտեսության բնագավառն են խուժում, դադարեցված են, նկատի առնելով «անցանկալի հետևանքները»։ Այդպիսի հանգամանքներում քաղաքային ինքնավարությունների դերն առանձնապես առաջին պլան է մղվում, որովհետև նույնիսկ օրենքը նրանց պարտավորեցնում է հոգ տանել քաղաքները զարդարելու մասին։

Մեզանում այդ ուղղությամբ ի՞նչ է արել քաղաքային ինքնավարությունը։ Ոչինչ։ Թեպետ այդ խնդիրն իրականացնելու համար մենք ավելի շատ միջոցներ ունենք, քան մասնավոր անձերը։ Թիֆլիսը երկրի ամենախոշոր քաղաքներից մեկն է (8-րդը), երկրամասի կենտրոնը, իսկ իր հասարա-

կական և մասնավոր շենքերի գեղեցկությամբ նա բնավ չի կարող պարծենալ։

Իբրև վարչության ամենաինտելիգենտ ղեկավարների ճաշակի լիակատար բացակայության նմուշ ցույց տանք Մուխրանի կամուրջը։ Դժվար է պատկերացնել մի ավելի կոպիտ, տգեղ կառուցվածք, քան այդ կամուրջը, մանավանդ եթե վրան նայենք Պեսկիից։ Հապա վերցրեք աֆիշների սյուները։ Գուցե նրանք էժան են, ամուր և գործնական, բայց հո այլանդակության ու անճաշակության գագաթնակետն են։ Թվում է թե այնքան հեշտ պետք է լիներ մի որևէ շքեղ բան մտածելը։ Իսկ տրամվայի սյունե՞րը, որոնք շտապ կերպով դրվածի և չավարտած դրությամբ թողնվածի տպավորություն են գործում։

Իսկ քաղաքային հանրային գրադարա՞նը։ Առևտրական ոստիկանության կիոսկնե՞րը։ Վերայի վայրէջքի փայտաշեն ցանկապա՞տը, որ ծածկում է Քուռի, սարերի և քաղաքի ձախ կողմի հիանալի տեսարանը։ Իսկ ֆունիկուլյորի կայարանի այդ զարմանալի շենքե՞րը։ Դրանք ի՞նչ ոճով են կառուցված։ Չարժե հարևանցիորեն խոսել մեր ուպրավայի թույլ տված ուրիշ «գեղարվեստական այլանդակությունների» մասին։ Նրանց արժե առանձին հոդված նվիրել։ Եվ մենք կաշխատենք մոտիկ ապագայում անել այդ։

Իսկ չէ՞ որ շինարարական բաժանմունքի գլուխ կանգնած է Թիֆլիսի երբևիցե ունեցած վարչության անդամներից ամենապերճախոսը և ամենաշատախոսը, մի մարդ, որն իրեն համարում է արվեստի աչքի ընկնող արտադրանքների մեկնաբան և նրանց մասին հասարակական դասախոսություններ է կարդում, և մեր վերը թված բոլոր «գեղեցկություններն» արդյոք լավագույն քննություն չե՞ն մեր պստլիկ և տնաբույս Վիլհելմ 2-րդի՝ Ա. Ի. Խատիսովի[128] էսթետիկական ճաշակի։

«Курьер-Копейка» № 109,
օգոստոսի 25, 1910 թ.
Ստորագրությունը՝ Տ.

ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

1) Սուրեն Սպանդարյանի «Աղնիվ» զայրույթ» («Благородное негодование») հոդվածը «Տ» ստորագրությամբ լույս է տեսել «Бакинский Рабочий» բոլշևիկյան թերթի 1908 թվի № 7—8-ում։ «Бакинский Рабочий»-ն («Բարվի Բանվոր») ՌՍԴԲՊ Բարվի կոմիտեի օրգանն էր։ Թերթը առաջին անգամ լույս է տեսել 1906 թվին անլեգալ։ 1908 թվի սեպտեմբերից այն կրկին անգամ սկսեց հրատարակվել ընկեր Ստալինի ղեկավարությամբ։ Սակայն նույն թվականի հոկտեմբերի 31-ին Բարվի բաղարապետի կարգադրությամբ թերթն արգելվեց։ «Бакинский Рабочий»-ն վերստին սկսեց հրատարակվել 1917 թվի ապրիլից մինչև Բարվի Կոմունայի անկումը՝ 1918 թվի օգոստոսը։ Ադրբեջանում 1920 թվին սովետական իշխանություն հաստատվելուց հետո մինչև օրս թերթը շարունակում է լույս տեսնել, որպես Ադրբեջանի կոմունիստական (բոլշևիկների) պարտիայի կենտրոնական կոմիտեի և Բարվի կոմիտեի օրգան։—9

2) Սուրեն Սպանդարյանը նկատի ունի «Бакинский Рабочий» №№ 3—4-ում և 5—6-ում լույս տեսած Ս. Ն—շինի (Ս. Նյուշինի) «Կոմս Տոլստոյի և նրա հոբելյանի մասին» վերնագրով հոդվածի առթիվ Բարվի դաղետական մամուլի՝ «Баку» և «Бакинский Листок»-ի հարձակումները։ «Бакинский Листок»-ի 1908 թ. № 7-ի առաջնորդողը, որ ուղղված էր «Бакинский Рабочий»-ի դեմ, պարունակում էր բուրժուական մամուլին հատուկ հերյուրանքները։—9

3) 1908 թ. օգոստոսի 28-ին տոնվեց Լ. Ն. Տոլստոյի ծննդյան 80-ամյա հոբելյանը։—9

4) Պետրուշևսկի Դ. Մ. (ծնվ. 1863 թ.)— պատմաբան, ակադեմիկոս։ Մոսկվայի համալսարանի պրոֆեսոր։ Ունի ուսումնասիրություն Հոմերոսի և նրա ժամանակաշրջանի մասին։—11

5) Լ. Ն. Տոլստոյը մահացավ 1910 թվի նոյեմբերի 7-ին։—12

6) Լ. Ն. Տոլստոյի «Հարություն» («Воскресение») վեպի գլխավոր հերոս Նեխլյուդովի դրական դատը տեղի ունեցավ Թիֆլիսի վրացական թատրոնում 1911 թ. հունվարի 8-ին։—12

7) «Листок-Копейка»— Թիֆլիսում հրատարակվող օրաթերթ։ Հիմնադրվել է Սուրեն Սպանդարյանի և վրացական հասարակական գործիչ—ժուռնալիստ Լ. Զիրիանու ջանքերով։ Լրագրի առաջին համարը լույս է

տեսել 1910 թ. դեկտեմբերի 24-ին։ 1911 թվի ապրիլի 10-ին Թիֆլիսի գեներալ նահանգապետի կարգադրությամբ թերթը արգելվեց։ Սակայն մի քանի օր հետո այն լույս ընծայվեց «Трудовая Копейка» *վերնագրով։* «Трудовая Копейка»-*ն հրատարակվեց մինչև 1911 թվի ապրիլի 24-ը, ընդամենը 6 համար, որից հետո նույնպես արգելվեց, իսկ խմբագիրը ձերբակալվեց։* «Листок Копейка»-*ում և* «Трудовая Копейка»-*ում Սուրեն Սպանդարյանը գրել է «Ս. Օլգին», «Իզգոյ» ստորագրություններով և անստորագիր բազմաթիվ առաջնորդողներ ու հոդվածներ։*—13

8) Իլիոդոր Ս. Տ.— *Արեգա, կուսակրոն քահանա, 1905—1906 թ. թ. հայտնի դարձավ իր սև հարյուրակային, թթու շովինիստական, ջարդարարական քարոզներով։ Այդ կերպ նա համախմբում էր բոլոր մութ ուժերին և կազմակերպում ջարդեր, հալածում ռևոլուցիոներներին։*—15

9) Վոստորգով Ի. Ի.— *Ավագ քահանա, սև-հարյուրակային գործիչ։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից հետո գնդակահարված է, որպես ակտիվ կոնտրռևոլուցիոներ, ժողովրդի թշնամի։*—15

10) Հերմոգեն Գ. Ե.— *Եպիսկոպոս, սև-հարյուրակային գործիչ, ամեն մի առաջադիմական քայլի կատաղի թշնամի։ Հոկտեմբերյան Սոցիալիստական Մեծ ռևոլուցիայից հետո Տորոլսկ քաղաքում ղեկավարում էր կոնտրռևոլուցիոն սպիտակ-գվարդիական կազմակերպությունը և փորձում էր կազմակերպել Նիկոլայ 2-րդի փախուստն արտասահման։ Գնդակահարված է սովետական իշխանության կողմից 1918 թվին որպես կոնտրռևոլուցիոներ, ժողովրդի թշնամի։*—15

11) «Ռուս ժողովրդի Միություն» («Союз Русского Народа») — *սև-հարյուրակային-ջարդարարական կազմակերպություն, որ ստեղծված էր ցարական կառավարության կողմից 1905—1907 թ. թ. ռուսական ռևոլուցիայի հետ հաշվեհարդար տեսնելու նպատակով։ Միության հիմնական ծրագիրն էր՝ պահպանել ցարական միապետությունը։ Այդ կազմակերպության մեջ աչքի ընկնող դեր էին կատարում ռեակցիոն կալվածատերերը, վաճառականները, տերտերները և բոսյակներից կիսաքրեական տարրերը։ Ժողովուրդն այդ միությունը կնքեց «Սև հարյուրակային» անունով։ «Սև հարյուրակայինները ոստիկանության աջակցությամբ բացահայտորեն ծեծում ու սպանում էին առաջավոր բանվորներին, ինտելիգենցիայից, ուսանողներից ելած ռևոլուցիոներներին, հրդեհում և գնդակոծում էին քաղաքացիների միտինգներն ու ժողովները» («Համ. Կ(բ)Պ պատմություն։ Համառոտ դասընթաց», էջ 75)։ Միությունն իր գործունեության մեջ միապետական կառավարության ապարատի և բոլոր մոնարխիստական կազմակերպությունների կողմից աջակցություն էր ստանում։ 1906 թ. գարնանը միությունը ձուլվեց մոնարխիստական կազմակերպությունների հետ և մկրտվեց «Ռուս մարդկանց միություն»* («Союз русских людей») *անունով։*—15

12) Դուբրովին Ա. Ի.— բժիշկ, թունդ մոնարխիստ, սև հարյուրակային գործիչ, «Ռուս. ժողովրդի միության» հիմնադիրներից ու հրեական ջարդերի կազմակերպիչներից մեկը։—15

13) Պուրիշկևիչ Վ. Մ.— Բեսարաբիայի խոշոր հողատեր, սև-հարյուրակային, մոնարխիստ. «Ռուս ժողովրդի միության» հիմնադիր 2-րդ, 3-րդ և 4-րդ Պետական դումաների անդամ, խոշոր աղնվականների շահերի արտահայտիչ, մոլի, ջարդարար Հայտնի է իր ծայրահեղ շովինիստական, լկտի ելույթներով, որոնք ավարտվում էին հաճախ սկանդալներով։ Պուրիշկևիչին անվանում էին «Բեսարաբիայի պետական խեղդաուռկ»—15

14) Սկվորցով Վ. Մ.— Սևհարյուրակային գործիչ «Миссионерское обозрение» խավարամիտ հանդեսի խմբագիրը։ 1906 թվից հրատարակում էր «Колокол» եկեղեցական-բաղաքական օրաթերթը։—15

15) Այվազով.—Սև-հարյուրակային, ռեակցիոն հրապարակախոս։—15

16) Կարաուլով Վ. Ա. (1854—1910)— կապետ, նախկին նաչոդնիկ, 3-րդ պետական Դումայի անդամ։—15

17) Ս. Սպանդարյանը նկատի ունի պրեմիեր-մինիստր Պ. Ա. Ստոլիպինի պատասխան ճառը Պետական Դումայում 1910 թ. մարտի 31-ին Պետական Դումայի 32 դեպուտատների հարցապնդման առթիվ։—16

18) «Новая Речь» օրաթերթ. լույս է տեսել Թիֆլիսում 1900 թ. նոյեմբերի 5-ից մինչև 1910 թվը, որից հետո վերանվանվել է «Закавказская Речь»-ի։ Ս. Սպանդարյանը Բարվից Թիֆլիս արտաբնակվելուց հետո 1910 թ. ապրիլից մինչև մայիս ամիսը թղթակցում է «Новая Речь»-ին, օգտագործելով լեգալ մամուլի էջերը բոլշևիկյան պրոպագանդայի համար։ Սակայն մեկ ամսից հետո նա ընդհատվում է թերթի խմբագիր Պ. Դուտուայի հետ և այլ թերթերի էջերից մերկացնող բնութագրության ենթարկում նրան։—16

19) Ս. Սպանդարյանը նկատի ունի Վ. Գ. Բելինսկուն (1811—1848)։ Գ. Վ. Պլեխանովն իր «Комедия ошибок» հոդվածում հետևյալ կերպ է բերում Բելինսկու վերոհիշյալ խոսքերը.— «Я жид по натуре и за одним столом с филистимлянами сидеть не могу»,— писал в одном из своих писем В. Г. Белинский». (Տես՝ Պլեխանով, «Собр. Сочин.» հատ. XIX, էջ 60)։

Այստեղ բերված է մի հատված միայն Ս. Սպանդարյանի «Դարձյալ նույն հարցի մասին» հոդվածից, որ գրված է Թիֆլիսի բաղաքային վարչության կոլեգիայի անդամի համար առաջադրված Ի. Ս. Ջաբադարիի թեկնածության առթիվ։ Ս. Սպանդարյանն այս հոդվածով պահանջում է նախկին նարոդնիկ, իրավաբան Ջաբադարիից հանդես գալ և պարզել իր քաղաքական ֆիզիոնոմիան, իր գործունեության ծրագիրը և պլատֆորմը։

և ոչ թե լուության «հպարտ տեսք» պահպանել, մանավանդ որ նրա թեկնածության օգտին աղմուկ ու աղաղակ բարձրացրին նացիոնալիստական մամուլի օրգանները։ Սույն հոդվածի լրիվ տեքստը հրատարակված է «Ս. Սպանդարյան, հոդվածներ, նամակներ, փաստաթղթեր» ժողովածվում, հայերեն, էջ 252—254։—17

20) Մոսկվայի համալսարանը հիմնադրվել է 1755 թվի հունվարի 12-ին «Տատյանայի օրը» («Татьянин день»), այդ պատճառով էլ այդ օրը ուսանողական տոն է համարվել Ռուսաստանում։—18

21) Ելիզավետա Պետրովնա (1709—1761),— Պետրոս առաջինի աղջիկը, 1741—1762 թ. թ. Ռուսաստանի կայսրուհին։—18

